



Չ. ՏԼԻԻ


ԲԱՆԴԱԿ

ՊԼՇՏՕՆԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ԱՆՅՐ ԼԹՈՒՈՅ ՄԻՈՅ ԷԶՐԻԼԾԻ

Մ ար Կ


2023

Ս. ԷԶՐԻԼԾԻ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер**



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐՔԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՄԱՅՈՒՄԸ 850-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԵՒ ՊԱՇՏՈՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՅՆԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՅՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զարթի՛ք, որդի՛ք լուսոյ. ի յօրհնութիւն Հօրն լուսոյ»
(Ժամագիրք),

«Աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ
զպատուիրանս Աստուծոյ ի լսելիս ձեռ»
(Թուղթ ընդհանրական):

*Երախտիքի նուիրական զգացումով այս տարի ոգեկոչում ենք Հա-
յոց առաքելապատիւ Հայրապետ Սուրբ Ներսէս Շնորհալու վախճանման
850-ամեակը:*

*Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետը հայոց նշանաւոր ու մեծագործ
կաթողիկոսներից է, փայլուն աստուածաբան, հզօր քարոզիչ, բանաս-
տեղծ եւ երգահան, պատմիչ ու մանկավարժ: Ներսէս Դ. Հայրապետը,*

որպէս քաջ հովիւ, որ «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ. 11), եղաւ առաքինազարդ առաջնորդ, լուսապայծառ փարոս մեր ժողովրդի համար եւ Տիրոջ անխոնջ մշակ: Նա իր բազմաբեղուն առաքելութիւնը ծաւալեց Հռոմկլայում հաստատուած Հայրապետական Աթոռից: Երանաշնորհ Հովուապետը կաթողիկոսական նստավայրի տարագրութեան պայմաններում, ձգտելով միասնական ու ամբողջ պահել իր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կեանքը, հայեացքը միշտ դէպի հայրենիք, օրհնաբանում էր Քրիստոսահիմն հայոց հոգեւոր կենտրոնի՝ Սուրբ Էջմիածնի բացառիկ կարեւորութիւնն ու նշանակութիւնը. «Հայաստանեայց Եկեղեցի, յորում կաթեաց շողն երկնային, ... լոյսն անստուեր ծաւալեցաւ, եւ ճառագայթն անճառելի»:

Սուրբ Ներսէս Շնորհալու ողջ կեանքն ու գործունէութիւնը Աստծոյ փառաբանութիւն էր եւ մարդկանց սրտերը Աստծուն մերձեցնելու տքնաջան առաքելութիւն: Նա անյոգնաբեկ քարոզչութեամբ Տիրոջ պատուիրաններն էր ուսուցանում հաւատացելոց՝ «զարթիք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ», «աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ զպատուիրանս Աստուծոյ ի լսելիս ձեր»։ Մեծանուն Հայրապետը հովուեց հայոց հօտը դժուարին ու աղէտալի ժամանակներում՝ մեծ ցաւ ու տրտմութիւն կրելով մեր ժողովրդի տարագրուած ու գաղթական դարձած բազում զաւակների համար: Նա հայրաբար խրատական իր ազդու խօսքն ուղղում էր բոլորին՝ իշխաններից մինչեւ զինուոր ու շինական, եպիսկոպոսներից մինչեւ քահանայ, սարկաւազ ու դպիր՝ հաւատով զօրացնելով եւ գիտելիքներով սնուցելով ամենքին:

Սուրբ Ներսէս Շնորհալու հոգեթով խօսքը, նշանակալի աշխատութիւնները, տաղերն ու գանձերը՝ իւրայատուկ մտքի խոյանքով ու վայելուչ ոճով, ուղղուած են հայոց ազգային-քրիստոնէական ինքնութեան պահպանմանը, հոգեւոր եւ մշակութային կեանքի բարձրացմանն ու բիւրեղացմանը: Երանաշնորհ Հայրապետի բեղուն գրչի արգասիքները բարեզարդեցին մեր Եկեղեցու ծիսակարգերը, արթուն պահեցին մեր ժողովրդի քրիստոնէական հոգին ու միտքը եւ լուսաւորեցին նրա քարքարոտ ուղին դէպի հոգեւոր եւ ազգային զարթոնքի նոր հորիզոններ:

Սուրբ Ներսէս Շնորհալին մեծ համբաւ ու ճանաչում է ունեցել նաեւ միջազգային ու միջեկեղեցական ասպարէզում: Յունաց, ասորւոց, լատինաց քրիստոնեայ աշխարհում հոգեւորականներ եւ հաւատացեալներ

տպաւորուել ու ոգեշնչուել են նրա առաքինի վարքից եւ գիտական մեծութիւնից: Մշտապէս ապաւինելով Աստծոյ ողորմածութեանը՝ նա յուսառատ ջանքեր գործադրեց՝ ի խնդիր Եկեղեցիների սիրով գործակցութեան: Հայոց երանեալ Հայրապետը քրիստոնէական Եկեղեցիների միջեւ ծառացած դարաւոր բաժանումը ջանաց աւետարանական ոգով փարատել, եղաւ ջատագովը քրիստոնեայ աշխարհի միասնականութեան՝ Հայ Եկեղեցու դիրքորոշումը բնորոշելով «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» բանաձեւով:

Սիրելիներ, հայազգի մեծագործ զաւակների կեանքի ու գործոց պայծառ օրինակները լուսաւոր ուղենիշ են սերունդների համար: Հայոց տաղանդաշատ ու հռչակաւոր անձանց յիշատակի նորոգումով, որպիսին է Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետը, այլեւ նրանց գօտեպնդող յորդորներով, խրատներով ու խրախուսանքով ուժ է առել մեր ժողովուրդը՝ դիմակայելու փորձութիւններին, ապրելու, մաքառելու եւ բարձրացնելու իր կեանքը առաջադիմութեան եւ լուսաւոր գալիքի կերտման ճանապարհին: Շնորհալի Հայրապետը իր վառ օրինակով այսօր էլ, «աղաղակելով որպէս դէտ ի բարձր գիտանոցէ զպատուիրանս Աստուծոյ», ոգեշնչում է հաւատացելոց՝ ըստ առաքելական պատուէրի. «Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն, զբանն ողջմտութեան» (Տիտ. Բ. 7–8):

Հայրապետական այսու Կոնդակով հրաւէր ենք ուղղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու թեմական եւ ազգային կառույցներին, գիտական ու կրթական հաստատութիւններին, բարեսիրական, հայրենակցական կազմակերպութիւններին եւ համայն մեր ժողովրդին՝ գիտաժողովներով, հրատարակութիւններով ու հանդիսութիւններով նշանաւորել Սուրբ Ներսէս Շնորհալու անմար յիշատակը, վերարժեւորել ազգային եւ համաեկեղեցական անդաստանում միշտ արդիական նրա աւանդը, մեծարել քրիստոնէական հաւատքի ականաւոր ուսուցչին եւ ազգային-հոգեւոր մեր կեանքը նորոգողին:

Տիրոջ Իշման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք, որ Բարերարն Աստուած, Սուրբ Ներսէս Շնորհալի Հայոց Հայրապետի բարեխօսութեամբ, իր ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի եւ հաւատով, յոյսով ու սիրով զօրացնի համայն մեր ժողովրդին՝ դիմագրաւելու մեր կեանքը յուզող դժուարութիւնները եւ իրականացնելու լուսաւոր գալիքի համազգա-


յին իղձերը: Թող Տէրը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի մեր հայրենիքին եւ անսասան ու պայծառ պահի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին այսօր եւ միշտ. ամէն:


Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս յ3-ն մարտի
յամի Տեառն 2023 եւ ի թովն հայոց ՌՆՀԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1211





ՎԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ԲԵՐՁՈՐԻ (ԼԱՂԻՆԻ) ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԳԵԼԱՓԱԿԱՆ
100-ՐԴ ՕՐՈՒՆՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Խորը ցաւով ենք արձանագրում, որ արդէն 100-րդ օրն է, ինչ Ադրբեջանի իշխանութիւնները, հայատեաց քաղաքականութեան սաստկացող դրսեւորումներով, արգելափակուած են պահում Արցախը Հայաստանի հետ կապող Բերձորի (Լաչինի) միջանցքը:

Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետութեան հայ բնակչութեան նկատմամբ պարբերաբար իրականացուող ֆիզիկական ու հոգեբանական ճնշումները, բռնութիւններն ու ահաբեկչական գործողութիւնները առաւել խորացնում են հումանիտար աղէտալի իրավիճակը: Հակառակ Արցախում տեղակայուած խաղաղապահ անձնակազմի ներդրած ջանքերի՝ ադրբեջանական իշխանութիւնների յանցաւոր գործողութիւնների հետեւանքով ոտնահարւում են մարդկանց՝ երեխաների, կանանց եւ ծերերի կեանքի, բուժում ստանալու, տեղաշարժի եւ հիմնարար միւս իրաւունքները:

Բարձր ենք գնահատում ՄԱԿ-ի Միջազգային արդարադատութեան դատարանի որոշումը Ադրբեջանի կողմից Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակումը վերացնելու վերաբերեալ: Ողջունում ենք Եւրո-խորհրդարանի վեհաժողովի կոչը, որով Ադրբեջանի իշխանութիւններին յորդորւում է կեանքի կոչել ՄԱԿ-ի Միջազգային արդարադատութեան դատարանի որոշումը:

Տարակուսանք ենք արտայայտում, որ հակառակ միջազգային հանրութեան, վերջինիս իրաւասու եւ ազդեցիկ կառույցների կողմից ճանապարհը բացելու վերաբերեալ կտրական պահանջներին՝ առ այսօր արգելափակւում շարունակւում է:

Յորդորում ենք ՄԱԿ-ի, Եւրոխորհրդարանի եւ Եւրոմիութեան պատկան կառույցներին, պետութիւնների ղեկավարներին ու կրօնական առաջնորդներին հետեւողական ջանքերով հասնել Ադրբեջանի կողմից

Միջազգային դատարանի վճռի կատարմանը, ցեղասպանական գործողությունների դատապարտմանը եւ Արցախի բնակչության անվտանգ ու բնականոն կեանքի ապահովմանը:

Ադրբեջանի կողմից Միջազգային դատարանի որոշման հանդէպ բացայայտ անյարգալից նման մօտեցման հանդուրժումը սաստկացնելու է հումանիտար ճգնաժամը, նոր վտանգներ է ստեղծելու Արցախի աւելի քան 120 000 բնակչության կեանքի համար, ստեղծելու է միջազգային դատական ատեանների վճիռները կոպտօրէն շրջանցելու աններելի նախադէպ, միաժամանակ խորը յուսախաբուծիւն առաջացնելով միջազգային արդարադատութեան նկատմամբ:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, առաջնահերթութիւն ունենալով մարդկային կեանքերի փրկութիւնն ու անվտանգութիւնը, հետեւողականօրէն պաշտպանելու է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրագործումը՝ անկախութիւն յանուն փրկութեան ու անվտանգութեան սկզբունքով:



ԳԵՐԱԳՈՅՆ ՎՈԳԵՒՈՐ ԽՈՐՎՐԴԻ ԺՈՂՈՎ

Փետրուարի 28-ից մարտի 3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, տեղի ունեցաւ Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովը: Ժողովի նիստերն ատենապետեց Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը:

Հայաստանում եւ Արցախում 44-օրեայ պատերազմի հետեւանքով ստեղծուած կացութեան եւ առկայ մարտահրաւէրների մասին զեկոյց ներկայացրեց ԳՀՆ անդամ, ի. գ. դ. Գեւորգ Դանիէլեանը: Զեկուցողը, հանգամանօրէն ներկայացնելով Հայաստանում եւ Արցախում ստեղծուած կացութիւնը, անդրադարձ կատարեց երկրի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներին, մասնաւորաբար անվտանգային մարտահրաւէրներին:

Անդրադառնալով Արցախի հիմնախնդրին՝ ԳՀՆ-ն արձանագրեց, որ Արցախի ժողովրդի անվտանգութեան երաշխիքն Արցախի անկախութեան ճանաչումն է՝ ելակէտ ունենալով ազգերի ինքնորոշման հիմնարար սկզբունքը: Այս առնչութեամբ կարեւորուեց համազգային համընդհանուր ջանքերի միաւորումը, միջազգային հանրութեան ամենալայն շրջանակների աջակցութեան ապահովումը եւ մասնաւորաբար այդ ուղղութեամբ Եկեղեցու կողմից իրականացուող աշխատանքների առաւել ընդլայնումը:

Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը ժողովականներին տեղեկութիւններ փոխանցեց Մայր Տաճարի հիմնանորոգութեան եւ ամրակայման աշխատանքների վերաբերեալ: Ծանուցուեց, որ բարեյաջող ընթացքի մէջ են Մայր Տաճարի ներքին յարդարման, որմնանկարների վերականգման, օդափոխութեան համակարգի տեղադրման եւ արտաքին բարեկարգման աշխատանքները, որոնց աւարտը նախատեսուած է սոյն թուականի սեպտեմբեր ամսին:

Ողջունելով կատարուած աշխատանքները՝ ԳՀՆ-ը գոհունակութեամբ արձանագրեց, որ տեւական դադարից յետոյ Մայր Տաճարն իր դռները կբացի յուրախութիւն եւ ի մխիթարութիւն բարեպաշտ ժողովրդի:

Մայր Տաճարի վերածման, Միւռնորհնութեան, եպիսկոպոսաց ձեռնադրութեան եւ յարակից միջոցառումների կազմակերպման վերաբերեալ զեկոյցով հանդէս եկաւ Մայր Աթոռի դիւանապետ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը: Սրբազան Հայրը ժողովականներին ներկայացրեց, որ արարողութիւններն ու միջոցառումները յաւուր պատշաճի կազմակերպելու համար ձեւաւորուել են յանձնախմբեր, որոնք կհամակարգեն ծիսական, արարողակարգային, հրատարակչական, քարոզչական եւ տեղեկատուական ոլորտների աշխատանքները:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գործնականութեամբ ընդունեց ներկայացուած տեղեկութիւնը եւ ծրագրեց Մայր Տաճարի վերածման ու Միւռնորհնութեան արարողութիւնները եւ յարակից միջոցառումները կազմակերպել ս. թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատուածում, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը՝ հոկտեմբերի 8-ին:

Մայր Աթոռի Արտաքին յարաբերութիւնների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը ժողովականներին ներկայացրեց Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցին նուիրուած տօնակատարութիւնների շրջանակներում նախատեսուած հոգեւոր, կրթական, մշակութային միջոցառումների ծրագիրը: Նշուեց նաեւ, որ առաջիկայ կիրակի՝ մարտի 5-ին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիներում կընթերցուի Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի մահուան 850-րդ տարելիցին նուիրուած Հայրապետական Կոնդակը:

Նաթան Սրբազանը տեղեկացրեց, որ ի նշանաւորումն Երանաշնորհ Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցի՝ ս. թ. դեկտեմբերին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին Վատիկանում կկազմակերպեն համատեղ միջոցառումներ: Սրբազան Հայրը նշեց նաեւ, որ Սուրբ Ներսէս Շնորհալու յիշատակի օրը ՅՈՒՆԵՍԿՕ-ն եւս ներառել է յատուկ նշող տօների շարքում:

Ժողովականները ծանօթացան նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2022 թուականի գործունէութեան տեղեկագրին: Արձանագրուեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականների ընդհանուր թիւը 721 է՝ 49 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 72 կուսակրօն քահանայ (ծայրագոյն վարդապետ, վարդապետ եւ աբեղայ), 504 քահանայ, 96 սարկաւազ: Անցնող տարում իրականացուել են տարբեր հոգեւոր-քարոզչական, կրթական, մշակութային ծրագրեր՝ ՀՀ Զինուած ուժերում,



քրէականատարողական հիմնարկներում, կրթական ու մշակութային հաստատութիւններում եւ համայնքներում:

Կարեւորութեամբ անդրադարձ կատարուեց 2022 թուականի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրականացրած ընկերային աջակցութեան եւ օժանդակութեան ծրագրերին: Յիշեալ ծրագրերն ուղղուած են եղել ի նպաստ զոհուած եւ վիրաւոր զինուորների ընտանիքների, պատերազմի հետեւանքով Արցախից եւ սահմանամերձ բնակավայրերից տեղահանուած ու սոցիալապէս ծանր կացութեան մէջ յայտնուած հայորդիների:

Քառօրեայ ժողովի ընթացքում քննարկուեցին նաեւ Եկեղեցու կանոնական ու հովուական կեանքին, կարգապահական ու իրաւական խնդիրներին, կրթական ծրագրերին եւ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը վերաբերող հարցեր:

Ժողովն ամփոփուեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեան եւ գնահատանքի խօսքով:



ՍԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐՇ. Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ
ՍԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
2022 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԴՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(Փետրվար 28—մարտ 3, 2023 թ.)

Վեհափա՛ռ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, ԳՉԽ պատվար-
ժան անդամներ.

Այսու Ձեր ուշադրությանն է ներկայացվում Մայր Աթոռ Սուրբ Էջ-
միածնի 2022 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը, որը պատրաստ-
ված է Մայր Աթոռի բաժինների, թեմերի, հայրապետական պատվիրա-
կությունների տրամադրած հաշվետվությունների հիման վրա:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց
Կաթողիկոսն ունեցել է 45-ից ավելի պաշտոնական հանդիպումներ եկե-
ղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազ-
գային, հասարակական եւ մշակութային շրջանակների ներկայացուցիչ-
ների հետ: Մասնավորաբար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ապրիլի 6-ին
հանդիպում է ունեցել Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա
Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակության, մայիսի 20-ին՝ Լիտվա-
յի Հանրապետության նախագահ Գիտանաս Նաուսեդայի եւ հոկտեմբե-
րի 11-ին՝ Արեւելքի Ասորի եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Մար Ավա
Գ. Ռոյելի եւ նրա գլխավորած պատվիրակության հետ:

Այցելությունների շրջանակում նորին Սրբությունը փետրվարի 1-ին
այցելել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ հանդիպելու Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի եկեղեցական վարչական կառույցների անդամների

հետ, մարտի 13-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր՝ մասնակցելու ՀՀ նորընտիր նախագահ տիրար Վահագն Խաչատուրյանի երդմնակալության արարողությանը, նույնների 5-ին՝ Վայոց ձորի Զերմուկ քաղաք՝ հայրապետական օրհնությունը բաշխելու եւ գոտեպնդելու սեպտեմբեր 13–14-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմից տուժած Զերմուկ քաղաքի բնակիչներին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2022 թ. հրապարակվել է հայրապետական 38 կոնդակ, որոնցից 5-ը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 6-ը՝ «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ», 27-ը՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշաններով պարգևատրելու եւ 1-ը՝ Բալկանյան երկրների Հայրապետական պատվիրակության հաստատման առիթով:

Շնորհվել է հայրապետական 41 օրհնության գիրք: Խոսքեր եւ ուղերձներ են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք միջոցառումների կապակցությամբ:

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆՆԵՐ

Նորին Սրբությունը պարբերաբար հաղորդակցության մեջ է եղել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ՝ քննարկելով սեպտեմբերյան պատերազմի հետեւանքով առաջացած ազգային կյանքը հուզող տարբեր հարցեր:

Նախընթաց տարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերշ. Տ. Մուշեղ եպս. Բաբայանը եւ Արցախի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը մեկնել են Լիբանան՝ մասնակցելու Անթիլիասի մայրավանքում կատարվող մյուռոնօրհնքի արարողությանը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հետ հարաբերությունների շրջանակներում բազմաթիվ ուխտավորներ այցելել են Սուրբ Երկիր: Կարգավորվել են Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում ուսանող՝

զինապարտությանը ենթակա, սաների զինվորական ծառայության հետ կապված խնդիրները: Տարբեր առիթներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ:

Անխափան շարունակվել է հաղորդակցությունը Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի հետ: Նորին Ամենապատվությունը նախորդ տարվա ընթացքին երկու անգամ՝ ԳՆԽ ընդլայնված ժողովների առիթով, այցելել է Մայր Աթոռ: Ընկալյալ ընթացակարգով վարդապետական ատենախոսություն պատրաստելու համար Պատրիարքության միաբան Տ. Հարություն արղ. Տամատյանը հունիսի 8-ին պաշտպանել է իր թեզը եւ ստացել վարդապետության աստիճան: Մայր Աթոռում իր ծառայությունն է շարունակում Պատրիարքության միաբան Տ. Զատիկ վրդ. Պապիկյանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը եղել է 721.

25 արքեպիսկոպոս,

24 եպիսկոպոս,

5 ծայրագույն վարդապետ,

47 վարդապետ,

20 արեղա,

504 քահանա,

80 միաբան եւ 16 ճեմարանական սարկավագներ:

2022-ին տեղի է ունեցել վարդապետական աստիճանի 2 տվյալություն, 8 քահանաներ արժանացել են լանջախաչ, 6-ը՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքի եւ 2-ը՝ ավագ քահանայության: 14 սարկավագ կոչվել է քահանայության: Տարբեր կարգազանցությունների համար կարգալուծ է հռչակվել 4 քահանա՝ 1-ը կուսակրոն, 3-ը՝ ամուսնացյալ:

Սարկավագական ձեռնադրություն են ստացել 3 ճեմարանական ուսանողներ:

Ցավոք, տարին զերծ չի եղել նաեւ կորուստներից: Ի Տեր ննջեց Մայր Աթոռի երիցագույն միաբան Գերշ. Տ. Վաչե արք. Հովսեփյանը:

Անհայտ կորած է համարվում Հոգշ. Տ. Մկրտիչ արղ. Կարապետյանը:

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 994 անձ, որոնցից 673-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, իսկ 321-ը՝ հայորդյաց տներում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցնող տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվել են Գերագույն Հոգեւոր Խորհրդի՝ 3 ժողովներ (մարտ 7—11, մայիս 16—20 եւ նոյեմբեր 1—3):

Կանոնավոր կերպով շարունակվել են Հայաստանյան թեմակալ առաջնորդների եւ Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների հավաքները:

Վերոհիշյալ ժողովներում քննարկվել են Նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-հասարակական կյանքին վերաբերվող հարցեր, թելադրություններ են կատարվել հոգեւոր կյանքի առավել աշխուժացման, սոցիալական աջակցության ծրագրերի ընդլայնման եւ ծիսական կյանքի բարելավման ուղղությամբ:

Փետրվարի 22-ին՝ Սրբոց Դեոնդյանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի է ունեցել քահանայից ավանդական ամենամյա հավաքը:

Բացի հիշյալ ժողովներից, գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ:

ԵԿԵՂԵՑԻ—ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի 44-օրյա պատերազմով եւ Ադրբեջանի կողմից առ այսօր շարունակվող ոտնձգություններով պայմանավորված մեր երկրի առջեւ գոյացած են անվտանգային, սոցիալական, տնտեսական, արտաքին-քաղաքական եւ մի շարք այլ հիմնախնդիրներ:

Ստեղծված իրավիճակում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աշխարհասփյուռ իր թեմերով մշտապես պատրաստակամություն է դրսևորել աջակից լինել հայրենի պետությանը՝ մարտահրավերների հաղթահարման

ուղղությամբ: Այսուհանդերձ, գործող իշխանությունների կողմից առ այսօր նկատելի չեն եղել գործնական քայլեր՝ Եկեղեցուն ըստ պատշաճի ընդգրկելու հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ բարձրաստիճան հոգեւորականների հանդիպումները ՀՀ կառավարության ղեկավարի եւ իշխանությունների ներկայացուցիչների հետ հետպատերազմյան տարիներին եղել են հազվագեպ եւ զուտ արարողակարգային, պետական միջոցառումների շրջանակներում, ինչպես օրինակ՝ ՀՀ նախագահի երդմնակալության արարողությանը՝ թերեւս պայմանավորված տարբեր ազգային, հասարակական, հայրենական խնդիրների եւ երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամի վերաբերյալ հանրային տիրույթում Եկեղեցու արտահայտած դիրքորոշումներով:

Թեեւ Մայր Աթոռն անհաշտ չէ որեւէ անձի կամ քաղաքական ուժի հետ եւ միշտ պատրաստակամ է, ի դեմս պատասխանատվություն կրող իշխանությունների՝ զորավիգ լինելու հայրենիքին եւ տարբեր ոլորտներում ի հայտ եկող խնդիրները կարգավորելու երկխոսության ճանապարհով (առավել եւս առկա մարտահրավերներին հանդիման), այնուամենայնիվ, նույնպիսի պատրաստակամություն չի դրսևորվում Մայր Աթոռի եւ Հայոց Եկեղեցու նկատմամբ: Ամենատարբեր խնդիրների շուրջ բարձրաձայնված հարցերը անհարկի եւ անպատշաճ քննադատության են արժանանում, երբեմն միտումնավոր շահարկվում եւ կամ պարզապես անուշադրության մատնվում:

Այսուհանդերձ, Պետության հետ հարաբերությունների բարելավումը եւ ի մասնավորի՝ Հայաստան եւ Արցախ աշխարհներում ստեղծված աղետալի իրավիճակի հաղթահարումը եւ կենսական նշանակության խնդիրների կարգավորումը Մայր Աթոռի համար շարունակում են մնալ օրակարգային հարցեր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Հոգեւոր-մշակութային ասպարեզում միջոցառումների քանակը երկրում տիրող ներքաղաքական ճգնաժամով եւ հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ էականորեն նվազել է:

Այդուհանդերձ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվել են որոշ միջոցառումներ:

Հուլիսի 11-ին նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի հանդիսությունների սրահում տեղի է ունեցել Ռումինիայի Հայոց թեմի հիմնադրման 620-ամյա հոբելյանին նվիրված հանդիսությունը:

Հոկտեմբերի 6-ին «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի 10-ամյակի առիթով տեղի է ունեցել «Սուրբ Էջմիածին՝ գրքի հանգրվան» խորագրով գիտաժողովը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարում եւս շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ քույր եկեղեցիների, միջկրոնական տարբեր կազմակերպությունների միջեւ հարաբերությունները:

Նշենք դրանցից մի քանիսը՝

Փետրվարի 12–13-ին Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը մասնակցել է Եգիպտոսի Հանրապետության Իսլամական հարցերի բարձրագույն խորհրդի կազմակերպած 32-րդ միջազգային խորհրդաժողովին:

Հունիսի 20–24-ը Հռոմում կայացել է Արեւելյան Ուղղափառ-Կաթողիկ երկխոսության միջազգային խառն աստվածաբանական հանձնախմբի հերթական հանդիպմանը, որին մասնակացել է Գերշ. Տ. Տիրան եպս. Պետրոսյանը:

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 8-ը Գերշ.Գեւորգ եպս. Սարոյանը եւ Հոգշ. Գարեգին վրդ. Համբարձումյանը Գերմանիայի Կառլս Ռուե քաղաքում մասնակցել են ԵՀԽ հերթական գագաթնաժողովին:

Սեպտեմբերի 12–19-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալվել են ԱՄՆ Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչները՝ ուղեկցությամբ Գերշ. Տ. Վիգեն արք. Այբազյանի:

ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատություններում 2022-ին ընդհանուր թվով ուսանել են 85 սաներ, որոնցից 22-ը՝ Գեորգյան Հոգեւոր Ճեմարանի մագիստրատուրայում, 55-ը՝ բակալավրիատում եւ 8-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայորդյաց տներ

Մայր Աթոռի 7 Հայորդյաց տներ (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրակարչության արվեստի կենտրոն հաճախել են ավելի քան 3000 երեխաներ ու պատանիներ:

Հանրակրթական դպրոցներ

Հաջողությամբ ընթացել են ՀԵՊ առարկայի օլիմպիադայի մարզային եւ հանրապետական փուլերը, որոնց հարցաշարերը կազմվել են ՔԴԿ գրասենյակի կողմից: Կազմակերպվել է 8 սեմինար-դասախոսություն Երեւանի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերի ՀԵՊ ուսուցիչների համար: Մայր Աթոռի ֆինանսավորմամբ տպագրվել են ՀԵՊ 2—4-րդ դասարանների գիրք-տետրերը:

Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հետ համագործակցությամբ մարզերում իրականացվել են Ավետարանի ուսուցման դասընթացներ:

ՔԴԿ գրասենյակի միջոցով Մայր Աթոռ է այցելել 1709 աշակերտ Հայաստանի տարբեր մարզերից:

Հանրակրթական ոլորտի լրջագույն խնդիրը շարունակում է մնալ «Հայ Եկեղեցու Պատմություն» առարկայի դասաժամերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կրճատելու նախաձեռնությունը: Այս հարցն սկզբունքային նշանակություն ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար: Առարկան հանրակրթական դպրոցներում 15 տարուց ի վեր դասավանդելու ընթացքում արժանացել է աշակերտների, ծնողների եւ ուսուցիչների բարձր գնահատականին:

Էօրնեկյան դպրոց եւ մանկապարտեզ

«Էօրնեկեան մանկապարտեզ» է հաճախել 2,5–5 տարեկան 45 երեխա:

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 33 դասարաններում հաշվետու տարում ուսանել է 503 աշակերտ:

Դպրոցի սովորողներն աշխույժ կերպով մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին: ՀԵՊ առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլում ունեցել ենք երկու 1-ին մրցանակ:

43 շրջանավարտներից ՀՀ առաջատար ԲՈՒՀ-եր են ընդունվել 38-ը, իսկ 2-ը՝ Գեւորգյան Հոգեւոր ճեմարան:

Հառիճի ԹԻՐԲԱՆԿՅԱՆ ԸՆԺԱՅԱՐԱՆ

Ընծայարանի 3 դասարաններում ուսանել են 23 աշակերտներ: Ընծայարանն ավարտած սաներից որոշները 2022-ի օգոստոսին մասնակցել են Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ընդունելության քննություններին:

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան

Ճեմարանում եւ Դավթյան օրիորդաց վարժարանում ուսանել են 46 աշակերտներ, որոնցից 33-ը՝ Հայաստանից, 6-ը՝ ՌԴ-ից, 3-ը՝ Իրաքից, 2-ը՝ Իրանից, 1-ը՝ Հնդկաստանից եւ 1-ը Մյանմարից:

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական գործունեությունը ծավալվել է հետեւյալ ուղղություններով.

ՀՀ Զինված ուժեր

Բանակի հոգեւոր առաջնորդությունը շարունակել է հոգեխնամ գործունեությունը, որի շրջանակներում հաշվետու տարում տեղի է ունեցել հոգեւոր խնամքի 339 հանդիպում զինծառայողների ընտանիքների հետ,

253 հանդիպում վիրավոր, զոհված կամ անհետ կորած համարվող զին-
ծառայողների ընտանիքների հետ:

Նշված տարում Հայոց Բանակում ծառայել է 56 եկեղեցական (1 վար-
դապետ, 17 քահանա եւ 38 սարկավագ):

Հայ եկեղեցու Համաշխարհային Երիտասարդաց
Միավորում (ՀԵՀԵՄ)

ՀԵՀԵՄ-ը անցյալ տարի եւս շարունակել է իր առաքելությունը՝
կազմակերպելով տարբեր գիտաժողովներ եւ միջոցառումներ: Թե-
մերի եւ եկեղեցապատկան կառույցների հետ քննարկվել են ծրագ-
րեր, լուսաբանվել են թեմերի եւ եկեղեցապատկան երիտասարդա-
կան կառույցների գործունեությունը: 2022 թվականի հուլիսի 5–10-ը
ՀԵՀԵՄ-ը կազմակերպել է «Հայաստան–Սփյուռք կամուրջ» համահայկա-
կան ուխտագնացությունը:

Քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ)

2022-ին 12 ՔԿՀ-ներում սպասավորող 10 հոգեւորականների (1 վար-
դապետ եւ 9 քահանա) կողմից շարունակվել է հոգեւոր խնամքը ազա-
տագրկվածներին, նրանց ընտանիքներին եւ նախկին դատապարտյալ-
ներին: Հիմնարկներում անցկացվել են հանդիպումներ, Աստվածաշնչի
սերտողություններ, առանձնազրույցներ: Մայր Աթոռի կողմից ազա-
տագրկվածներին տրամադրվել են աղոթագրքեր եւ հոգեւոր գրականու-
թյուն: Աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների
աշխատակիցների հետ:

Հանրային ֆարզչություն.

Հանրային քարոզչությունն իրականացվել է հեռուստահաղորդում-
ների, համացանցանցային հրապարակումների, տպագրվող ամսագրե-
րի, թերթերի եւ գրքերի, Մայր Աթոռի թանգարանների ու գրադարաննե-
րի միջոցով:

Հաշվետու տարում կանոնավոր կերպով շարունակել է իր աշխատանք-
ները «Շողակաթ» հեռուստաընկերությունը, ինչպես նաեւ տպագրվել են
«Էջմիածին» ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը:

Հրատարակչական բաժինը տպագրության է հանձնել 12 անուն գիրք: Նվիրատվությունների եւ գնումների շնորհիվ «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանը ձեռք է բերել 1961 միավոր նոր գրականություն: Շարունակվել են գրքերի քարտային եւ էլեկտրոնային մատենագիտական նկարագրությունների մշակման, ընթերցողների սպասարկման եւ գրքերի թվայնացման ամենօրյա աշխատանքները:

Անցյալ տարի թանգարաններ է այցելել 28 473 անձ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվել են դրամական, իրային, սննդային, հիգիենիկ պարագաների, բժշկական աջակցության եւ այլ բնույթի մի շարք ծրագրեր: Ընդհանուր առմամբ թեմերի եւ Մայր Աթոռի կողմից տրամադրվել է 788 471 445 ՀՀ դրամի չափով օժանդակություն, որ ուղղվել է մի շարք բարեգործական ծրագրերի իրականացմանը:

Առանձնացնեք նշանակալի մի քանի ծրագրեր.

Դրամական եւ իրային աջակցություն (2 106 304 ՀՀ դրամ)

2022 թվականի ընթացքում 1 956 304 ՀՀ դրամի արժողությամբ իրային օգնություն է տրամադրվել Արթիկի թեմին, ինչպես նաեւ աջակցություն է ստացել Սոցիալական ծառայությունների գրասենյակ դիմած 1 անձ՝ 150 000 ՀՀ դրամի չափով:

Սեպտեմբերի 13-ին թշնամու սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով տեղահանված ընտանիքներին ընդհանուր առմամբ տրամադրվել է 23 941 780 ՀՀ դրամի օգնություն, մասնավորաբար, Գեղարքունիքի թեմում իրականացվել է սննդի աջակցության ծրագրի 2 փուլ ընդհանուր՝ 22 693 780 ՀՀ դրամ արժողությամբ, 862 ընտանիքների համար, նաեւ Վայոց Ձորի թեմին է տրամադրվել 1 248 000 ՀՀ դրամ թեմապատկան ճամբարում ապաստանած ընտանիքների սննդի աջակցման համար: Միջինում 500 000 ՀՀ դրամ է փոխանցվել ռազմական գործողությունների հետեւանքով զոհված զինծառայողների 190 ընտանիքի, ընդհանուր ծախսը՝ 95 500 000 ՀՀ դրամ:

2020 թ. նոյեմբերի 25-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ հաստատված «Արցախի աջակցության հանձնախումբ»-ը՝ 2022 թ. սկզբին

իրականացրել է հանձնախմբի եզրափակիչ ծրագիրը՝ արցախյան պատերազմի հետեւանքով սոցիալական ծանր կացություն մեջ հայտնված արցախահայությունը բացառապես հումանիտար ծրագրերով օգնելու նպատակով իրականացրել է 16 400 000 դրամի օժանդակություն:

Արցախի Հանրապետության նախագահի խորհրդականի խնդրանքով եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայության գրասենյակի համաձայնությամբ Արցախի Հանրապետության Շուշիի, Մարտունու եւ Ասկերանի շրջանների համայնքներում իրականացվել են գուղատնտեսական աջակցության 3 ծրագրեր, որոնց ընդհանուր ծախսը կազմել է 61 763 190 ՀՀ դրամ:

Մայր Աթոռի մանկախնամ գործունեությունը ծավալվել է «Քյուրքչյան» եւ «Նագգաշյան մանուկների տուն» կենտրոններում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարդի, Խոր Վիրապի եւ Սեւանա վանքերը: Հիշյալ եկեղեցական կառույցներում 2022 թին կատարվել են 7168 մկրտություն եւ 2276 պսակադրություն:


ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործում են 35 թեմեր եւ 4 Հայրապետական Պատվիրակություններ: Համաձայն թեմերի եւ հայրապետական պատվիրակությունների ուղարկած հաշվետվությունների տվյալների Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 634 եկեղեցի ու վանք, 600 ծուխ եւ ծխական առաքելություն, 197 կիրակնօրյա դպրոց, տիկնանց՝ 124 եւ 170՝ երիտասարդաց միություն: Անցնող տարում կատարվել են 44 316 մկրտության եւ 13 205 պսակադրության արարողություններ:

Հաշվետու տարում թեմերում ու եկեղեցական կառույցներում շարունակվել են իրականացվել հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր: Հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ:

Կրթագաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հավաքներ, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր թեմայով մրցույթներ: Հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ: Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են ընծայվել պաշտոնական թերթեր:





Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՈՒՄՈՒ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՈՒՄՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 մարտի 2023 թ.)


Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Այսօր, Մեծ պահոց՝ քառասնօրեայ պահքի, երրորդ կիրակի օրը, Ղուկասի Աւետարանից վերցուած ընթերցումը մեզ բոլորիս յիշեցնում է, թէ ինչ էր եւ ինչ է Քրիստոսի առաքելութեան հիմնական նպատակը, եւ դա որքան կարեւոր է մեզ համար, որքան մեծ օրհնութիւն է մեզ ամէնքիս, սիրելիներ: Մենք վերհիշում ենք, թէ Քրիստոս եկաւ հիմնական առաքելութիւն իրականացնելու: Եւ այդ առաքելութիւնը Նա փոխանցեց Իր աշակերտներին, որպէսզի այդ առաքելութիւնը տարածուի ամեն տեղ, աշխարհի ամեն կողմը: Ինչպէս գիտենք, այդ առաքելութիւնը հասաւ եւ տարածուեց նաեւ մեր՝ Հայոց աշխարհում՝ Քրիստոսի երկու աշակերտների՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի միջոցով: Արարչագործութեան պատմութիւնը սերտում ենք Աստուածաշնչի առաջին էջերում. Ծննդոց գրքում յստակ կերպով արձանագրուած է, թէ Աստուած ինչպէս ստեղծեց աշխարհը եւ այն ամենը, ինչ գոյութիւն ունի աշխարհի մէջ: Ինքն ստեղծեց եւ մարդուն, որ Իր ստեղծագործութեան՝ Տիրոջ արարչութեան մեծագոյն հրաշքն է: Եւ այնտեղ ասում է՝ Աստուած մարդուն ստեղծեց Իր կերպարանքով եւ Իր նմանութեամբ: Եւ, երբ շարունակում ենք կարդալ Ծննդոց գիրքը, որտեղ ասում է, թէ մարդն իր անհնազանդութեան պատճառով հեռացաւ այդ պատկերից, հեռացուեց դրախտի փափկութիւնից, սակայն, Աստուծու անսահման սէրը, Տիրոջ անսահման գործը մարդկանց հանդէպ, այդ առաքելութիւնը շարունակական պահեց: Այսինքն՝ Տէրը մեր, Երկնաւոր Հայրը, ինչպէս ամեն օր ասում ենք՝ «Հայր մեր, որ երկնքում ես», ուզեց, որ մարդը տուն վերադառնայ, վերադառնայ դրախտի փափկութեան պարտէզի մէջ վայելելու կեանքի օրհնութիւններն ու

շնորհները: Եւ, ահաւասիկ, այդ առաքելութեամբ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ Քրիստոսին, որպէսզի Քրիստոս Իր խօսքերով, քարոզութիւններով եւ, մանաւանդ, Իր կեանքով ցոյց տայ մեզ մարդկանց ճանապարհը՝ յետ վերադարձի, տունդարձի ճանապարհը:

Աւետարանի այսօրուայ ընթերցման մէջ մենք տեսնում ենք, թէ ինչպէս էին փարիսեցիները քննադատում Քրիստոսին՝ ասելով, թէ մեղաւորների հետ նստում է Նա: Քրիստոս, լսելով այս քննադատութիւնը, դարձաւ եւ երեք առակ պատմեց: Այդ երեք առակներից առաջինն այն էր, թէ ինչպէս մի հովիւ, իր իննսունինը ոչխարները թողած, գնում է իր կորցրած մէկ ոչխարը գտնելու: Եւ երբ գտնում է, մեծ ուրախութեամբ տօնախմբութիւն է անում: Կամ մի կին, երբ իր գումարից մէկ դրամը կորցնում է, փնտրում է ամեն տեղ եւ, երբ գտնում է, մեծ ուրախութեամբ տօնախմբում է: Եւ ապա պատմում է մեզ բոլորիս ծանօթ եւ սիրելի՝ անառակ որդու առակը, թէ ինչպէս մի երիտասարդ ուզում է լքել իր տունը, ուր ինքը հանգիստ էր, ուրախ եւ երջանիկ: Մօտենում է հօրը, ուզում է իր բաժինը եւ թողնում է հայրական տունը: Տնից հեռանալով՝ նա հեռանում է ուրախութիւնից, հեռանում է հոգեկան բաւարարուածութիւնից: Եւ, փառք Աստծու, երբ առիթ է ունենում, անդրադառնում է: Անդրադարձի մէջ տեսնում է, որ ինքը սխալ ճանապարհի վրայ է, հետեւաբար, անդրադառնալուց յետոյ տուն է վերադառնում: Եւ, երբ տուն է դառնում, հայրը, որն անսահման սիրով սպասում էր որդու ետդարձին, ընդունում է նրան: Քրիստոս այս երեք առակները պատմեց՝ ցոյց տալու համար, թէ Աստուած որքան մտահոգուած է մեզ համար եւ ուզում է, որ մենք ուրախ լինենք, կամենում է, որ մենք երջանիկ լինենք: Բայց այդ ուրախութիւնը, որ Տէրը փափագում է, որ մենք վայելենք, արտաքին ուրախութիւն չէ, այլ հոգեւոր ուրախութիւն, որովհետեւ, ձեզնից շատերն իրենց կեանքի փորձառութեան մէջ ուրախութիւնների եւ տօնախմբութիւնների են մասնակցում, բայց, եթէ մարդը հոգեպէս ուրախ չէ, հոգեպէս հանգիստ չէ, այդ ուրախութիւնները ձեւական են դառնում: Եւ շատ կարեւոր է մարդու հոգեկան առողջութիւնը, մենք ուզում ենք հոգ տանել մեր ֆիզիկական առողջութեան մասին, մանաւանդ, բժիշկները յորդորում են, որ գոնէ տարին մէկ, որոշ տարիքից յետոյ՝ նոյնիսկ երկու անգամ զննութեան գնանք եւ հոգ տանենք մեր մարմնական առողջութեան մասին: Իմ հայրն ասում էր. «Նախ հոգեւոր առողջութիւն, ապա ֆիզիկական առողջութիւն»: Եւ նաեւ շատ բժիշկներ համոզուած են, որ

բազում հիւանդութիւնների աղբիւրը հոգեկան տառապանքն է՝ հոգեւոր խնդիրների առկայութիւնը: Հետեւաբար, Քրիստոս եկաւ Իր հիմնական առաքելութեամբ՝ վերադարձնելու մեզ մեր ներքին հոգեւոր առողջութիւնը, խաղաղութիւնը եւ մեր հոգու ներդաշնակութիւնը: Եւ դա անելու համար Իր աշակերտներին առաքելութիւն տուեց, որպէսզի նրանք գնան եւ ամբողջ աշխարհում այդ ներքին խաղաղութիւնը քարոզեն: Եւ այդ խաղաղութեան պատգամը հասաւ մեր աշխարհ: Մեր ժողովրդի հայրերը՝ հայրապետները, լուսաւոր հոգեւորականները հաստատեցին այնպիսի կարգեր, որոնց միջոցով հայ քրիստոնեան կարողացաւ գտնել վերադարձի ճանապարհը: Ահաւասիկ, այս Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանում մեր հայրերի հաստատած կարգերը եւ կանոնները, աղօթքները եւ շարականները այնպիսի ձեւով են կարգաւորուած, որ մենք հնարաւորութիւն ունենանք անդրադառնալու, թէ արդեօք անկեղծօրէն, արդեօք հոգեպէս ուրախ ենք, կամ երջանիկ ենք հոգեպէս, բաւարարուած ենք, ու նաեւ հնարաւորութիւն ունենանք յիշելու, որ մեր Երկնաւոր Տէրը պատրաստ է ընդունելու մեզ, վերադարձնելու մեզ դէպի աղբիւրը մեր էութեան, այն աղբիւրը, որ Աստուած Ինքն է: Եւ ասում ենք՝ Աստուած սէր է, այդ աղբիւրը սիրոյ աղբիւրն է, համերաշխութեան աղբիւրն է եւ, երբ այդ աղբիւրը չի յորդում, երբ անձի, ժողովրդի, ազգի, Եկեղեցու կեանքում ցամաքում է այդ աղբիւրի ջուրը, անընդհատ խնդիրներ ու վէճեր են սկսւում: Թող Տէրը մեզ բոլորիս իմաստութիւն շնորհի, դէպի տուն վերադարձնի՝ տալով մեզ խաղաղութիւն, հոգեկան ուրախութիւն եւ անդորրութիւն. ամէն:



Տ. ՈՌԻԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 մարտի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տո՛ւր զհամար տնտեսութեան քո»
(Ղուկ. ԺԶ. 2):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մենք այսօր Մեծ Պահքի մեծ ճանապարհորդութեան շորրորդ հանգրվանում ենք, որը կոչվում է Տնտեսի կիրակի: Ժանապարհորդություն, որ տանում է մեզ դեպի Սուրբ Հարություն հաղթանակի տուն, երբ մենք այս ընթացքում մեր ներքին հոգեւոր ուժերի կատարումն ենք ապահովում՝ ուրախությամբ, ցնծությամբ, հույսով եւ հավատով դիմավորելու մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հաղթական Հարության տունը: Եւ այս հանգրվանին մենք սովորելու ենք, թե ինչ է պատասխանատվությունը եւ հավատարմությունը: Մեր՝ քրիստոնյաներիս հայացքը, բնականից ուղղված է դեպի երկինք, դեպի Հարության իրականություն, դեպի այն իրականությունը, որը ճշմարիտ է, մշտնջենավոր է, որն իրականում մարդկային կոչումն է՝ նմանվելու Աստծուն, լինելու պատկերակիրը Աստծու:

Մենք լավ գիտենք, որ մեր կյանքն անցողիկ է: Մենք լավ գիտենք, որ մեզ տրված կյանքն իրականում պարզեւ է, որովհետեւ մեր կամքով չէ, որ կյանք ենք առել: Եւ այն, ինչ մեր կյանքի հետ չէր առնչվում մեր ծննդյան պահից առաջ եւ չի առնչվելու նաեւ մեր մահից հետո, դա իրական չէ, բայց մենք այդ իրականության մեջ ենք ապրում՝ իրական չլինելով: Եւ մեր Տերը այսօրվա իր խոսքի մեջ մեզ կոչ է անում հավատարիմ լինել փոքր բաների մեջ, որպեսզի մեզ վստահվեն, շնորհվեն եւ տրվեն մեծ բաները:

Մեզ կոչ է անում հավատարիմ լինել այն նյութական իրականության մեջ, որտեղ մենք ապրում ենք, որպեսզի մեզ տրվի ճշմարիտ հոգեւոր

իրականությունը: Եւ մեր Տերը մեզ կոչում է հավատարիմ լինել այն ամենին, ինչ որ իրականում մերը չէ, որովհետեւ մի օր չի լինելու դա, որպեսզի մեզ տրվի այն, ինչը որ իրականում մերն է: Եւ այս ամենը մեր Տերը մեզ փոխանցում է մի շատ գեղեցիկ, բայց ինչ որ իմաստով գայթակղեցնող մի պատմության միջոցով:

Պատմում է այս կյանքից վերցված մի պատմություն՝ մեծահարուստի եւ նրա գործերի կառավարչի մասին: Բնականաբար վերջինիս մասնագիտական որակներից, հավատարմությունից ու նվիրվածությունից էր կախված այդ կառավարչի տնտեսության զարգացումն ու բարգավաճումը: Մի օր նա ամբաստանություն է լսում, թե տնտեսն իրեն հավատարիմ չէ եւ իր ունեցվածքը վատնում է: Անառակի առակի մեջ անառակ որդին վատնում է հորից ժառանգություն ստացած իրեն պատկանող ունեցվածքը: Այստեղ արդեն այս կառավարիչը վատնում է ուրիշի ունեցվածքը, որի վրա ընդամենը տնտես է կարգված եւ, երբ կառավարիչը հաշվետվություն է պահանջում, տնտեսն անմիջապես գլխի ընկնելով, որ սա վերջն է, սկսում է հնարամտորեն մտածել, թե ինչ պետք է անի: Աշխատել չի կարող, որոշակի մշակություն ի վիճակի չէ անել, մյուս կողմից էլ՝ մուրալ ամաչում է, հետեւապես, մտածում է, որ պետք է այնպիսի մի ներդրում կատարել, որը հետագայում իր համար կեցություն կապահովի, եւ դիմում է երկրորդ խարդախության: Կանչում է պարտապաններին՝ իր տիրոջը պարտք եղողներին եւ զեղչում է նրանց պարտքերը, դրանով իսկ ներդրում է անում մարդկային հարաբերությունների մեջ, որպեսզի այդ մարդկանց բարեհաճությունը ապագային ունենա, որովհետեւ այլեւս ինքը տնտեսության վարող չէ:

Այստեղ մենք շատ հետաքրքիր ձեւով նկատում ենք այս տնտեսի նախ հապճեպությունը եւ ապա՝ հնարամտությունը, որի համար տերը գովում է նրան: Բայց զարմանալի է՝ Հիսուս ինչո՞ւ է պատմում այս առակը, այն էլ իր աշակերտներին: Ավետարանիչը շեշտում է, այս առակը Քրիստոսը պատմում է իր հետեւորդների համար, իր աշակերտների համար: Այս անիրավ տնտեսի պատմությունից մենք օրինակ պետք է վերցնենք: Իհարկե մեր Տերը չի գովում տնտեսի անիրավությունը, ընդհակառակը. այնպես, ինչպես մեզ օրինակ չի տալիս անառակ որդու անառակությունը եւ ավագ որդու ներողամիտ չլինելը, այլ որպես օրինակ տալիս է դարձի պատմությունը, այս դեպքում էլ մեզ օրինակ է տալիս, թե ինչպիսի հնարամտություն է կիրառում տնտեսը, որպեսզի տուն եւ ապ-

րուստ ունենա, իր կեցույթյունն ապահովի այն դեպքում, երբ որ կարիքի մեջ է: Բանալի արտահայտությունն այստեղ անմիջապես հետո եկող մեր Տիրոջ բացատրությունն է, որը ափսոսանքով ասում է. այս աշխարհի որդիները ավելի իմաստուն են իրենց սկզբունքներին, իրենց կյանքի՝ այդ աշխարհին հատուկ օրենքներին հավատարիմ գտնվելու առումով, քան լուսի որդիները: Այսինքն՝ Տերը խոսում է երկու աշխարհների մասին. «տնտեսների» աշխարհում կարեւորվում են այն հատկությունները, որոնք օգնում են մարդկանց հասնելու իրենց նպատակին՝ կլինի անարդարության ճանապարհով, կեղծիքի ճանապարհով կամ վայելքի ճանապարհով: Եւ որպես կանոն այդ աշխարհի մարդկանց հատուկ է նպատակասլացությունը, հնարամտությունը, ճարպկությունը, իսկ լուսի որդիները, որ կոչված են գնալու դեպի հավիտենական արժեքները, հոգեւոր արժեքները, մարդկային արժեքները եւ աստվածային արժեքները, երբեմն թմրած են, երբեմն՝ ծուլ, երբեմն՝ ոչ հնարամիտ: Եւ Քրիստոս բերում է այս օրինակը նաեւ ափսոսանք արտահայտելու համար, եւ, եթե Հիսուս ճանաչեր այսօրվա մեր իրականությունը, վստահաբար այդ ափսոսանքը կարտահայտեր նաեւ այսօր:

Ավելին, մենք տնտեսներն ենք, տնտեսներն ենք մեր կյանքի, մենք տնտեսներն ենք այն շրջապատող աշխարհի, որը մեզ է տրված, տրված է մշակելու եւ պահպանելու, մենք տնտեսներն ենք մեր ընտանիքի եւ մենք տնտեսներն ենք մեր հայրենիքի: Եւ, եթե մենք հավատարիմ չենք այդ տնտեսության մեջ, մեզ չի կարող վստահվել այն տնտեսությունը, որի համար մենք մկրտվել ենք, որի համար հոգեւոր կյանք ենք ապրում, որի համար այնպես ենք ապրում, որ գնանք դեպի այդ հեռանկարը:

Մենք ունենք ոչ միայն կուտակված նյութական հարստություն, ոչ միայն մտավոր հարստություն, այլեւ ունենք հոգեւոր հարստություն: Այս ամենը մենք օգտագործում ենք համընդհանուր բարիքի համար, եւ, եթե, ինչպես առակի մեջ է ասվում, այս աշխարհի որդիների պես միայն վատնում ենք մեր ստացածը եւ օգտագործում ենք միայն մեզ համար, մեր բարիքի համար, մեր մեկուսի երջանկության համար, եթե մենք հավատարիմ չենք այն արժեքներին, որոնք կուտակվել եւ փոխանցվել են մեզ, այդ դեպքում ոչ միայն կորցնելու ենք եւ կորցնում ենք այդ արժեքները, այլեւ պատասխան ենք տալու դրա համար Աստծու արքայության առաջ:

Միջնադարից մեզ է հասել մի հետաքրքիր պատմություն, որ լավ բացատրում է, թե ինչն է այս աշխարհի որդիների եւ լուսի որդիների այս

տարբերությունը, Եկեղեցու առջեւ հոգեւորականների մի բացօթյա ժողովի ժամանակ հանկարծ մոտերքով անցնում է անառակ կյանքով ապրող շատ հայտնի մի գեղեցիկ կին՝ շրջապատված իր խմբով, իր երկրպագուներով: Հոգեւորականները համեստորեն իրենց հայացքը խոնարհում են, որպեսզի չտեսնեն այդ պահը եւ միայն մեկը՝ ամենից տարեցը, սեւեռուն նայում է այդ կնոջը: Հետո հոգեւոր եղբայրներին ասում է. չէ՞ք ուրախանում այդ գեղեցկությանը, որն անցավ քիչ առաջ, ես ուրախանում եմ եւ ինձ դա դուր է գալիս, որովհետեւ Աստված այս օրինակը դնելու է մեր աչքի առաջ, երբ որ հաշիվ կպահանջի մեզանից: Այդ օրինակը կտա մեզ, կդնի մեր աչքերի առջեւ՝ ցույց տալու համար եւ ասելու համար՝ տեսե՛ք, իր գեղեցկությունը պահպանելու, ընդգծելու նպատակով այդ կինն ինչքան ժամանակ է տրամադրել, լվացվել է, զարդարվել, օծվել եւ որչափ զոհողություններ է արել՝ ցուցադրելու համար իր գեղեցկությունը: Այդ գեղեցկությունը վստահաբար մեզ եւս պետք է՝ երկնքի արքայությունը ժառանգելու համար: Այն աղբը, որը հաճախ լցվում է մեր հոգիների վրա, մենք պետք է լվանք եւ մաքրենք այս կնոջ պես՝ արդեն մեր հոգեւոր դաշտում մաքրագործում անելու նպատակով: Արդյո՞ք մենք այդքան ուշադիր ենք, հոգատար եւ սեւեռված:

Եւ վերջում փողի մասին:

Հիսուս մեզ այս ամենի շրջանակում հորդորում է անիրավ մամոնայից բարեկամներ սարքել, այսինքն այն նյութական հարստությունը, որ մեզ տրված է, օգտագործել բարեկամներ ունենալու համար: Բայց ինչո՞ւ է անիրավ կոչվում, եթե նյութական հարստություն է: Ի դեպ, դրամը, ինքնին բարիք չէ, այլ նյութական բարիքի խորհրդանիշն է: Ինչո՞ւ է նյութական հարստությունը անիրավ անվանում: Այն բանի համար, որովհետեւ կյանքի փորձառությունը ցույց է տալիս, որ դրամի նկատմամբ հնարավոր չէ անտարբեր լինել: Ինչպես Հին Ուխտի ժողովրդի կիրառած բառն է բառացի ցույց տալիս, այդ բառի արմատը բուռն տենչանք ունենալն է: Փող ասելու համար օգտագործում էին մի բառ, որը նշանակում էր տենչալ: Բուռն տենչանքն այն աստիճան է, որ այլեւս կուրանում ես եւ ոչինչ չես տեսնում: Այսինքն՝ դրամը մագնիսական ձգողականություն ունի եւ հետեւապես հեշտորեն տիրապետում է մեզ՝ դարձնելով իր ծառա: Ծիշտ է, մեզ թվում է, թե դրամը մենք ծառայեցնում ենք մեր նպատակներին, բայց հաճախ, երբ այն շատ է լինում, մենք դառնում ենք մամոնային ծառա, բայց Հիսուս ասում է. այս անիրավ մամոնայից ձեզ

բարեկամներ արեք, ներդրում արեք, միեւնույն է մենք բոլորս պետք է աշխատենք եւ պետք է բարիք ստեղծենք:

Ավետարանը երբեք հարստությունը չի փնտվում, երբեք նյութական արժեքները չի ստորադասում: Ընդհակառակը, դրանք պետք են, որպեսզի մենք երկնքում գանձեր ունենանք, եւ դրա օրինակներով լեցուն է մեր կյանքը: Ինչպէս են կառուցվում մեր հոգեւոր տաճարները, որպեսզի դրանք մեջ կառուցվեն մեր մարդկային տաճարները, ինչպէս են կառուցվում մեր կրթական օջախները, որպեսզի մենք կրթվենք եւ դառնանք գիտուն մարդիկ, լուսավորյալ մարդիկ: Ինչպէս են կառուցվում պաշտպանական համակարգերը: Ուրեմն դրամը, հարստությունը արժեք են, ուղղակի այդ արժեքը պետք է գործածել ընդհանուրի համար, համընդհանուր բարիքի համար, հայրենիքի համար: Դա այն է, ինչ որ մեզ տրված է եւ մեզնից պահանջվելու է, որովհետեւ մեզնից չի պահանջվելու միայն մեր անձնական պատասխանատվությունը մեր անձի համար, այլ մեզնից պատասխանատվություն է պահանջվելու մեր ընտանիքի համար, մեր զավակների կրթության համար, մեր հոգեւոր դաստիարակության համար, մեզնից պատասխանատվություն է պահանջվելու մեր շրջապատի համար, մեր ընկերության համար եւ մեզնից հատկապես այս օրերին օրհասական դարձած մեր հայրենիքի համար, որովհետեւ մենք վատնել ենք եւ նյութական, եւ հոգեւոր, եւ մտավոր արժեքները:

Եւ, եթե այստեղ ենք կորցնում, այն էլ չենք գնահատում, ապա ի՞նչ ենք ակնկալում, որ դա ունենալու ենք երկնքի արքայության մեջ: Ուրեմն Տնտեսի կիրակին մեզ գալիս է ասելու, որ հավատարմությունն ու պատասխանատվությունը մեր այսօրվա ամենակարեւոր հանձնառություններից են: Հանձնառություններ, որոնք մենք կկատարենք թե՛ որպես մարդ անհատապես եւ ընտանիքում, թե՛ որպես ազգ՝ հավաքական առումով, եւ հայրենիքում, եւ սփյուռքում, եւ թե՛ որպես եկեղեցի՝ իբրեւ Աստծու մեծ ընտանիքի մի կարեւոր մասը:

Տիրոջ սերը, օրհնությունը եւ ողորմությունը մեզ ամենքիս հետ լինի: Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



Տ. ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 մարտի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր քառասնօրյա ճամփորդութեան, մեր Պահօր ճամփորդութեան ընթացքին հասանք այդ Պահօր վերջին կիրակի օրվան, որ մեր եկեղեցու հայրերը կոչել են Գալստյան կիրակի:

Անշուշտ Պահօր դեռ պիտի շարունակվի, սակայն հաջորդ կիրակի արդեն Պահօց կիրակին չէ, այլ տոնական օր է, Քրիստոսի Երուսաղեմ մուտքի հիշատակի օրը, որ մեր ժողովրդական անունով կոչում ենք Ծաղկազարդ:

Բայց մենք վերադառնանք այսօրվա խորհրդին: Մեր եկեղեցու հայրերը երկու իրադարձութեան խորհուրդ են ամփոփել այսօրվա կիրակիի մեջ: Առաջին՝ Գալստյան խորհուրդ եւ երկրորդ՝ Գալստյան տոն: Ասեմ որ, Գալստյան կիրակի ունեն նաեւ ուրիշ եկեղեցիները, եւ ուղղափառները, եւ կաթոլիկները, սակայն նրանց մոտ դա ոչ թե Մեծ Պահօր ընթացքում է, այլ Ծննդյան Պահօր ընթացքում, Ծննդյան տոնից չորս եւ յոթ շաբաթներ առաջ, որն է Քրիստոսի առաջին Գալուստը: Մենք բոլորս գիտենք, որ երբ Հայր Աստված իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, սա տեղի ունեցավ մոտավորապէս մեզանից երկու հազար եւ մի քիչ ավելի տարիներ առաջ: Եւ ինչո՞ւ Քրիստոս աշխարհ եկավ: Երբ բացում ենք Աստվածաշունչը եւ ընթերցում, տեսնում ենք, թե ինչպէս Աստված ստեղծեց տիեզերքը, ինչպէս ստեղծեց մարդկութիւնը եւ թե ինչպէս հրահանգներ տվեց մարդկանց ապրելու համար:

Մարդիկ, սակայն, չկարողացան պահել Աստծու պատվիրանները եւ չեն պահում մինչեւ այսօր: Դա միայն Ադամի եւ Եւայի մեղքը չէ, միայն իրենց թուլութիւնը եւ թերութիւնը չէ, Աստծու պատվիրանները մինչեւ այսօր մենք չենք կարողանում պահպանել: Հետեւաբար, մենք չպետք է

մեղադրենք մեզանից շատ ավելի նվազ իմացական կարողություն ունեցող մարդկանց, որ մեղանշեցին եւ մեղք գործեցին, որ խաբվեցին օձի պատրանքներից: Սակայն ամեն դեպքում մեղքը աշխարհ մտավ:

Աստված փորձեց տարբեր պատիժներով, տարբեր ձևերով եւ տարբեր հովանավորության շնորհներով մարդկությանը նորից դեպ իրեն բերել: Զրհեղեղ արեց, Սողոմոն ու Գոմորը կործանեց, պատժեց փարավոնին, ընտրեց իր համար մի ընտանիք՝ Աբրահամի ընտանիքը, որը մեծ ժողովուրդ դարձավ, որին իր ժողովուրդը դարձրեց, իր սուրբ ժողովուրդը, իրեն պատկանող ժողովուրդը: Եւ այդ ժողովուրդը, որ վայելում էր Աստծու հովանավորությունը, Աստծու ուժը, երբ սկսում էր մի քիչ լավ ապրել, մոռանում էր Տիրոջը: Երբ ընկնում էր նեղության եւ փորձանքի մեջ, հիշում էր Աստծուն: Աղաղակում էր, աղոթում էր եւ Աստված օգնության էր գալիս, բայց երբ կյանքը մի քիչ բարվոքվում էր, նորից էին մոռանում Աստծուն: Եւ, հավանաբար, Աստված մտածեց՝ ինչո՞ւ Ինքը պիտի միայն այս թուլամորթ եւ ոչ վստահ ժողովուրդի Աստվածը լինի: Եւ ինչո՞ւ չպետք է լինի ամբողջ մարդկության Աստվածը: Երբ Հայր Աստված իր Որդուն ուղարկեց աշխարհ, երկու առաքելության մեջ ուղարկեց: Առաջինը՝ որպեսզի հակաթույն տա ագամական մեղքին եւ որպեսզի մարդիկ նորից հնարավորություն ունենան փրկվելու, եւ նա արեց իր մահվան խաչի վրա: Եւ երկրորդը՝ որպեսզի Աստված ողջ մարդկությանը վերադարձնի առ Աստված:

Երբ Քրիստոս համբարձվում էր իր տասնմեկ առաքյալների աչքի առջեւ, նրանց պատվիրեց եւ ասաց. «Գնացէ՛ք, ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթէոս, Ի՜՜. 19):

Սա առաջին պատգամն էր, որ Քրիստոս իր առաջին Գալստյան ժամանակ տվեց մեզ, որը մենք պիտի իրագործենք մինչեւ իր երկրորդ Գալուստը: Քրիստոս երկրորդ պատգամն էլ մեզ տվեց. Ապրե՛ք Աստծուն հաճելի կյանքով:

Նա շատ օրինակներ է բերել տարբեր առակներով բացատրել եւ մեկնել, թե ինչպե՞ս մարդը պիտի ապրի, որ արժանանա Աստծուն եւ արժանանա Աստծու արքայությանը: Դուք շատ ուրիշ պատմություններ գիտեք այդ մասին, եւ ամեն կիրակի այստեղ քարոզների մեջ լսում եք, բացում եք Սուրբ Գիրքը, կարդում եք Ավետարանը, եւ չեմ ցանկանում դրանք կրկնել: Սակայն այդ ամենը կարելի է ամփոփել երկու-երեք նախադասության մեջ:

Առաջին՝ որ պետք է միշտ հավատարիմ մնալ Աստծուն եւ երբեք չմոռանալ, ինչպես հրեաներն էին անում, երբ սկսում էին լավ ապրել:

Երկրորդ՝ պետք է սիրել մեր մերձավորին: Մերձավոր ասելով չպետք է հասկանանք իմ եղբորը, իմ մորը, իմ հորը, այլ ամեն մեկին, որը մեր շուրջն է: Եւ բնավ ազգակցական կապն այստեղ էական չէ:

Երրորդ՝ որ Աստված մեզ է տվել բնությունը, գետերը, կենդանիներին, թռչուններին:

Եւ չորրորդ՝ որ մենք մեզ պահենք եւ մեզ սիրենք այնպես, ինչպես Աստված կցանկանար որ մեզ տեսներ:

Մեզանից յուրաքանչյուրը թող մտածի, մեր կյանքի ընթացքում, այս տարի կամ երեսուն կամ քառասուն տարիների ընթացքում, մենք ապրել ենք այսպես, մենք կատարել ենք Քրիստոսի այս երկու պատգամները, որովհետեւ մենք պիտի կանգնենք երկրորդ Գալստյան դատաստանի առջեւ: Եւ պիտի պատասխան տանք ոչ թե հավաքական կերպով, այլ մեզանից յուրաքանչյուրը առանձին պիտի հաշիվ տա Աստծուն, թե ինչ է արել:

Քրիստոս եկավ, որպեսզի Աստված բոլորին պատկանի, ամբողջ մարդկությունը պատկանի: Իսկ դա նշանակում է, որ մեզանից յուրաքանչյուրի վրա պարտականություն դրեց, ոչ թե միայն առաքյալների վրա, որովհետեւ Հոգեգալուստի ժամանակ Սուրբ Հոգին բոլորի վրա իջավ, ովքեր այնտեղ հավաքված էին եւ ոչ միայն առաքյալների: Որ մենք պիտի քարոզենք Քրիստոսին, որպեսզի նրանց, ովքեր չեն ճանաչում Քրիստոսին, բերենք դեպի Քրիստոս: Եւ դա երկու շրջանակ ունի՝ մեկը այլ կրոնների պատկանողները կամ աստվածամերժության հետեւորդներն են, որոնց մենք պարտավոր ենք քարոզել Քրիստոսին եւ մյուսը քրիստոնյա կոչված մեր ազգի զավակները, որոնք իրենց քրիստոնյա են կոչում, բայց ոչ մի կապ չունեն քրիստոնեության հետ:


Եւ երկրորդը՝ մենք իսկապես պատրաստ ենք այսօր կանգնելու դատաստանի առաջ եւ սպասելու Քրիստոսի երկրորդ Գալստյանը: Որովհետեւ, երբ առաքյալները հարցնում են Քրիստոսին. Տէր, դու ե՞րբ պիտի գաս, ե՞րբ պիտի լինի երկրորդ Գալուստը, ե՞րբ պիտի հաստատես Քո թագավորությունը, Քրիստոս ասում է. Ոչ ոք չգիտի եւ դա ձեր իմանալու բանը չի, անգամ ես չգիտեմ, միայն Հայրս գիտի, բայց դա չի նշանակում, որ մենք կասենք, է՛հ, դեռ ժամանակ կա, դեռ կաղոթենք, դեռ դարձի կգանք, ոչ այդպես չպետք է լինի:

Ամեն վայրկյան մենք պիտի ապրենք այնպես, որ մշտապես պատրաստ լինենք կանգնելու Աստծու դատաստանի առջև՝ ասելով. Տէր մենք այստեղ ենք: Եւ Տերը կորոշի՝ մեզ դրախտ ուղարկել, թե՞ դժոխք: Աստծու հանձնարարություններից մեկն է նաեւ սիրել մերձավորին եւ սիրել թշնամուն: Գիտեմ որ, շատ դժվար բան եմ ասում, շատ դժվար է թշնամուն սիրել: Հոր մարգարեն հպարտանում էր՝ ասելով. Ես երբեք իմ թշնամու դժբախտությունները չեմ ուրախացել: Նա իսկական քրիստոնյա է: Անշուշտ, իմանալով, գնահատելով, պաշտպանելով այն ամենը, ինչ որ մերն է, նաեւ պիտի կարողանանք հարգել, եթե ոչ սիրել, գոնե հարգել մեկ ուրիշին, հարգել մեկ ուրիշի մշակույթը, հարգել մեկ ուրիշի կրոնը: Տեսե՛ք, վերջերս, վերջին տարիներին, երկու անգամ Շվեդիայում եւ Դանիայում Ղուրան այրեցին: Արդո՞ք Աստված կցանկանար դա, չէ՞ որ մենք վիրավորում ենք մեկ այլ մշակույթ կրողներին, որոնք մեղավոր չեն, որ ծնվել են այնտեղ, որտեղ մահմեդական կրոնն է: Եւ այլ հարց է, որ մենք երբեք բավարար չանք չենք թափել՝ նրանց դեպի Քրիստոս բերելու: Բայց գոնե պետք է հարգենք այն, ինչը որ ունեն իրենք:

Մի պատմություն եմ հիշում այս պահին Սուրբ Գրքից. երբ դեռ Իսրայելը թագավորություն չուներ, բայց արդեն իրենք Պաղեստինում էին, Ավետյաց երկրում, երբ փղշտացիները հարձակվում են իսրայելացիների վրա, Տիրոջ տապանակը, այսինքն Աստծու ներկայությունը գտնվում էր Սելովում: Իսրայելացիները պարտվում են եւ, փոխանակ դիմելու Աստծուն, փոխանակ աղոթելու Աստծուն, ասում են. Եկեք Տիրոջ տապանակը բերենք այստեղ, որ տապանակը մեր փոխարեն կռվի փղշտացիների դեմ: Բերում են եւ ավելի մեծ կոտորած է լինում իսրայելացիների բանակում: Տապանակը գերի է ընկնում, փղշտացիները գերեվարում են Տիրոջ Ուխտի տապանակը, բայց չեն անարգում այն: Ասում են. սա իսրայելացիների Աստծու տապանակն է: Իսրայելացիների Աստծու ներկայությունն է: Եւ տանում են Տապանակը իրենց ամենամեծ աստծու՝ Դագոնի հեթանոսական տաճար՝ դնելով Դագոնի արձանի մոտ: Եւ ի վերջո վերադարձնում են այն իսրայելացիներին՝ նվերներով ու պատիվներով: Եթե փղշտացիները կարողանում են այսպիսի հարգանք դրսևորել հակառակորդի մշակույթի նկատմամբ, արդո՞ք քրիստոնյաներին թույլատրված է վիրավորել այլ ազգերի ներկայացուցիչներին միայն նրա համար, որ ուրիշ կրոն, ազգություն կամ դավանանք ունեն:

Մենք մեծ Պահքի քառասնօրյա ընթացքի մեջ ենք, որի ավարտին պիտի սկսվի Ավագ շաբաթը: Մենք բոլորս միասին անցնում ենք մի ճանապարհ, որով Քրիստոսն է անցել ամեն տարի: Եկեք ազդեցվենք, սիրելի՛ հավատացյալներ, որ չմոռանանք այն ամենը, ինչ որ պատվիրել է մեզ Քրիստոս, չմոռանանք այն ամենը, ինչ որ լսել են իր տասներկու առաքյալները, իր յոթանասուներկու աշակերտները, որոնք իրենց հերթին փոխանցել են իրենց աշակերտներին, որոնք էլ ավանդել են առաջին եւ երկրորդ դարի եպիսկոպոսներին եւ նրանց հաջորդներին՝ գալով-հասելով մեզ: Եւ հիշենք ամեն վայրկյան, որ միշտ պետք է պատրաստ լինենք Քրիստոսի երկրորդ Գալստյանը:

Այժմ եւ միշտ հավիտյանս հավիտենից, ամեն:





ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԿԱՎԱԿ ԱԶԻԶՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՆՎԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ՍՅՈՒՈՒՆԻ ՍԱՍԻՆ¹

Հայոց եկեղեցական ավանդության համաձայն՝ Հայոց մյուռոնը սերում է այն յուզից, որը պատրաստել էր Մովսես մարգարեն²: Այս մասին կարգում ենք Մաշտոցյան Մատենադարանի հ. 2547 ձեռագրում³, ուր ասվում է՝ Աստծու պատվերով Մովսես մարգարեի պատրաստած յուզն իսրայելացիներն իրենց հետ Ավետյաց երկիր բերեցին եւ երբ կառուցեցին Երուսաղեմի տաճարը, պահեցին այնտեղ մինչեւ Զաքարիայի քահանայապետությանը. «...եւ յորժամ եկին որդիքն Իսրայելի յերկիրն Աւետեաց եւ բնակեցան յԵրուսաղեմ, զիւղն զայն զհետ ունէին եւ յորժամ շինեցաւ տաճարն անդ եղին զիւղն աստուածային ի Սրբութիւն Սրբութեանցն եւ անդ էր մեծ ի ծնունդն Յովհաննու կամ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...»⁴: Զաքարիայի սպանությունից հետո (Մատթ. ԻԳ. 35) նրա կինը՝ Եղիսաբե-

^{1*} Ստացվել է 15.03.2023, գրախոսվել է 20.03.2023: Էլ. հասցե՝ aramayis.sarkavag@mail.ru:

² Հին Կտակարանի Ելից գրքում Աստված Մովսես մարգարեին պատվիրում է օծության յուզ պատրաստել եւ տալիս է նաեւ բաղադրությունը. «Եւ դու ա՛ն քեզ խունկս անուշունս. ծաղիկ ընտիր զմըռնենեաց հինգ հարիւր սիկղ. եւ կինամոմոն զանոյշ զկէս այնորիկ երկերիւր եւ յիսուն. եւ զխունկեղէզն զանոյշ երկերիւր եւ յիսուն: եւ հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն. եւ եւղ ձիթենեաց հիմենեաւ միով: Եւ արասցես զայն եւղ յօծումն սրբութեան. եւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց, եւղ յօծումն սրբութեան լինիցի» (Ելք Լ. 22–25):

³ Ձեռագիրը գրվել է 1705) թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. «ձեռամբ յոգնամեղ եւ թշուառ յոգոյ Դաւթի»: Տէն «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ը., Երեւան, 2013, սլ. 455–456:

⁴ Յաղագս պատմության սուրբ եւ աստուածային իւղոյն, զոր գտեալ սրբոյ հարցն յարեւելյ յաղուանի գիրս եւ թարգմանեցին ի հայ գիր: Այլեւ մարմնոյ սուրբ Կարապետին եւս կարճաբոստ, ՄՄ ձեռ. 2547, թերթ 168բ–169ա (հմտ. Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Սրբալույս մյուռոնը հայ մատենագրության մեջ (V–XIX դդ.) Ս. Էջմիածին, 2021, էջ 242):

թը, այս յուզն իր հետ վերցնելով, «փախաւ ի լեառն»⁵ փրկելու նորածին Հովհաննեսին, քանի որ Հերովդեսը հրամայել էր կոտորել մինչեւ երկու տարեկան բոլոր մանուկներին: Եղիսաբեթին սպանում են Հերովդեսի զինվորները, սակայն կարողանում է փրկել մանկանը: Այնուհետեւ «կիմ ոմն պոռնիկ յափշտակեալ զիւզն աստուածային», որով հետո Բեթանիա-յում՝ բորոտ Սիմոնի տանը, օծում է Հիսուս Քրիստոսին (Մատթ. ԻԶ. 6—13, հմմտ. Մրկ. ԺԴ. 3—9)⁶: Եւ երբ Թադեոս առաքյալը գալիս է Հայոց աշխարհ քարոզելու, իր հետ բերում է այս յուզը: Հայոց Սանատրուկ Թագավորի մոտ՝ Արտազ գնալիս, Տարոնով անցնելիս, Թադեոս առաքյալը եղրդենու⁷ տակ պահում է յուզով լի սրվակն ու աստվածամուխ Ս. Գեղարդը⁸. «...եւ գայ [Թադեոս] առ Սանատրուկ առ ստորոտով լերինն Տիւրոսի եւ գտանէ վայելուչ տեղ մի հարաւային կողմանէ եւ էր անդ ծառ մի եղերդրտի եւ եդ անդ զիւզն աստուածային հրամանաւ Սուրբ Հոգւոյն եւ աղօթիւք հարեալ զգեղարդն բղխեցոյց ի տեղւոջէն աղբիւր գեղեցիկ եւ յոյժ յորդ եւ խիստ սառն եւ կայ մինչեւ այսօր ի փառս Աստուծոյ...»⁹: Այնուհետեւ Թադեոս առաքյալը շարունակում է ճանապարհը դեպի Արտազ, որտեղ եւ նահատակվում է: Յուզի սրվակն այդտեղ պահված է մնում մինչեւ Հայոց դարձը: Երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից վերադառնում է Հայաստան, Տարոն աշխարհում հիմնում է Մշո Ս. Կարապետ վանքը, ինչպես նաեւ ամփոփում է Ս. Հովհաննես Մկրտչի ու Ս. Աթանազիների մասունքները¹⁰: Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսնում է մի լույս, որը կամա-

⁵ ՄՄ ձեռ. 2547, Թերթ 169ա (հմմտ. Վ. ԴԵԻՐԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 243):

⁶ ՄՄ ձեռ. 2547, Թերթ 169բ (հմմտ. Վ. ԴԵԻՐԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 243):

⁷ Ավանդության համաձայն այս ծառը տնկել է մի արծիվ եւ այն ամբողջ տարին կանաչ է ու տերեւալից: Տե՛ս ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 95:

⁸ Ս. Գեղարդն այն նիզակի սայրն է, որով հռոմեացի զինվորը խոցեց խաչին գամված Հիսուս Քրիստոսին: Ըստ եկեղեցական ավանդության՝ Գեղարդն առաջին դարում Հայոց աշխարհ է բերել Քրիստոսի տասներկու առաքյալներից Ս. Թադեոսը: Այդ սուրբ մասունքը դարեր շարունակ պահվել է պատմական Հայաստանի տարբեր վանքերում: ԺԳ. դարում Գեղարդը Պոռչյան իշխանական տան սեփականությունն էր: Երկար ժամանակ այն պահպանվում էր Այրիվանքում կամ Գեղարդավանքում: ԺԸ. դարի երկրորդ կեսին Ս. Գեղարդը բերվել է Մայր Աթոռ եւ մինչեւ օրս պահվում է համայն հայության հոգեւոր կենտրոնում: Տե՛ս ՄԱՆԻԱ ՂԱԶԱՐԵԱՆ, Սրբալույս միւռոնի օրհնութեանը վերաբերող սրբազան առարկաներ, էջմիածին, 1990, էջ 35—41:

⁹ ՄՄ ձեռ. 2547, Թերթ 171ա (հմմտ. Վ. ԴԵԻՐԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 244):

¹⁰ Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած վանքը կոչվում է նաեւ «Սուրբ Շիշ իւզոյ վանք», քանի որ ավանդության համաձայն՝ Բարդուղիմեոս եւ Թադեոս առաքյալներն իրենց հետ Հայաստան են բերել եւ եղրդի կամ եղրդուտի ծառի արմատի մոտ են պահել փյունիկյան

րաձեւ իջնում է այնտեղ, որտեղ եղրդենու տակ ամփոփված էր յուզն ու Ս. Գեղարդը. «Իսկ խնամարկութիւն Աստուծոյ յայտնեաց Սրբոյն Գրիգորի եւ նկատեալ տեսանէր հարաւոյ կողմ[ա]նէն, զի լոյս կայր առ ստորոտովն Տիրոսի լերինն: Զի լոյս կամարաձեւ իջանէր ի լերինն անդադար ի բազում աւուրս: Եւ յարուցեալ առնու ընդ ինքեան զսինքն եկեղեցւոյ զԱնտոն եւ Կրօնիդէս, փութով հասանէ ի տեղին եւ գտանէ զիւզն աստուածային եւ մեծաւ ուրախութեամբ փառս մատուցանէր Պարգետոյին»¹¹:

Ըստ այս վկայութեան՝ Հայոց մյուռոնն իր մեջ կրում է Մովսէս մարգարեի օրհնած օծութեան յուզը, որը, շնորհիվ Թադեոս առաքյալի, բերվեց Հայոց աշխարհ, եւ դրանից շուրջ երեք դար հետո մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը գտավ եւ այն խառնեց իր օրհնած մյուռոնին. «...Սուրբն Գրիգոր առնու ընդ իւր աստուածային սուրբ իւզն եւ բերեալ ի Սուրբ Աթոռն իւր ի լուսատրութիւն ազգիս հայոց: Եւ իւզն այն աստուածային ոչ պակասի եւ ոչ թերանայ մինչեւ ցայսօր վասն զի Հոգին Սուրբ է ի նմա եւ որք հաւատով կան առաջի սուրբ իւղոյն առնուն զխնդրելին իւրեան[ց]...»¹²: Մեր այսօրվա մյուռոնի մեջ առկա է հնագույն մովսիսական մյուռոնի մի մասը, ինչը տրված չէ աշխարհում ոչ մի եկեղեցու¹³:

Մովսէս մարգարեի կողմից պատրաստած յուզի՝ Թադեոս առաքյալի կողմից Հայաստան բերվելու մասին հիշատակություն կա նաեւ Եղրդուտի վանքի կոնդակում, որը թվագրվում է ԺԵ. դարով¹⁴: Կոնդակում, որը վերագրվում է Գրիգոր Ժ. Զալալբեկյանց հայրապետին (1443—1465), սկզբում համառոտ ներկայացվում է Եղրդուտի վանքի պատմությունը

ձեռագործ կանաչագույն շիշը, որի մեջ էր այն յուզը, որով օծել էր Մովսէսը մարգարեներին, Սամվելը՝ Դավթին, Մագդաղենացին՝ Քրիստոսին եւ Քրիստոսը՝ առաքյալներին: Վանքը կոչվում է նաեւ Եղրդուտի վանք, քանի որ վերոնշյալ յուզը եւ նրա հետ եղած մյուս սրբությունները՝ Կենաց փայտից մասունքը, Մարիամ Մագդաղենացու ճկույթը, Հովսեփ Աստվածահոր աջը եւ Հովսեփ Արիմաթացու բազուկը, առաքյալները Եղրդուտի ծառի տակ էին պահել: Տէս Հ. ՈՍԿԵԱՆ, Տարօն-Տուրուբերան վանքերը, էջ 94—95:

Վենետիկի Մխիթարյան հայրերից հայր Ներսէս Սարգիսյանը, ԺԹ. դարի առաջին կեսին ճանապարհորդելով Հայաստանում, եղել է նաեւ Եղրդենու վանքում եւ իր «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» աշխատության մեջ գրում է. «Առ որմովք մենաստանին արտաքոյ է մատուռն փոքրիկ եւ առ նմա ծառ Եղրդուտի, յորոյ անուն կոչի երբեմն եւ մենաստան ի հիշատակարանս գրոց՝ Եղրդուտի վանք»: Տէս Հ. ՆԵՐՍԻՍԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 236:

¹¹ ՄՄ ձեռ. 2547, Թերթ 172ա (հմմտ. Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 244):

¹² ՄՄ ձեռ. 2547, Թերթ 172ա-172բ (հմմտ. Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, նշ. աշխ. էջ 244—245):

¹³ Տէս ՊԱՐԳԵԻ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Հայերը եւ վախճանաբանությունը, Երեւան, 2014, էջ 9:

¹⁴ Տէս Հ. ՈՍԿԵԱՆ, Տարօն-Տուրուբերանի վանքերը, էջ 116:

եւ թվարկվում անտեղ պահվող սրբությունները, ապա խոսվում է այն մասին, որ Թադեոս առաքյալի կողմից բերված յուզը Մովսէս մարգարեի պատրաստած յուզն է. «Նախ ի սուրբ Շիշ իւղոյս, զոր Մովսէս օրհնեաց եւ օծեաց զմարգարէսն եւ զհաւանայս եւ զթագաւորսն: Եւ Սամուէլ մարգարէն օծ զԴաւիթ եւ զայլ մարգարէսն: Եւ կիմն պոռնիկ եհեղ ի վերայ զլխոյն Քրիստոսի եւ Յիսուս յետ խաչելութեան օրհնեաց եւ ետ յառաքեալսն եւ սուրբն Թադէոս բերեալ եղ աստ. ընդ նմին եւ զԱրծուաբեր սուրբ Նշանն, որ է [ի] կենաց փայտէն»¹⁵:

Թադեոս առաքյալի՝ Հայոց աշխարհ օծության յուզը բերելու մասին վկայություն կա «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուում՝ Վանական Վարդապետի անունով հայտնի թղթում՝ «Վանական Վարդապետի ասացեալ բան հավատալի ազգիս մերում» վերտառությամբ¹⁶: Վանական Վարդապետը գրում է, որ երբ Թադեոս առաքյալին վիճակվում է քարոզելու Հայոց աշխարհում, իր հետ բերում է Հիսուս Քրիստոսի կողմից օրհնված օծության յուզն ու աստվածամուկ Սուրբ Գեղարդը. «...ի վիճակել նմա յերկիրս Հայոց, տրտմեցաւ եւ ասաց. Երկիրն ցուրտ է եւ մարդիկքն բրտաբարք: Եւ ասացին, Մի՛ ընդդիմանար Հոգւոյն. եւ ետուն նմա զեղն աւծման՝ զոր Քրիստոս էր արհնել՝ աւգնական, եւ զգեղարդն եւ յայլ ազգ չկայ այս պարծանքս՝ մեր մեռոնս հանապազ եւ միշտ զնոյն շնորհ ունի»¹⁷:

Սուրբ մյուռոնը, Գրիգոր Լուսավորչից սկսած, սերնդեսերունդ եկել ու հասել է մեզ: Երբ նոր մյուռոն է օրհնվում, հին մյուռոնը միշտ խառնվում է նորին, եւ այսպես Ս. Գրիգոր Լուսավորչի օրհնած մյուռոնի իսկությունից մի մասնիկ շարունակաբար փոխանցվում է Հայոց Եկեղեցու ներկա մյուռոնին: Այս մասին վկայում է Անանիա Սանահնեցու երկերից մեկը. «...յորժամ արհնեմք զմիւռոնն, զհին մեռոնն ի նորն խառնեմք եւ այնպէս արհնեմք, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ եւ ի սրբոյն Սահակայ մինչեւ ցայսաւր նոյն միւռոնն կատարի եւ զայ մինչեւ ցայժմ, ընդունելով միշտ զընորհս Հոգւոյն Սրբոյ...»¹⁸: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ Մյուռոն օրհնության ժամանակ «սովորութիւն է նաեւ մէկ երկու լիտր հին միւռոն

¹⁵ Նույն տեղում, էջ 109:

¹⁶ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 533—535:

¹⁷ Նույն տեղում, էջ 533:

¹⁸ ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՅԻ, Աստվածաբանական երկեր, աշխ. Հ. Քյոսեյանի, էջմիածին, 2000, էջ 302:

խառնել նոր պատրաստուած միտոնին, որպէսզի սոյն կերպով միշտ հինը նորին կապուած մնայ: Ժողովրդական ասանդութիւն է, թէ այս խառնուրդի շարունակութեամբ այժմեան միտոնը կը կցուի Յիսուսէ օրհնուած ձեթին հետ, զոր առաքեալներ Հայաստան բերին իրենց հետ....»¹⁹:

Հայոց մյուռոնի մասին պահպանուել են մատենագրական բազմաթիւ հիշատակութիւններ, որոնցում բազմիցս նկարագրուած է մյուռոնի հրաշագործ գորութիւնը: Մեզ հասած պատմական վկայութիւնների համաձայն Հայոց եկեղեցում մյուռոնի գործածութիւնը սկսւում է Դ. դարից: Առաջին վկայութիւնը մեզ հաղորդում է Ագաթանգեղոսը՝ գրելով. «Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սփանչելի երեւեալ յԱստուծոյ. զի գետոյ առեալ ջուր՝ գետոյն՝ անդէն դարձան ընդ կրուկն: Եւ լոյս սաստիկ երեւեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ եւ եկաց ի վերայ ջուրց գետոյն, եւ ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին. եւ այնչափ ծագեաց լոյսն, մինչեւ արգելոյր զհաւաքայթս արեգականն եւ նուաղեցուցանէր: Եւ իւղ օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն ջուրջ զմարդկան խաղայր»²⁰: Այստեղ պատմիչը ներկայացնում է մյուռոնի առաջին գործածութիւնը Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ:

Մյուռոնի եւ Մյուռոնօրհնութեան մասին հիշատակութիւն կա նաեւ Ժ. դարի պատմիչ Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց» երկում: Մովսէս Բ. Եղիվարդեցի հայրապետի (574–604) վախճանվելուց հետո նոր կաթողիկոսի ընտրութիւնը քաղաքական անբարենպաստ կացութեան պատճառով ձգձգվում էր: Սակայն Վրկանաց մարզպան Սմբատ Բագրատունու ջանքերով հնարավորութիւն է ստեղծվում կազմակերպելու կաթողիկոսի ընտրութիւնը: Կաթողիկոս է ընտրվում Աբրահամ Ա. Աղբաթանեցին (607–615): Պատմիչը, հանգամանալից ներկայացնելով կաթողիկոսի ընտրութեան մանրամասները, գրում է նաեւ, որ Մովսէս հայրապետի

¹⁹ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Հայոց եկեղեցին, Երեւան, 1993, էջ 168:

²⁰ Ա. ԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Հայոց պատմութիւն, աշխ. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, էջ 464: Այդ մասին գրում է նաեւ պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» երկում. «Եւ առեալ սրբոյն Գրիգորի իջուցանէ զնոսա ի ձորն Այծաւանայ եւ մկրտեաց զնոսա քրիստոսազարդ օծմամբն՝ առնելով հաւատացեալս Սուրբ Երրորդութեանն: Եւ երեւցոյց Տէր լոյս մեծ ի սեան հրեղէնի ի վերայ մկրտելոցն. եւ կացեալ երիս ժամս լուսոյն»: Տէս ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Պատմութիւն Տարօնոյ, 1941, Երեւան, էջ 105–106: Տէս նաեւ ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, Վաղարշապատ, 1871, էջ 101: Տէս նաեւ ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՅԻ, Տեղագիր վերին Հայոց, (Մանր ժամանակագրութիւններ XIII–XVIII դդ., հտ. Ա, կազմեց՝ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, Երեւան, 1956, էջ 557:

վախճանումից հետո նոր մյուռոն չէր օրհնվել եւ կաթողիկոսական աթոռի տեղապահ Վրթանես վարդապետը բաշխել էր թեմերին կաթողիկոսարանում եղած մյուռոնը: Իսկ արդեն կաթողիկոսի ընտրությունից հետո, «հայցեալ ի Հայրապետէն իւրեանց՝ օրհնեալ իւր օծութեան, եւ տալ նոցա, այսինքն զՄիտոնն»²¹: Ի պատասխան ժողովականների՝ Աբրահամ կաթողիկոսը օրհնում է մյուռոնը. «Ապա այնուհետեւ մտեալ ի պաշտօն գիշերոյն՝ սաղմոսիւ եւ օրհնութեամբ՝ եւ երգօք հոգեւորօք ըստ խորհրդոյ ատուրն, եւ կարդացմամբք ըստ պատշանի խորհրդոյն հանէին զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ, եւ զտիւ ողջոյն տփնեալ՝ մինչեւ կատարեցաւ խորհուրդն ամենայն ի փառս Աստուծոյ: Ապա ի միւսում ատուրն բաշխէ Հայրապետն ամենեցուն զիւրն օրհնութեան»²²:

Մյուռոնի մասին հիշատակություն հանդիպում ենք նաեւ Գրիգոր Մագիստրոսի թղթերից մեկում²³: Հեղինակը խոսելով թոնդրակեցիների մասին, որոնք չէին ընդունում մյուռոնով օծումը, գրում է. «...եւ զիւրն սրբազան, որ ի կատարապետողէ անտի բաշխի, խառնեալ իմն արհամարհելով զնա, եւ ծաղր առնելով, կատականս առնեն...»²⁴: Այստեղ ակնհայտորեն տեսնում ենք թոնդրակեցիների արհամարհական վերաբերմունքը մյուռոնի նկատմամբ:

Մյուռոնի հանդեպ նման վերաբերմունքի մասին հիշատակություն կա Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» պատմագրական երկում: Պատմիչը *ԽԸ*:՝ «Վասն Յուրայ բերդին աներելոյն, եւ նզովիցն որ այլ ոչ շինին» գլխում ներկայացնում է 915-ին ցուրաբերդցիների կողմից Տաթևի վանքի ավերումը: Սրանք բազմաթիվ ավերածություններ են կատարում, որոնց մասին հանդիմանական խոսքեր է ասում եւ նկարագրում ողջ եղելությունը. «Եւ յաւուր միում եկեալ ի գիշերի յեղակարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին եւ զգործատներն եւ զյարկսն

²¹ ՈՒՆՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Հայոց, հատուած Երկրորդ, Վաղարշապատ, 1871, էջ 67:

²² Նույն տեղում, էջ 68:

²³ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին թոնդրակցանների կատաղի թշնամին էր: 1048 թ. Կոստանդին Թ. Մոնոմախ կայսրը նրան նշանակում է Վասպուրականի, Տարոնի, Մանազկերտի, Արճեշի, Բերկրիի եւ Միջագետքի գերագույն կառավարիչ: 1051–1054 թթ. ընթացքում հալածանքներ է սկսում թոնդրակեցիների դեմ: Ավելի մանրամասն տես ԵՐԱՆԻ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Միջնադարյան աղանդների ծագման եւ զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 173–184:

²⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխ. Կ. Կոստանեանցի, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 154:

կրօնաւորաց. եւ խնդրէին զեպիսկոպոսն զի սպանցեն, եւ ոչ գտին. ապա զոմանս ի ծերոցն սրով հարին եւ զայլսն փախստական արարին. զոր ինչ գտին ինքեանք՝ առեալ գնացին ի բերդն. տարան եւ արծաթի սափորով զմեռոնն եւ վայրեցին ընդ քարն»²⁵:

Մյուռոնի հրաշագործութեան մասին վկայում է պատմիչ Արիստակէս Լաստիվերցին: Ըստ պատմիչի վկայութեան՝ Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսը (1019–1058) երբ Տրապիզոն էր գնացել՝ Վասիլ Բ. կայսեր հետ տեսակցելու, Աստվածհայտնութեան տոնին նրանից հրաման է ստանում Զորօրհնէք կատարելու. «Եւ ի հեղու հայրապետին զտէրունական իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ նառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն. զոր տեսին առ հասարակ ամենեքեան, եւ փառաւորեցին զԱստուած եւ բարձրացաւ եղջիր հաւատոյս մերոյ: Եւ եւս առաւել պատուով մեծարեալ ի թագաւորէն»²⁶: Այս պատմութեան ավելի ընդարձակ նկարագրութիւնն առկա է Կիրակոս Գանձակեցու երկում: Աստածահայտնութեան տոնին «եւ ըստ նախանձուն, զոր ունեին յոյն ընդ հայս, կացուցին զհայրապետն Պետրոս իւրով ժողովրդովն ի վերոյ, եւ ինքեանք ի ներքոյ կողմանէ գետոյն, այսպիսի մտօք, զի թեառակատար համարէին զօրհնութիւնն հայոց, զի ինքեանք ի ներքոյ կալով՝ զօրհնեալն ի հայոց, վերստին օրհնեցեն»²⁷: Հույները նաեւ վարժեցրել էին մի սպիտակ աղաւնի, որ երբ իրենք օրհնեին ջուրը այն, իբրեւ Սուրբ Հոգու նշանակ իջնէր ջրի վրա: Սակայն երբ Պետրոս հայրապետը օրհնում է. «դարձաւ ջուր գետոյն ի վեր, եւ լոյս սաստիկ ծագեաց, որ նուաղեցուցանէր զնառագայթս արեգական»²⁸: Երբ վարժեցված աղաւնին իջնում է ջրերի վրա, հանկարծ մի արծիւ, սուրալով ներքեւ, ճանկում է աղաւնուն եւ թռչում: Սրբալույս մյուռոնի հեղմամբ՝ գետը հետ դարձնելու համար է, որ Պետրոս հայրապետը ստանում է «Գետադարձ»՝ գետը ետ դարձնող մականունը²⁹:

²⁵ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 247:

²⁶ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցույ, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 32:

²⁷ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՋԱՆՅԱՆԻ, Երեւան, 1961, էջ 94: Տէս նաեւ ՂԱԶԱՐ ՃԱՀԿԵՑԻ, Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 595–596: Տէս նաեւ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐԱՍՏԱՅԻ, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխ.՝ Բ. Զուգասզյանի, Երեւան, 1974, էջ 33:

²⁸ Նույն տեղում, էջ 94:

²⁹ Տէս ՄԱՆՎԵԼ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հայ հոգեւորականների պատվանունների եւ մականունների բացատրական բառարան, Ս. էջմիածին, 2018, էջ 29:

Մյուսոսնի մասին հաջորդ մատենագրական հիշատակությունը հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին: Բագրատունյաց թագավորության անկումից հետո Մոնոմախ կայսրը ցանկանում էր վերացնել նաեւ Հայոց հայրապետական աթոռը, այդ իսկ պատճառով իր մոտ է կանչում Պետրոս Գետադարձ հայրապետին: Հայրապետը, հասկանալով կայսեր նպատակը, «խորհեցաւ ի միտս իւր եւ ասէ. «Գուցէ այլ ոչ թողուն զիս Հոռոմֆ ելանել յարեւելս», անուանեաց զաթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին զտէր Խաչիկ: Նոյն օրինակաւ խորհեցաւ եւ յաղագս միւռոնին օրհնեալ ձիթոյն՝ օծմանն հաւատոյ Հայաստանեայց, պահեաց յԱհուր գետն երկաթի ամանօք իբրեւ լիտր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հոռոմոցն. եւ կայ պահեալ մինչեւ ցայսօր ժամանակի»³⁰:

1441 թ-ին՝ հայրապետական աթոռի հաստատումից եւ Կիրակոս Ա. Վիրապեցի կաթողիկոսի (1441–1443) ընտրությունից հետո, տեղի է ունենում մյուսոսնի հանդիսավոր օրհնություն: Այս մասին Թովմա Մեծփեցին իր «Յիշատակարան»-ում գրում է. «...եւ հասաք ի սուրբ Պենտէկոստն՝ յաւուր գալստեան եւ իջման Հոգւոյն Սրբոյ յառաքեալսն: Եւ մեծահանդէս ժողով արարեալ՝ օրհնեցաք զաստուածագործակ մեռոնն, եւ բաժանեցաք ընդ ամենայն ազգս Թորգոմեան»³¹:

Ժէ. դարի պատմիչ Գրիգոր վրդ. Դարանաղցին իր «Ժամանակագրութիւն» երկում հիշատակություն ունի Մյուսոսնօրհնության մասին: Հստայս վկայության՝ 1605 թ. տեղի է ունեցել Մյուսոսնօրհնություն: Այդ ժամանակ Գրիգոր Դարանաղցին գտնվում էր Սաղմոսավանքում եւ նրան կանչում են մասնակցելու. «մեք էաք յայնմ ժամանակին բնակութեամբ ի լուսազարդ անապատին Սաղմոսավանայ, մեռոնի օրհնել կոչեցին զմեզ ի Սուրբ էջմիածին եւ ելեալ գնացաք ի կոչն»³²: Նաեւ գրում է, որ Մյուսոսնօրհնությանը մասնակցել են չորս վարդապետներ՝ Հովհաննես Վանեցին, Գրիգոր Սաղմոսացին, Կիրակոս վարդապետը եւ ինքը. «նուաստս եւ տրուպս ամենայն վարդապետաց՝ Գրիգորս Կամախեցի», ինչպես նաեւ. «բազմամբոյս եւ աշխարհագումար ժողովովք եպիսկոպոսիք բազմօք, քահանայիք եւ կրօնատրօք եւ անհամբեր ժողովրդօք եւ մեծամեծ իշխանօք ի տան-

³⁰ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, Ժամանակագրություն, աշխ. Հր. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 114:

³¹ ԹՈՎՄԱ ՄԵՇՓԵՑԻ, Յիշատակարան, հրատ. պատ. Արարատ քնյ. Պողոսեան, էջմիածին, 2017, էջ 80:

³² Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 52:

կաց՝ ի տեսութիւն վասն սփանչելի եփեցութեան եռացման սուրբ մեռոնին առանց հոյ եւ կայծականց ի վերայ բեմին առաջի սրբոյ զեմարանին, ի վերայ եօթնատակ սփռեալ խալոց»³³: Այնուհետեւ գրում է, որ եղանակը սաստիկ ցուրտ էր, այն աստիճան, որ «կրնտէաք զատամունս մեր ի սաստիկ ցրտասառոյն»³⁴: Եւ երբ լցնում են հին մյուռոնը նորի վրա եւ Լուսավորչի Աշով օրհնում, այդ ժամանակ «ի յեռացման եղեալ եւ գորշին ի վեր եղեալ որպէս զմէք»³⁵, ապա ինքը մոտեցնում է ցրտից սառած ձեռքերը կաթսային, որպէսզի տաքացնի: Կաթսային է մոտենում նաեւ «տանկաց մեծն, որ Դով Աղասին էր՝ Տաութ աղայ անուն, եկն ի փորձել զսուրբ մեռոնն, մերձեցոյց զձեռն իւր արտաքոյ ի կող պղնձին, նա տաքացաւ ձեռն որպէս ի թոնրի եւ յոյժ հիացման եղեալ, ձայնեաց ի լուր ամենեցուն ասելով թէ՝ հաւատացի զոր ինչ լսեաք վասն մեռոնին»³⁶:

Մեկ այլ հիշատակութիւն Մյուռոնօրհնութեան մասին պահպանվել է Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն» երկում: Մելքիսեթ կաթողիկոսը³⁷, ինչք եւ արծաթ ձեռք բերելու համար, իր խորհրդակիցների հետ վճռում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մյուռոնօրհնութիւն կազմակերպել: Եւ որպէսզի տարբեր երկրներից բազմաթիվ մարդիկ հավաքվեն, ասում են, որ Մովսէս վարդապետը պետք է օրհնի մյուռոնը: Սակայն Մովսէս վարդապետն անգամ եպիսկոպոսութեան աստիճան չունէր, այդ պատճառով հրաժարվում է, սակայն նրա աշակերտները, քահանաները եւ ժողովուրդը թախանձում են, որ ստանա եպիսկոպոսական աստիճան: Եւ Մելքիսեթ կաթողիկոսը Ավագ Երկուշաբթի օրը Ս. Անանիա առաքյալի դամբարանում նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Դրանից հետո վերադառնում են Էջմիածին «...եւ ամենայն եկեղեցականք, եւ աշխարհականք եւ յաւագ հինգշաբաթ ատուրն օրհնեցին մեռոն. յետ օրհնութեան մեռոնին վաղվաղակի արձակեցին զժողովն, քանզի ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողովուրդն՝ որոց առեալ զօրհնութիւն

³³ Նույն տեղում, էջ 52–53:

³⁴ Նույն տեղում, էջ 53:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Դավիթ Դ. Վաղարշապատեցի կաթողիկոսը (1590–1629) Մելքիսեթ Գառնեցուն աթոռակից կաթողիկոս է օծում, որպէսզի, ինչպէս Առաքել Դավրիժեցին է ասում, լինի իրեն օգնող, բայց եղավ խանգարիչ եւ հակառակորդ, ձգտելով իշխանութեան մեջ առաջինը լինելու: Պատմիչը հավելում է նաեւ, որ Դավիթ Դ. հայրապետը ստիպված էր նրան ձեռնադրել, քանի որ իշխողներին կաշառել էր: Տէն Հայ Եկեղեցու սուրբ կաթողիկոսները, հրատ. պատ. Արարատ քհնյ. Պօղոսեան, Վաղարշապատ, 2017, էջ 181:

սրբոյ մեռոնին, եւ զէջմիածնի, զնացին ի տեղիս իւրեանց»³⁸: Մյուռոնի մասին եւս մեկ վկայություն կա ի. գլխում: Հստ Դավրիժեցուն՝ ավանդության համաձայն Հայոց հայրապետը երեք տարին մեկ Մայր Աթոռից նվիրակ է ուղարկում, որը շրջում է համայն ազգի մեջ, մյուռոն է նվիրում եւ ժողովրդի ողորմության տալիքը բերում է Ս. Աթոռ: Փիլիպպոս Ա. Աղբակեցի կաթողիկոսը (1632–1655) Դավրիժեցուն նույն այս խնդրով ուղարկում է մյուռոն նվիրելու: Ամասիայում նա հանդիպում է Ներսես վարդապետին, որը հետագայում օծվում է Սսի կաթողիկոս: Այդ հանդիպման ժամանակ Ներսես վարդապետը հարցնում է Դավրիժեցուն, թե Մյուռոնը որ սրբություններով է օրհնվում: Դավրիժեցին պատասխանում է. «զԱջն սրբոյն Գրիգորի մեռոյ Լուսաուրչին, եւ զԱջն Թադէոսի սրբոյ առաքելոյն, եւ սուրբ նշանն, որ ի կենաց փայտէն, եւ Զգեղարդն, որ մխեցաւ ի կողս Տեառն»³⁹: Հստ այս վկայության՝ Հայոց մյուռոնն օրհնվել է երեք ավանդական սրբություններից զատ նաեւ Ս. Թադեոս առաքյալի Աջով:

Հայոց մյուռոնի մասին հիշատակություն ունի նաեւ Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրություն» աշխատության մեջ: Հստ Զաքարիա Ագուլեցուն՝ 1665 թ. Երուսաղեմի միաբան Եղիազարը⁴⁰, ցանկանալով մյուռոնի օրհնությունը Երուսաղեմում կազակերպել, գնում է Ստամբուլ՝ սուլթան Մահամադի մոտ, եւ փորձում խոչընդոտել Սուրբ էջմիածնից նվիրակների մուտքը Օսմանյան կայսրություն. «...թվին ՌժԺԴ. Երուսաղէմայ Եղիազար ոմն վարդապետ դուրս եկաւ, եկաւ Հստամբուլ, Սուլթան Մահամադ թագաւորէն ամբր հանեց, թէ էջմիածնայ թէ մէռոն, թէ նուիրակ, թէ սեւայգլուխ չի գան Ալի-Օսմանայ երկիրն...»⁴¹: Շնորհիվ Հակոբ Դ. Զուղայեցու (1655–1680)՝ Եղիազար վարդապետի ծրագիրը իրականություն չի դառնում. «...այս պատճառէս էջմիածնայ առաջնորդ Յակոբ կաթողիկոսն գնաց Հստամբուլ, անգաւ Սուլթան Մահամադ թագաւորն. յին գիր կէր թագաւորաց, նշանց ետուր, ղաբուլ արաւ, թէ ինչպէս առաջ կէր, այնպէս լինի»⁴²:

³⁸ Ա.ՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՅԻ, Գիրք պատմութեանց, աշխ. ի. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 246–247:

³⁹ Նույն տեղում, էջ 327:

⁴⁰ 1681 թ. վերոհիշյալ Եղիազար վարդապետը դառնում է Ամենայն Հայոց կաթողիկոս (Եղիազար Ա. Այնթափցի 1681–1691):

⁴¹ Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երեւան, 1938, էջ 66:

⁴² Նույն տեղում:

Հայոց Մյուռոնի մասին մատենագրական տեղեկություն է պահպանվել նաեւ Աբրահամ Գ. Կրետացի հայրապետի (1734—1737) «Պատմագրութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին պարսից» երկում: Ականատեսի աչքերով հեղինակը ներկայացնում է Սուրբ Ծննդյան տոնին Ջրօրհնեքի արարողությունը, որը կատարվում է. «յեզրն Երասխայ... հեղաք զսուրբ մեռոնն ի ջուրն»⁴³: Պատմիչի հաղորդմամբ՝ Ջրօրհնյաց կարգը կատարվում է բազմուսթյան ներկայությամբ: Արարողությանը ներկա էին «...Երեւանայ Քալանթար Մէլիքշանն, Մէլիք Յակոբշանն, եւ Մէլիք Մկրտումն: Տուգախու Մէլիք էկէնն... այլ եւ Երեւանայ, եւ Արարատեան Քատխուտայքն, եւ Բանակեալ Հայքն, եւ Երեւանայ աղաներն, եւ այսնէրն. Շէխ-իսլամն, Ղազին եւ Խանին Իզպաշիքն՝ աւելի քան զԳՃ. մարդ՝ հայ եւ թուրք»⁴⁴: Վերջում հեղինակը ներկայացնում է պարսիկների վերաբերմունքը դեպի Հայոց Սրբալույս մյուռոնը. «...զի պարսիկքն առնէին ի մեռոնախառն ջրոյն, եւ օծանէին զերեսս իւրեանց»⁴⁵:

Պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ փորձեցինք ներկայացնել Հայոց Եկեղեցում կիրառվող մյուռոնի ծագմանն առնչվող ավանդությունները, ինչպես նաեւ ի մի բերել հայ մատենագրության մեջ պահպանված գրեթե բոլոր կարեւորագույն հիշատակությունները՝ ցույց տալու մյուռոնի բժշկող եւ մաքրագործող զորությունը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մյուռոն, Ջրօրհնեաց կարգ, միւռոնախառն ջուր, նուիրակ, Չաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Աբրահամ Կրետացի, Հակոբ Ջուղայեցի:

РЕЗЮМЕ

Изучая исторические источники, мы попытались представить предания о происхождении мюрона (мира) в армянской среде, а также библиографические

⁴³ Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 31:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

справки о его благословении и употреблении (IV–XVIII вв.). Согласно историческим источникам, в Армянском мйроне содержится часть освященного пророком Моисеем елея для помазания, что придает ему большую силу. В библиографических упоминаниях в основном говорится о чудодейственной силе Армянского мйрона, но случалось также, что было неуважительное отношение к мйрону, в частности у тондракийцев и павликиан.

SUMMARY

By studying the historical sources, we have tried to present the traditions about the origin of the Holy Myron in the Armenian reality, as well as the bibliographic references regarding the use and blessing ceremonies of the Holy Myron (4th–18th centuries). According to historical sources, the Armenian Holy Myron contains a part of the anointing oil blessed by Prophet Moses, which gives it greater power. The bibliographic references about the Holy Myron mainly talk about the miraculous power of the Armenian Holy Myron, but there were also cases of a contemptuous attitude towards it, in particular, by the Tondrakians and Paulicians.



ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԵՆ

ԿՐՈՆԻ ԱՆՈՒՆՔՆԵՐԸ

Սկիզբը՝ 2022 թ. թիվ 2., է., 2023 թ. թիվ Բ.

ԳԼՈՒԽ Գ. ՎԵՐՋԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

«Ամենակարեւորն այն է, ինչ անտեսանելի է»¹:
Անտուան Սենտ-Էքզյուպերի

Այսպիսով, մենք կարող էինք համոզվել, որ աշխարհի ճանաչողությունը երեք հիմնական ուղղություններով ընթացող բարդ ու բազմակողմանի մի գործընթաց է: Եթե ենթադրենք, որ մարդը գործ ունի ոչ թե մտացածին իրողությունների, այլ՝ իրականության հետ, ապա ինքնաբերաբար ծագում է իմացության երեք տեսակներին համապատասխանող կեցության երեք կերպերի վերաբերյալ միտքը: Սակայն դրանցից (նկատի ունի իմացության երեք տեսակները՝ ծնթ. թրգմ.) ձրն է մարդկանց առավել մոտեցնում վերջնական իրականությանը²:

Այստեղ ակնհայտորեն բացառված է էմպիրիկ (փորձառական) ճանապարհը, քանի որ այն խորագնին կերպով չի ներթափանցում երեւույթների մակերեսից այն կողմ: Մտահայեցական մտածողությունը կարող է ավելին բացահայտել, սակայն այն իր բնույթամբ կենդանի հպում չի

¹ Սույն գրքի հեղինակը վերոնշյալ բնաբանը վերցրել է ֆրանսիացի գրող Ա. Սենտ-Էքզյուպերի «Փոքրիկ Իշխանը» (1943 թ.) պատմվածքից, որն աննշան կերպով տարբերվում է թե՛ ֆրանսերեն բնօրինակից եւ թե՛ 1958 թվականին Մոսկվայում հրատարակված ռուսերեն թարգմանությունից, ուստի շարադրանքում նույնությամբ պահպանելով եւ թարգմանելով հեղինակի վկայաբերած մեջբերումը՝ այստեղ ներկայացնում ենք հղման ֆրանսերեն բնագրի համապատասխան հատվածը. «L'essentiel est invisible pour les yeux» (տե՛ս ANTOINE DE SAINT-EXUPÉRY, Le Petit Prince, Gallimard, 1946, գլ. XXI, էջ 76, 78), այսինքն՝ «էականն անտեսանելի է հայացքի համար» (տե՛ս ԱՆՏՈՒԱՆ ԳԼ ՍԵՆՏ-ԷՔԶՅՈՒՊԵՐԻ, Փոքրիկ Իշխանը, Երեւան, 2018, գլ. 21-րդ, էջ 97՝ ծնթ. թրգմ.):

² Հեղինակը նկատի ունի Աստծուն կամ՝ աստվածային, հոգեւոր իրականությունը (ծնթ. թրգմ.):

ապահովում ձանաչելիի հետ: Աստծու գաղափարը ոչ այլ ինչ է, քան հասկացություն՝ Կեցությունից վերացարկված վերացական ինչ-որ բան:

Ժամանակին Պիեռ Սիմոն Լապլասն ասել է, որ ֆիզիկայի՝ իր տեսությունների [կառուցման] համար նա «Աստծու վարկածի»³ կարիքը չունի: Սակայն նույնիսկ եթե նա այլոց պես ապավիններ դրան, միեւնույն է, անսահմանորեն հեռու կմնար ճշմարիտ աստվածաճանաչողությունից, քանզի հավատի համար Աստված ամենեւին էլ «վարկած» չէ:

Կրոնի եւ բարոյականության խնդրին նվիրված իր աշխատության մեջ Բերգսոնը մատնացույց է արել, որ հավատի ակունքներն սկիզբ են առնում ոչ թե բանական մտահայեցողություններում, այլ՝ դրա հանճարների ու մարգարեների ներըմբռնողական բացահայտումներում⁴: Եւ իսկապես, եթե նույնիսկ բնությունը ճանաչելիս՝ մարդը մեծապես ապավինում է ներըմբռնողությանը, ապա այն առավելապես կարելու է ինքնին Կեցության էությունը վերաբերող ոլորտում: Դեռեւս միջնադարյան մեծ մտածող Թոմաս Աքվինացին է ասել, որ եթե մարդու ուղին առ Աստված անցներ միայն փիլիսոփայական, վերացական մտածողության միջով, ապա հավատքը կդառնար ողորմելի փոքրամասնության բախտաբաժին: Գործնականում մենք տեսնում ենք, որ կրոնականությունը հատուկ է թե՛ անկիրթ հնդիկ գյուղացուն, թե՛ արդի գիտության գագաթնակետին կանգնած եւրոպացի գիտնականին: Սույնը տեղի է ունենում հենց այն պատճառով, որ հոգեւոր իմացությունը կենդանի ներըմբռնողության արդյունք է:

Ընդհանուր առմամբ, կրոնական փորձառությունը կարելի է սահմանել որպես վերապրում՝ կապված մեր կյանքում, ողջ մարդկային կեցության մեջ եւ բովանդակ տիեզերքում ինչ-որ Բարձրագույն Սկզբի

³ Ֆրանսիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս եւ աստղագետ Պիեռ Սիմոն Լապլասն այս խոսքերն արտաբերել է իր աշակերտի՝ Նապոլեոն Բոնապարտի հետ ունեցած զրույցի ընթացքում. «Ես շնորհավորեցի նրան [այսինքն՝ Լապլասին] իր աշխատության հրապարակման առթիվ եւ հարցրեցի, թե ինչու է Լապլասն մոտ պարբերաբար կրկնվող «Աստված» բառն ընդհանրապես բացակայում նրա երկից: «Այն պատճառով, — պատասխանեց նա, — որ ես այդ վարկածի կարիքը չեմ ունեցել» [Հմմտ. բն.՝ «Je n'ai pas eu besoin de cette hypothèse»]» (առավել մանրամասն տես F. ANTOIN, Mémoires, Paris, 1825, t. 1, էջ 282): Հավանաբար, խոսքը վերաբերել է Լապլասի «Երկնային Մեխանիկա» աշխատությանը, որը նա երկու անգամ՝ 1799 թ. հոկտեմբերին, իսկ հետո՝ 1802 թ. նոյեմբեր ամսին, ուղարկել է Նապոլեոն Բոնապարտին (տես NAPOLEON I, Correspondance, Paris, 1861, vol. 6, էջ 1, եւ vol. 8, էջ 110: Հմմտ. տես նաեւ К. В. ДУШЕНКО, Всемирная история в изречениях и цитатах, Москва, 2008, էջ 245՝ ծնթ. թրգմ.):

⁴ SÉAN H. BERGSON, Les deux sources de la morale et de la religion, Paris, 1969, էջ 101:

իրական ներկայությամբ զգայության հետ, որն ուղղորդում է իմաստավորում է ինչպես տիեզերքի, այնպես էլ մեր սեփական գոյությունը: Այս զգացողությունը տրվում է անմիջական «տեսողունակության» գործադրմամբ, որը լի է այնպիսի ներքին վստահությամբ, ինչպիսին հատուկ է սեփական «ես»-ի տեսլականին: Եւ միայն բանական իմաստավորման միջով անցնելով՝ իր իսկ բնույթով աննկարագրելի սույն փորձառությունը բյուրեղանում է հասկացություններում եւ խորհրդանշաններում:

Հեղինական աշխարհի նշանավոր փիլիսոփաներից մեկը՝ Պլոտինոսը, վերոնշյալի առնչությամբ ասել է հետեւյալը. «Երբ մենք տեսնում ենք Աստծուն, տեսնում ենք Նրան ո՛չ թե բանականությամբ, այլ՝ առավել բարձր ինչ-որ բանով, քան բանականությունն է»⁵: Առանց այդ կենդանի մտահայեցության եւ կենդանի հավատի Աստծու մասին յուրաքանչյուր պատկերացում վերածվում է անշունչ ուրվագծի:

* * *

Ամերիկացի հոգեբան Ուիլյամ Ջեյմսը կրոնական փորձառության բնույթին ու առանձնահատկություններին նվիրված կարեւոր մի ուսումնասիրություն է կատարել: Իր իսկ խոստովանությամբ, չունենալով անձնական խորհրդապաշտական շնորհալիություն՝ միստիկական ներմբռնողությանը նա մոտեցել է որպես անաչառ հետազոտող: Ջեյմսը «հոգեբանական փաստաթղթերից» կազմված բազմաբովանդակ նյութեր է հավաքել, իսկ իր «կրոնական փորձառության բազմազանությունը» գրքում շատագուցակ է կրոնական արժեհամակարգը⁶:

Նրա վկայակոչած փաստաթղթերում կան տարբեր մարդկանց՝ սեփական կրոնական վերապրումները տպավորելու, արտացոլելու փորձերի հիանալի օրինակներ: Միեւնույն ժամանակ, նյութերի ընտրության հարցում Ջեյմսը չի սահմանափակվել ո՛չ տարածությամբ, ո՛չ էլ՝ ժամանակով:

⁵ СЕУ ПЛОТИН, Избранные Тракаты: в 2 томах, т. 2 (кн. VI), Москва: РМ, 1994, VI, 9, 10 (ծնթ. թրգմ.):

⁶ СЕУ W. JAMES, The Varieties of Religion Experience: a study in Human Nature, London, 1902. *ուսերեն թարգմանությունը՝* У. ДЖЕЙМС, Многообразие религиозного опыта: исследование человеческой природы, пер. с франц., Москва, 1910: *Ուիլյամ Ջեյմսի աշխատությունների մասին առավել մանրամասն տե՛ս* Э. БУТРУ, Уильям Джеймс и религиозный опыт, Москва, 1908, եւ В. ЭРН, Размышления о прагматизме, в кн.: В. ЭРН, Борьба за Логос, Москва, 1911, էջ 1 շրնկ., *ինչպես նաեւ՝* Н. ШЕМЕЛИН, Религиозно-философские воззрения У. Джеймса, Харьков, 1911, ու Л. ШЕСТОВ, Логика религиозного творчества, Собрание сочинений, т. VI, Санкт-Петербург, 1911, էջ 291–304:

վերջինիս հավաքագրած վկայությունները պատկանում են տարբեր դարաշրջանների, երկրների ու ժողովուրդների մարդկանց: Դրանք պերճախոս կերպով վկայում են առ այն, որ կրոնական վերապրումի առանձնահատկությունը չի կարելի հանգեցնել մարդկային ոգու որեւէ այլ ոլորտին՝ ո՛չ բարոյականությանը, ո՛չ գեղագիտությանը, ո՛չ էլ՝ առանձին վերցված որեւէ զգացումին (օրինակ՝ վախին, հույսին եւ այլն): Ավելի ստույգ՝ այն կարելի է սահմանել որպէս ականածանքի զգացում: Համաձայն Ս. Բուլգակովի խոսքերի, կրոնական վերապրումը «մարդուն վկայում է մեկ այլ աստվածային աշխարհի իրականության մասին, բայց ոչ այն հանգամանքով, որ ապացուցում է դրա գոյությունը կամ զանազան փաստարկներով հավաստի դարձնում վերջինիս անհրաժեշտությունը, այլ այն իրողությանմբ, որ կենդանի, անմիջական կապ է հաստատում նրա ու կրոնական իրականության միջեւ, այն ցուցադրում նրան: Ճշմարիտ կրոնական ուղին բռնել է միայն այն մարդը, որն իր կենաց ճանապարհին իրապէս հանդիպել է Աստվածությանը, ում հասել է Նա, ում վրա հեղվել է Իր զորությանմբ հաղթողը»⁷: Դժվար, գրեթե անհնար է բառերով արտահայտել յուրաքանչյուր խոր վերապրում, հատկապէս՝ կրոնականը, այդուհանդերձ «հոգեբանական փաստաթղթերը» կարող են որոշակի լույս սփռել խորհրդապաշտական գիտակցության բնույթի վրա⁸: Ահա Ուիլյամ Զեյմսի աշխատության մեջ ներկայացված նմանատիպ մի վկայության բնորոշ օրինակ. «Հիշում եմ գիշերը եւ այն վայրը բլրի վրա, որտեղ իմ հոգին բացվեց Անսահմանի առջեւ: Դա երկուն՝ ներքին եւ արտաքին աշխարհների բուռն հանդիպում էր: Ներքին պայքարիցս կարծես մի խորխորատ բացվեց իմ հոգում եւ աստղերից այն կողմ բացահայտեց չուսումնասիրված մեկ այլ անդունդ: Ես միայնակ էի Նրա հետ, Ու արարել էր ինձ եւ աշխարհում առկա ամբողջ գեղեցիկը՝ եւ սերը, եւ տառապանքը, եւ ինքնին գայթակղությունը: Այլեւս չէի փնտրում Նրան, ես կատարյալ ներգաշնակություն էի զգում Նրա հոգու եւ իմ միջեւ: Արտաքին աշխարհի զգացողությունը հեռացավ ինձանից: Մնացել էր միայն ոչնչով չսահմանափակված ուրա-

⁷ Сեն С. Булгаков, Свет не вечерний, Сергиев Посад, 1917, էջ 6: Սույն գրքում հեղինակը մեծագույն խորաթափանցությամբ առաջադրում է կրոնական իմացաբանության հարցը եւ բացահայտում իր սեփական կրոնական փորձառության աշխարհը: Տեն նաեւ Н. Арсеньев, О жизни преизбыточествующей, Брюссель, 1966:

⁸ «Անհավատալիորեն դժվար է,– գրում է է. Ֆրոմը,– եթե ընդհանրապէս հնարավոր է, սահմանել կրոնական փորձառության առանձնահատկությունը: Միայն նրանք, ովքեր վերապրել են, կարող են ընկալել այն, բայց վերջիններս որեւէ բնորոշման կարիք չունեն»:

խության հափշտակությունը: Ինչպե՞ս կարելի է նկարագրել իմ վերապարումը: Դա նման է այն իրողությանը, երբ բոլոր ձայները մեծ երաժշտախմբում ձեւավորում են անսահման մի ներդաշնակություն, որի մեջ, մեր հոգին տոգորող զգացումից զատ, սուզվում է ամեն բան: Գիշերային անխախտ լռության մեջ կայծկլտուն կյանքով ապրում էր առավել հանդիսավոր խաղաղությունը: Եւ գիշերային մթնության մեջ զգում էի ինչ-որ ներկայություն. ինձ համար, առավել եւս, հասկանալի էր, որ այն անտեսանելի է: Եւ այլեւս չէի կարող կասկածել Նրա ներկայությանը, քանի որ Նրան զգում էի նույնքան հստակությամբ, որքան՝ ինքս ինձ: Իսկ եթե [զգացողության] աստիճանների միջեւ առկա էր ինչ-որ տարբերություն, ապա՝ լոկ այն պատճառով, որ Նրա իրականությունը զգում էի ավելի ուժգին, քան՝ իմ սեփականը: Այդ պահին ներսումս ծնվեց իմ բարձրագույն հավատը, Աստծու մասին իմ ճշմարիտ պատկերացումը: Այդ պահից, երբ կանգնեցի Տեսիլքների Լեռան վրա, ես զգացի, որ Հավիտենականի գորությունը համակել է ինձ: Այդ ժամանակվանից ես երբեք չեմ ունեցել սրտի նմանատիպ տրոփյուններ: Եւ եթե ես երբեւիցե երես առ երես հանդիպել եմ Աստծուն, ապա միայն՝ այն գիշեր, երբ զգացի, որ ծնվել եմ վերստին, ծնվել եմ հոգով... Այդ ընթացից սկսած՝ Աստծու գոյության ապացույցի վերաբերյալ որեւիցե քննադատություն չէր կարող սասանել հավատս: Այդ գիշերվանից, երբ ես զգացի Նրա Հոգու ներկայությունը, ես երբեք երկար ժամանակով զուրկ չեմ եղել այդ զգացողությունից: Իմ՝ Աստծու գոյության հանդեպ ունեցած հաստատուն վստահությունը հիմնված է հենց այդ տեսիլքի, զարմանահրաշ այդ փորձառության վերաբերյալ հիշողության վրա»⁹:

«Ես բազմիցս զգացել եմ Աստվածության հետ ունեցած իմ սերտ հաղորդակցությունը, — գրում է մեկ այլ մարդ: — Ես վայելում էի Նրա հետ ունեցած հանդիպումները, չնայած որ երբեք չեմ խնդրել եւ չեմ ակնկալել այդ: Դրանք, թվում է՝ տեղի են ունեցել բոլոր մտքերիս եւ առօրյա կյանքում գործադրված ճիգերիս մոռացությամբ միայն... Այն, ինչ զգացել եմ այդ պահին, կյանքի՝ առավել խորունկ ու ինձ համար անսովոր իմաստի լուսաճաճանչ բացահայտմանը զուգահեռ անհատականությանս առժամանակյա անհետացումն էր... Առանց Աստծու՝ աշխարհը քաոս կլիներ»¹⁰:

⁹ Տե՛ս Ս. ДЖЕЙМС, նշ. աշխ., 1910, էջ 58:

¹⁰ Նույն տեղում, էջ 58:

Կրոնական վերապրումներն արտացոլող վառ վկայություններ են նաեւ գրականության ու արվեստի անթիվ-անհամար ստեղծագործությունները: «Ռիգվեդայի» հիմները¹¹ եւ սուրբգրային սաղմոսները, Պալեստինայի գրած «Մարչելո Պապի մեսսան» ու Ֆրանց Լիստի «Քրիստոս» երաժշտական մեծակտավ ստեղծագործությունը, Դանթեի «Աստվածային կատակերգությունը» եւ ուղղափառ սրբապատկերները, Օգոստինոսի «Խոստովանություններն» ու Թագորի երգերը միասնաբար հաստատում են Մաքս Շելերի արտահայտած այն միտքը, համաձայն

¹¹ «Ռիգվեդա» բառը նշանակում է «հիմների իմաստություն» կամ «հիմների ուսմունք»: Այն հնդկական կրոնական հիմների մի ժողովածու է, որը պահպանված կրոնական շորս բնագրերից («Ռիգվեդա», «Սամավեդա», «Յաջուրվեդա» եւ «Աթվարվադեդա») հնագույնն ու հնդկական գրականության, ինչպես նաեւ փիլիսոփայության առաջին հայտնի հուշարձանն է: «Ռիգվեդայի» վերջնական ձևավորումն ավարտվել է Ք. ա. ժ. դարում, սակայն, ընդունված կարծիքների համաձայն, որոշ հիմներ ստեղծվել են ավելի վաղ ժամանակաշրջանում՝ Ք. ա. 1700–1100 թթ.: Ժողովածուն բաղկացած է տասը գրքից կամ շարքից (մանդալա), որոնք բովանդակում են 1028 հիմն՝ գրված վեդայական սանսկրիտով: Դրանք նվիրված են հնդկական աստվածություններին՝ Ինդրային (250), Ագնիին (շուրջ 200), Վարունային (12) եւ այլն: «Ռիգվեդայի» կրոնը բազմաստվածությունն է, սակայն այստեղ կան նաեւ միաստվածության ակնարկներ: Աստվածները մարդակերպ են եւ բաժանվում են երեք խմբի՝ երկնքի, մթնոլորտի ու երկրի աստվածներ: «Ռիգվեդայում» առկա են նաեւ վերացական աստվածներ՝ Խոսքը, Իմաստությունը եւ Լուսնությունը: Մոտ քսան հիմներ գրված են երկխոսության ձևով, որոնց մեջ կարելի է դրամատիկական տարերքի սաղմեր նկատել: Կան հիմներ, որոնք պարունակում են պատմական արժեքավոր տեղեկություններ: «Ռիգվեդան» հատկապես արժեքավոր է հնագույն դիցաբանության եւ Հնդկաստանում գրական ընթացքի վաղ փուլերի հետազոտման տեսանկյունից: Ժ. դարակեսին «Ռիգվեդայի» ուսումնասիրությունը նպաստել է համեմատական դիցաբանության զարգացմանը: «Ռիգվեդան» մասնավորապես աղբյուրում է իրանական «Ավեստայի» եւ հունական առասպելների հետ: Հայ իրականության մեջ «Ռիգվեդա»-ով եւ, ընդհանրապես, վեդաներով հետաքրքրվել են Ղ. Ալիշանը, Մ. Թադիադյանը, Մ. Էմինը, Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին եւ այլն («Ռիգվեդայի» առնչությամբ առավել մանրամասն տես H. H. WILSON, Rig-Veda-Sanhitā: A Collection of Ancient Hindu Hymns, 6 vols., London, 1850–1888, եւ FREDERIC PINCOTT, The First Mandala of the Rig-Veda, “Journal of the Royal Asiatic Society”, 19 (4), Cambridge University Press, 1887, էջ 598–624, ինչպես նաեւ՝ PAUL D. TATE, Comparative Hermeneutics: Heidegger, the Pre-Socratics, and the «Rgveda», “Philosophy East and West”, vol. 32, № 1, 1982, էջ 47–59, եւ MICHAEL WITZEL, The Development of the Vedic Canon and its Schools: The Social and Political Milieu, in: MICHAEL WITZEL (ed.), Inside the Texts, Beyond the Texts: New Approaches to the Study of the Vedas, Harvard Oriental Series, Opera Minora, vol. 2, 1997, Cambridge, էջ 257–348, ու ANTONIO DE NICHOLAS, Meditations Through the Rig Veda: Four-Dimensional Man, New York, 2003: Տես նաեւ «История Всемирной Литературы», т. 1, Москва, 1983, ինչպես նաեւ՝ Т. Я. Елизаренкова, О снах в Ригведе и Атхарваведе, Санкт-Петербург: «Петербургское Востоковедение», 1995, էջ 209–221 եւ նույնի, Слова и Вещи в «Ригведе», Москва: «Восточная Литература», 1999: Հմմտ. տես նաեւ «Հին Արեւելքի Պոեզիա», Երեւան, 1982, ինչպես նաեւ՝ П. А. Гринцер, Тайный Язык «Ригведы», Москва, 1998, եւ А. С. Майданов, Тайны Великой «Ригведы», Москва, 2002 եւ այլն՝ ծնթ. թրգմ.):

որի՝ «հավատո ուղին հայտնությունը երեւացող Աստծու առնչությամբ ներքին մի ինքնաբացահայտում է»¹²:

Կրոնի ականավոր պատմաբան Ռուդոլֆ Օտտոն մատնացույց արեց այն, որ կրոնական զգացումը ծնունդ է առնում Գերագույնի իրականության վերապրումից, որը մարդու մեջ առաջացնում է արարածի՝ երկյուղածություն լի սարսափն Աստվածության անսահմանության առջեւ: «Պաշտամունքների ու դավանանքների հիմքում,— գրում է նա,— առկա է մի տարր, որը որոշակի հանգամանքներում, անկախ դրանցից, կարող է խորապես ներգործել մեզ վրա եւ զգայացունց ուժով տիրել մեր գիտակցությանը: Եկեք ներմբռնողության եւ երեւակայության ողջ համակրանքով ու խորաթափանցությամբ փորձենք հետամուտ լինել դրան ամենուր, որտեղ կարելի է հայտնաբերել այն՝ մեզ շրջապատող կյանքում եւ մարդկանց մեջ, բարեպաշտության արտաքին պոռթկումներում եւ գիտակցության՝ դրանցով պայմանավորված դրսեւորումներում, ծեսերի եւ պատարագների սահմանված ու համաշափ հանդիսավորության մեջ, ինչպես նաեւ կրոնական հին հուշարձաններից, կառույցներից, տաճարներից ու եկեղեցիներից ծնունդ առած մթնոլորտում: Սույնն անելուց հետո մենք կտեսնենք, որ բախվել ենք մի երեւույթի, որին համապատասխանող միակ անվանումը «mysterium tremendum», այսինքն՝ «սոսկալի [եւ ահավոր] խորհուրդ»-ն է»¹³:

Բնության մտահայեցողությամբ պայմանավորված՝ հաճախ է ի հայտ գալիս Աստծու զգացումը: Հասարակական քաղաքակրթության արհեստածին աշխարհը ստեպ-ստեպ բթացնում է մարդու հոգեւոր նրբազգացողությունը, բազմաթիվ խոչընդոտներ հարուցում Անդրանցականին մոտենալու ճանապարհին: Դրանից զատ, բավականին մեծ խոչընդոտ է նաեւ հանրամատչելի գրականությունից քաղված մակերեսային գիտելիքների հավասարակշռությունը: Այդ գրականությունը մարդուն ընտելացնում է այն մտքին, համաձայն որի այս աշխարհում ամեն ինչ ստեղծված է պարզագույն կերպով, եւ դա կարելի է ստուգել առողջ դատողությամբ, իսկ խորհուրդի տիրույթին վերաբերում է միայն այն, ինչը դեռ չի հասցրել հայտնվել մարդկային բանականության հերձակի տակ: Մինչդեռ իրավացի էր Այնշտայնը, երբ ասում էր, որ «գեղեցկագույն

¹² Հմմտ. տե՛ս Р. А. Бурко, Е. А. Брагина, Религия как форма духовной культуры, «Молодой Ученый», № 7 (66), Май, Казань, 2014, էջ 652 (ծնթ. թրգմ.):

¹³ Sée R. OTTO, The Idea of the Holy, London, 1950, էջ 26:

զգացողությունը կապված է խորհրդավորի վերապրումի հետ... Մարդը, որին խորթ է նմանատիպ զգայությունը, որը կորցրել է զմայլվելու եւ երկրպագելու կարողությունը, մեռած է: Իմացությունն ու զգայությունն այն իրողության, թե առկա է քողարկված մի Իրականություն, որը մեզ բացահայտվում է որպես բարձրագույն Իմաստություն եւ ճաճանչող Գեղեցկություն, ճշմարիտ կրոնականության առանցքն են կազմում»¹⁴:

«Մենք փնտրում ենք Աստծուն,— կանխազգալով Այնշտայնի միտքը՝ ասում էր Ջորդանո Բրունոն,— բնության անփոփոխ, անսասան օրենքի մեջ, այդ օրենքով առաջնորդվող հոգուն՝ երկուդածությանմբ լեցուն տրամադրության մեջ, փնտրում ենք Նրան արեւի փայլի, մեր մայր հողի արգանդից սկզբնավորվող իրերի գեղեցկության մեջ, Նրա էության ճշմարիտ ճաճանչների՝ մի երկնքի անսահման տարածության վրա լուսարձակող անթիվ-անհամար համաստեղությունների մեջ, որոնք ապրում, զգում, մտածում ու փառաբանում են Ամենաբարուն, Ամենամիակին, Ամենաբարձրյալին»¹⁵:

Տիեզերքով ոգեշնչվածության զգացումը բավականին մոտ է խորհրդապաշտական սույն փորձառությանը: Այժմ վկայակոչենք ռուս գրող Դանիիլ Անդրեևի երկերից մեկում առկա «տիեզերական այս զգացողության» զարթոնքի նկարագրությունը: Ներքին իրադարձությունը, որի մասին պատմում է հեղինակը, տեղի է ունեցել նրա ներաշխարհում¹⁶՝ ամառային մի գիշեր, Նեռուսսա գետի ափին. «Մթնում էր: Կաղնիների ետեւից հանկարծ երեւաց [հորիզոնից] ցածրադիր հուլիսյան ողջ լիա-

¹⁴ Հղումը տրված է ըստ հետեւյալ աշխատության՝ Die Schönsten Gebiete der Welt, München, 1964: Այնշտայնը նույնիսկ կարծում էր, որ առանց աշխարհճանաչողության հնարավոր չէ որեւէ ճշմարիտ կրոնի գոյություն, քանզի կրոնական ոգեշնչումը սերտորեն կապված է տիեզերքի մտահայեցության հետ: Այստեղից էլ նրա հանրաճանաչ աֆորիզմը. «Բնագիտությունն առանց կրոնի կաղ է, կրոնն առանց բնագիտության՝ կույր» (տե՛ս A. EINSTEIN, Wissenschaft und Religion, 1940 [գիտաժողովի զեկույց]: Հմմտ. տե՛ս նաեւ A. EINSTEIN, Naturwissenschaft und Religion, "Physikalische Blätter", 1960, Heft 7, էջ 356՝ ծնթ. թրգմ.): Սույն հոդվածի կամ զեկույցի բավականին ո՛չ ճշգրիտ մի թարգմանություն տեղ է գտել հետեւյալ հրատարակության մեջ՝ А. Эйнштейн, Собрание научных трудов, т. IV, Москва, 1967, էջ 176: Մեջբերումն առկա է նաեւ հետեւյալ գրքում՝ М. БОРН, Физика в жизни моего поколения, Москва, 1963, էջ 389:

¹⁵ Տե՛ս Дж. Бруно, О безмерном и неисчислимом, цит. по книге: А. Риль, Введение в современную философию, пер. с франц., Санкт-Петербург, 1904, էջ 25:

¹⁶ Սույն հատվածում հեղինակը կիրառել է ռուսերեն «душа» բառը, սակայն հաշվի առնելով հայերենի լեզվամտածողության առանձնահատկությունը՝ այն թարգմանել ենք «ներաշխարհ» (ծնթ. թրգմ.):

լուսինը: Աստիճանաբար դադարեցին զրույցներն ու պատմությունները, ընկերները մեկ առ մեկ ննջեցին թեթեւակի ճարճատող խարույկի շուրջը, իսկ ես արթուն մնացի կրակի մոտ՝ մերթըմերթ թափահարելով մեծ ճյուղը՝ մոծակներից պաշտպանվելու համար:

Եւ երբ լուսինն ուռենու խիտասաղարթ ճյուղերի նախշավոր նեղ տերեւների ետեւից անաղմուկ տեղաշարժով հայտնվեց իմ տեսադաշտում, սկսվեցին այն ժամերը, որոնք, թերեւս, չքնադագույն պահերն էին իմ կյանքի: Մի գրկաշափ խոտադեզին թիկնած հանգիստ շնչելով՝ ես լսում էի, թե ինչպե՞ս է ետեւում՝ ինձանից մի քանի քայլ հեռավորության վրա հոսում նեոլուսսան, բայց կարծես՝ սեփական հոգուս միջով: Սա առաջին արտասովոր [զգացողություն] էր: Հանդիսավոր եւ անաղմուկ՝ իմ միջով անցնող հոսանքի մեջ լցվեց այն ամենը, ինչ կար երկրի վրա, եւ ամեն բան, ինչ կարող էր լինել երկնքում: Մարդկային սրտի համար հագիվ թե տանելի երանության մեջ ես զգում էի, թե ինչպե՞ս էին ներդաշնակ գնդերը, դանդաղ պտտվելով, սահում համաշխարհային խմբապարում, բայց՝ իմ միջով, եւ այն ամենը, ինչ կարող էի մտորել կամ պատկերացնել, համակված էր ցնծաբեր միասնությամբ: Իրականում ամեն ինչ՝ այս դարավոր անտառներն ու վճիտ գետերը, խարույկի շուրջ քնած մարդիկ եւ այլ մարդիկ, մերձավոր ու հեռավոր երկրների ազգերը, առավոտյան քաղաքներն ու աղմկալի փողոցները, սրբազան պատկերներով լի տաճարները, անդուրե՛ն ծփացող ծովերը եւ ճոճվող խոտերով տափաստաններն այդ գիշեր իմ մեջ էին, իսկ ես՝ այդ ամենի մեջ: Ես պառկած էի փակ աչքերով: Եւ գեղեցիկ, ճերմակափայլ, մեծ ու ծաղկուն աստղերը, որոնք բնավ նման չեն առօրյայում մեր տեսածին, սպիտակ ջրաշուշանների նման բոլոր կողմերից նույնպե՞ս սահում էին համաշխարհային գետին համընթաց: Թեեւ արեւը չէր երեւում, բայց, կարծես, այն նույնպե՞ս տեսադաշտիս մոտակայքում էր: Բայց ոչ իր ճաճանշափայլությամբ, այլ բոլորովին այլ՝ մինչ այդ ինձ անծանոթ լույսով էր համակված այս ամենը, եւ ամեն բան, որ հոսում էր իմ միջով եւ, միեւնույն ժամանակ, օրորում էր ինձ ամենաբավ սիրով, ինչպե՞ս երեխային՝ օրորոցում: Փորձելով բառերով արտահայտել նմանատիպ ապրումները՝ ավելի պարզ, քան՝ երբեւէ, զգում ես լեզվի աղքատությունը»¹⁷:

¹⁷ Sէս Դ. Լ. ԱՆԴՐԵՅԵՎ, Собрание сочинений, т. 2, книга 2: О метаисторическом и трансфизическом методах познания, глава 2: Немного о трансфизическом методе, Москва: Московский рабочий: Присцельс, 1995, էջ 86–87 (ծնթ. թրգմ.):

Աստվածային խորհուրդի ընկալման առնչությամբ աշխարհի գեղեցկության նշանակության վերաբերյալ է խոսում նաեւ աստղագետ Կամիլ Ֆլամարիոնը.

«Եթե դուք ուսումնասիրում եք բնությունը, երկինքը, որտեղ բյուր եւ բազում աշխարհներ լույսի ու կյանքի արգանդում ձգտում են միմյանց, եթե ձեզ հայտնի են այդ բնության օրենքներն ու ընդհանուր ներքին կառուցվածքը, ապա կարո՞ղ եք արդյոք չողջունել նյութական շղարշի միջոցով բարձրաձայն խոսող Գերագույն Բանականությանը: Լեռների լանջերին սահող երեկոյան ստվերները, անտառից տարածվող անուշահոտությունը, խոնարհված ծաղկաբաժակները, օվկիանոսի խուլ, անլուելի աղմուկը, աստղալից գիշերների խոր լռությունն առավել գունագեղությամբ ու ավելի համոզիչ են խոսում Աստծու մասին, քան՝ մարդկային բոլոր գրքերը»¹⁸:

Սա այն զգացողությունն է, որն իր մարմնավորումն է գտել Մ. Լերմոնտովի «Երբ մեղմ ծփում է արտը ոսկեշող...» նշանավոր բանաստեղծության մեջ. այն եզրափակվում է հետեւյալ բառերով.

«Այնժամ դադրում է իմ հուզված հոգին, Մռայլ ճակատիս թախիծը ցրվում. եւ ես զգալով բախտը երկրային, Հոգով տեսնում եմ Աստծուն երկնքում...»¹⁹:

Իսկ ահա հետաքրքրաշարժ խոստովանությունն այն մարդու, որը, տեսականորեն իրեն համարելով անհավատ, իր կյանքի երկար տարիների ընթացքում զգացել է Աստծու մերձավորությունը:

«Քսանից երեսուն տարեկան հասակում,— ասում է նա,— ես աստիճանաբար դարձա անհավատ, սակայն չեմ կարող ասել, որ երբեւէ կորցրել եմ Հ. Սփենսերի լավագույնս նկարագրած բացարձակ իրական-

¹⁸ Տե՛ս К. ФЛАММАРИОН, Бог в природе, пер. с франц., Санкт-Петербург, 1900, գլ. 2-րդ: Նույնիսկ դրապաշտ (պոգիտիվիստ) Ա. Ֆորելն է ասում հետեւյալը. «Մենք խորագույն ակնածանքով խոնարհվում ենք ամենուրեք, համաշխարհային յուրաքանչյուր ատոմում ինքն իրեն դրսևորող հավիտենականի... անիմանալի ամենագոյությունն առջեւ... Մենք որեւէ իրավունք չունենք բացասել Նրան այն պարզ պատճառով միայն, որ չգիտենք եւ ի զորու չենք ընկալելու համաշխարհային գոյության վերաբերյալ բնագիտական ուսմունքը» (տե՛ս А. ФОРЕЛЬ, Мозг и Душа, пер. с нем., Санкт-Петербург, 1912, էջ 31–32):

¹⁹ Ռուս մեծանուն գրող Միխայիլ Լերմոնտովի հիշյալ բանաստեղծության համապատասխան հատվածի ինքնուրույն թարգմանության փոխարեն սույն հատվածում զետեղել ենք դրա՝ Ալեքսանդր Մատուրյանի հայերեն թարգմանած տարբերակը (առավել մանրամասն տե՛ս ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐՅԱՆ, Ռուս Բանաստեղծներ, Պուշկին եւ Լերմոնտով, առաջին գրքույկ, Մոսկվա, 1905՝ ծնթ. թրգմ.):

նությունն այդ «անորոշ գիտակցությունը»²⁰, որը գտնվում է երեւոյթների աշխարհից այն կողմ: Ի տարբերություն Սփենսերի՝ սույն իրականությունն ինձ համար պարզապես Անիմանալի չէր, քանի որ թեեւ դադարել էի Աստծուն դիմել մանկական աղոթքներով եւ երբեք ոչինչ չէի խնդրել Անտեսանելիից, այնուամենայնիւ, որոշ տեղեկությունների հիմամբ ենթադրում եմ, որ ես հաճախ Նրա հետ ունեցել եմ այնպիսի փոխհարաբերություն, ինչպիսին ձեւավորվում է աղոթքի միջոցով... Կյանքիս դժվար պահերին, չգիտեմ՝ ինչպես առավել լավ արտահայտվեմ՝ Նա ինձ հետ է եղել, կամ ես՝ Նրա հետ. Նա զորացնում եւ անսահման կենսունակություն մեջ էր համակում ինձ, որպեսզի վերստին կարողանայի զգալ Նրա խորհրդավոր փրկարար ներկայությունը: Դա, կարծես թե, կյանքի, արդարության, ճշմարտության ու զորության անսպառ աղբյուր էր, ամեն անգամ՝ տկարության պահերին բնազդաբար էի դիմում Նրան: Եւ Նա միշտ փրկում էր ինձ փորձանքից: Իսկ այժմ հասկանում եմ, որ իմ ու Նրա միջեւ եղել է անձնական հարաբերություն, որովհետեւ վերջին տարիներին, երբ ես կորցրի առ Նա տանող ճանապարհները, անդառնալի կորստի հստակ զգացողություն առաջացավ մոտս»²¹:

[Ուիլյամ] Զեյմսի վկայաբերած այս ուշագրավ խոստովանությունը եւս մեկ անգամ ցույց է տալիս, թե ինչպես կարող է ներմբռնողությունը դրսևորվել՝ անկախ «աշխարհայացքից» եւ նույնիսկ՝ դրան հակառակ²²: Արտաքին ապացույցները, որոնք վերաբերում են խորհրդոց խորհուրդին, որին մենք փորձում ենք մերձենալ բանականության հենակների օգնությամբ, երբեք չեն կարող ծնունդ տալ հավատին: Այդ իսկ պատճառով, խոսելով կաթոլիկ փիլիսոփա Էդուարդ Լերուայի բառերով, «եկեք հրաժարվենք այն մտքից, որ փաստարկումն արդեն ավարտված է՝ նախքան հավատի գործողության սկիզբը»²³:

Այդ դեպքում ինչո՞ւ էին քրիստոնեական բազմաթիվ մտածողներ կարծում, որ բանականությունը նույնպես կարող է ինչ-որ բան ասել Աստծու մասին:

²⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Краткий Очерк Истории Философии», под редакцией М. Т. Иовчука, Т. И. Ойзермана, И. Я. Щипанова, 2-е изд., Москва, 1971, гл. XVII, § 1, էջ 513–517 (ծնթ. թրգմ.):

²¹ Տե՛ս Ս. ДЖЕЙМС, նշ. աշխ., 1910, էջ 51, իսկ վերոնշյալ խոստովանության ամբողջական տարբերակը տե՛ս նույն տեղում, էջ 51–52 (ծնթ. թրգմ.):

^{22*} Ինչպես ենթադրում են [որոշ հետազոտողներ]՝ Ուիլյամ Զեյմսը գրել է հենց իր մասին:

²³ Տե՛ս Э. ЛЕРУА, Догмат и Критика, пер. с франц., Москва, 1915, էջ 309:

Նրանք մյուսներից ավելի վատ չէին հասկանում, որ ներքին անկեղծ մտահայեցությունը բարձր է տրամաբանությունից, բայց տվյալ դեպքում մատնացույց էին անում այն, որ նույնիսկ մեր սահմանափակ մտածողությունն ինչ-որ չափով ի զորու է մեզ մերձեցնելու Աստծու մասին հասկացությանը:

Հարկ է հիշել, սակայն, որ տրամաբանական բոլոր ապացույցներն իրենց իսկ էությունամբ հարկադրական բնույթի են: Հավաքաբանությունների (սիլլոգիզմ) համար չկա ազատություն. դրանք մտավոր ստրկության արգասիք են: Իսկ քանի որ հոգեւոր ներըմբռնողությունը բացահայտում է մեզ համար բարձրագույն Իրականությունը՝ որպես բացարձակ ազատություն, ուստի եւ այն մեր սահմանափակ մտածողությամբ շղթայակապելու փորձը կլինեն անօրինական ոտնձգություն: Հետեւաբար, Կանտն իրավացիորեն կարծում էր, որ Աստծու կեցության վերաբերյալ «ապացույցներին» հատուկ չէ հաւկադրական զորությունը:

Այնուամենայնիվ, մարդը զգում է իր հոգեւոր փորձառությունն իմաստավորելու անհրաժեշտություն: Պետք է միայն հիշել, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե «ապացույցներին»՝ բառիս նեղ իմաստով, այլ՝ վկայություններին, որոնք բացարձակապես նույնական չեն:

* * *

Իմաստավորման այդ ճանապարհին մենք, նախ եւ առաջ, պետք է եւս մեկ անգամ դիմենք մեզ շնորհված ամենաարժանահավատ բանին՝ մեր ներաշխարհին: Մարդկային մարմինը շրջակա աշխարհի մի մասն է, ամեն դեպքում՝ դրա հետ սերտորեն կապված ինչ-որ մի բան. այն իր վրա զգում է ձգողականության օրենքը, ջերմաստիճանի տատանումները. մենք ցավ, սով ու ծարավ ենք զգում, մի խոսքով՝ մեր «ձեռքերն ու ոտքերը» կապված են արտաքին բնությամբ: Մեր երազանքները՝ լինի դա ազատ թռիչք օդում կամ շնչառություն ջրի տակ, մշտապես հանդիպում են դիմադրության, որը մեզ հիշեցնում է մեր կաշկանդվածության մասին:

Եւ, միեւնույն ժամանակ, մարմնական այդ ստրկացմանը դիմակայում է մեր հոգեւոր ներաշխարհը: Վերջնական վստահությամբ մենք զգում ենք դրա իրականությունը: Եւ մեր միտքը ո՛չ միայն ազատ ճախրում է անմատչելի տարածություններում, հեռավոր անցյալում ու ապագայում, տիեզերքի անապատներում եւ ջրի կաթիլում, այլեւ հիանալի է,

որ մեր ներքին կյանքը որակապես տարբերվում է արտաքին գոյությունից, ընթանում՝ իր առանձնահատուկ օրենքների համաձայն: Այստեղ մենք հաղթանակ ենք տանում աշխարհի մեխանիկական հարկադրանքի նկատմամբ: «Իր իսկ անձի բնությունը, — գրում է ռուս մտածող Վ. Նեսմելովը, — մարդն անխուսափելիորեն ընկալում է իրեն որպես իր ինքնակամ գործողությունների ազատ պատճառ ու նպատակ»²⁴:

Ինչպես մեր մարմինն արտացոլանքն է նյութական գոյության, այնպես էլ մեր հոգեւոր ներաշխարհն, իր հերթին, վկայում է հոգեւոր կեցության²⁵ իրականության մասին: Մարդը՝ այդ միկրոտիեզերքն իր մեջ, բացահայտում է մի իրողություն, որը, համաձայն Ռուդոլֆ Էյքենի բնութագրման, «չի կարող մարդկային մտածողության պարզ գիտակցություն լինել. այն իր հետ բերում է չափազանց շատ յուրահատուկ կարողություններ ու կենսակարգեր, որոնք հնարավոր չէ արհեստական ճանապարհով սահմանել ո՛չ հիմա, ո՛չ էլ՝ երբեւէ: Բացի այդ, դրա ու բնական բարեկեցության շահերի միջեւ առկա է այնպիսի հակասություն, այսինքն՝ մարդուց այնքան աշխատանք ու զոհաբերություն, նրա էության ծանրության կենտրոնի այնպիսի լիակատար տեղափոխություն է պահանջում, որ երջանկության պարզ ձգտումը երբեք չէր կարող հանգեցնել դրան... Այն կարելի է ընկալել միայն որպես տիեզերքի ամբողջության մի շարժում, որը փոխանցվում է մարդուն եւ շարունակվում նրա մեջ: Հոգու կյանքը միանգամայն անհիմանալի է եւ այն երբեք չէր կարող զորություն դառնալ մեր մեջ, եթե նրան բնորոշ չլիներ մարդու համեմատ ունեցած անկախությունը, եթե նրա մեջ դրսևորվող միասնական ընդհանուր կյանքը չվերաբերեր բուն իրականությանը եւ չձեւավորեր իրական կապը»²⁶:

Հայտնագործության ճանապարհին իր կյանքը զոհաբերող գիտնականը, մահվան դեմքին ժպտացող՝ հանուն համոզմունքների նա-

²⁴ С. В. Несмелов, Наука о человеке, т. 1, Казань, 1906, էջ 242:

²⁵ Բնագրի սույն հատվածում Ալեքսանդր Մենը կիրառել է «духовное измерение» ձեւակերպումը: Հայտնի է, որ «измерение» եզրույթը, սովորաբար, հայերեն թարգմանվում է «չափ, չափում» բառերով, այնինչ նշյալ հասկացությունները լիարժեք չեն արտահայտում հեղինակի միտքը, ուստի տվյալ եզրույթի ձեւավորման ընթացքն ու հոմանիշները ուսումնասիրելուց հետո որոշեցինք օգտագործել վերջինիս՝ «духовное бытие», այսինքն՝ «հոգեւոր կեցություն» հոմանիշը, որը լիովին համապատասխանում է բնագրի խնդրո առարկա հատվածի իմաստին (ծնթ. թրգմ.):

²⁶ С. В. Р. Эйкен, Основные Проблемы Современной Философии Религии, пер. с нем., Санкт-Петербург, 1910, էջ 6–7:

հատակը, երաժշտություն լսելու ընթացքում արցունքները զսպել չկարողացող մարդը՝ նրանք բոլորն անցնելով բնական իրականության սահմանագիծը՝ մոտեք են գործում հոգեւոր իրականության ոլորտ: Միայն դրանում իր ունեցած մասնակցության շնորհիվ է մարդը, բառիս բուն իմաստով, դառնում մարդ: Միայն դրա շրջանակում ենք կարող գտնել մեր գերբնական հոգեւոր կարիքների արդարացումն ու բավարարությունը:

Այսպիսով, ինչպես բնութագրում է Նեսմելովը, «մարդը ո՛չ միայն հավատում է գերզգայուն աշխարհի իրական կեցությանը, այլ ուղղակիորեն գիտի այդ կեցության մասին, որովհետեւ ինքն իրեն չի կարող գիտակցել այլ կերպ, քան միայն՝ սեփական անձնավորության գերզգայուն բովանդակության մեջ»²⁷:

Աստվածամերժության (աթեիզմի) համոզմունքների կրող գոյութենապաշտները պնդում են, որ աշխարհի «անիմաստությունը» դրսևորվում է այն ժամանակ, երբ վերջինս բախվում է մարդկային «ես»-ին, որը միայնակ աքսորյալի պես ապարդյուն փնտրում է իմաստն ու տենչում բարձրագույն ներդաշնակությանը: Սակայն որտեղից են ի հայտ եկել այդ փնտրտուքներն ու փափագները: Արդյո՞ք հենց դրանք մատնացույց չեն անում այն հոգեւոր կեցությունը, որն արտացոլվում է մարդու մեջ:

«Մարդիկ ստեղծում են Աստծուն», այդպիսին է, առհասարակ, աստվածամերժության հետևորդների պնդումը: Բայց իրականում նրանք հազվադեպ են մտածում այն մասին, թե ինչո՞ւ է դա տեղի ունենում, եւ կարո՞ղ է արդյոք այստեղ ինչ-որ «հետադարձ կապ» լինել: Ինչպես արդեն տեսանք, միայն վախի, տգիտության եւ արտաքին պայմանների՝ վկայակոչված պատճառաբանություններն այստեղ բավարար չեն: Ամենակարեւորն այն է, որ մարդն իր միջոցով եւ իր մեջ հայտնաբերում է մեկ այլ՝ բնությունից տարբեր կեցություն: Եւ որքան արդյունավետ ու կատարյալ է վերջինիս ինքնաճանաչողության գործընթացը, այնքան առավել իրական է դառնում անտեսանելի այդ աշխարհը, որը հավատի գործողության արդյունքում բացահայտում է իրեն՝ որպես առանձին անձնավորության սահմանները գերազանցող մի իրականություն: «Բարձրանալ առ Աստված, — ասում էր ֆրանսիացի փիլիսոփա Գ. Մար-

²⁷ Сн В. НЕСМЕЛОВ, *նշ. աշխ., հտ. Ա.*, էջ 262: Сн նաեւ П. НЕЧАЕВ, *Теизм как проблема разума, Сергиев Посад, 1916*, էջ 327, *ինչպես նաեւ՝* А. ВВЕДЕНСКИЙ, *Вера в Бога, ее происхождение и основания*, Москва, 1891:

սելը,— նշանակում է ներթափանցել մեր մեջ, ավելին՝ մեր խորքերը, եւ ինքներս գերազանցել մեզ»²⁸։

Եթե մենք նյութական թագավորության մեջ ունենք «պատուհաններ», ապա մեր հոգեւոր «եսը» կարող է պատուհան դառնալ դեպի տիեզերական Հոգու աշխարհ։ Մարդու եւ բնության միջեւ ներդաշնակությունը նրա երկրային կյանքի հիմքն է։ Բարձրյալի հետ միությունն սահմանում է նրա հոգեւոր գոյությունը։ Այդ իսկ պատճառով Բերգսոնը խորհրդապաշտական փորձառության մեջ տեսնում էր ո՛չ միայն անցումն առ Աստվածային Միասնությունը, այլեւ մարդկության հետագա զարգացման գրավականը²⁹։


Շարունակությունը՝ հաջորդիվ

Թուսերենից թարգմանությունը՝
ՅՈՒԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



²⁸ G. MARCEL, *Existentialisme Chrétien*, Paris, 1947, էջ 15։

²⁹ ՏՆՍ H. BERGSON, *նշ. աշխ.*, 1969, էջ 325։



Doi: 10.56737/2953-7843-2023.02-67

ԱՇԽԱՏԱՆՔ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ԿԳՄՄՆ

ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԳԵՐԻ ՀԱՎԱՔԱՄՈՒՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՄԱՆ ՀԱՍԱՐ)

Սկիզբը՝ թիվ Բ.

Դ. ԲՈՒՍԱԾԱՂԿԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ
ԲՆՈՐՈՇՎՈՂ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի հավաքածուում մեծ թիվ են կազմում բուսածաղկա-
յիմ հորինվածքներով բնորոշվող խմբին պատկանող գորգերը: Դրանք
առանձնացված են ըստ տեսակների, որոնց տարբերակման հարցում
կարեւորված են հիմնական հորինվածքները՝ ծառանախշերը, բուսածաղ-
կային վարդակներն ու կիսավարդակները, նշանախշերը, ծաղկանախ-
շերը եւ այլն: Այս խմբի կազմում եղած գորգերից պատմամշակութային
առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեր տիպաբանությամբ
Բարգուշատ անվանակոչված գորգը, որը վերաբերում է Ժ. Դ. առաջին
կեսին: Դա բնորոշվում է գեղազարդման բարդ համակարգով, որի կազ-
մում բուսածաղկային խոշոր հորինվածքներ եւ բուսականացված խաչա-
զարդեր են, իսկ գորգադաշտի ազատ տարածքներն էլ ամբողջությամբ
ծածկված են որոշակի ծիսամոգական նշանակություն պարունակող տա-
րատեսակ խորհրդանշաններով: Անտարակույս, հենց այդ ամենով էլ այս
տեսակին պատկանող գորգերն ունեն պատմամշակութային կարեւոր
նշանակություն (պատկեր 11): Մեզ հայտնի տեղեկությունների համա-
ձայն՝ հիմնականում գործել են Դիզակի, Բարգուշատի եւ ընդհանրապես
Արցախի եւ Սյունիքի հարավային գավառների, ինչպես նաեւ Արաքս-
պարի գորգագործական կենտրոններում: Հայաստանի եւ արտերկրի

Թանգարաններում էլ այս տեսակը ներկայացված է ծայրահեղ սակավաթիվ նմուշներով եւ մասնագիտական շրջանակներին էլ, ըստ էության, անհայտ են դրա ծագումնաբանությունն ու տեղը կովկասյան գորգերի համակարգում: Մենք ենթադրում ենք, որ այս տեսակի գորգերի հիմնական հորինվածքները հայոց ավանդական գորգարվեստին բնորոշ հնամենի ավանդույթների արտահայտություններն են: Դրանցից առաջինը՝ բուսածաղկային խոշոր հորինվածքն ունի շեղանկյունաձեւ ուրվագիծ, կազմված է շեղանկյունաձեւ չորս զարդաշրջանակներից եւ դրանց կենտրոնում ներկայացված բազմաթերթ վարդակից: Հարուստ է նաեւ բուսածաղկային մանրակներից կազմված, խաչաձեւ առանցքով բարդ հորինվածքը, որը պատկերազրման, գեղազարդման մանրակների եւ իմաստային առումով ներդաշնակ է նախորդին: Այս երկու հորինվածքներն էլ ծիսամոգական հատկանիշներով օժտված հնամենի գորգին բնորոշ խորհրդանշաններ են եւ առնչվում են բնության զարթոնքի եւ կյանքի առաջացման հետ կապված հնամենի պատկերացումներին: Բացի գորգադաշտում ներկայացված հորինվածքներից՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ լայն գոտու գեղազարդման համակարգը, որում հիմնական տեղը զբաղեցնում են ձկնակերպ ոճավորումները: Մայր Աթոռում պահվող այս նմուշը թեեւ հատված է, բայց դրանով բոլորովին չի նվազում դրա սկզբնաղբյուրային նշանակությունը հայոց գորգարվեստի ընդհանուր նկարագրի մասին պատկերացում կազմելու համար:

Հավաքածուում բավականաչափ նմուշներ վերաբերում են Կենաց ծառ տեսակին: Դրանք վերաբերում են գորգագործական տարբեր կենտրոնների՝ Սյունիքին, Վասպուրականի արեւելյան գավառներին, հարավարեւելյան Կովկասին, Լիւահան-Բուրվարին եւ այլն: Դրանք հիմնականում գծայնացված ծառանախշեր են, որոնք որոշ նմուշներում լրացված են նաեւ այլ մանրակներով՝ մասնավորապէս մարդկային պատկերներով: Այս տեսակետից ուշագրավ է Պարսկաստանի հյուսիսարեւմտյան հայաշատ տարածաշրջաններում՝ Լիւահան-Բուրվար գավառների գորգագործական կենտրոններում ստեղծված այստեղ ներկայացված նմուշը (պատկեր 12): Գունեւորմանը ու գեղազարդման մանրակների ներդաշնակության առումով էլ կարելի է ենթադրել, որ հարավարեւելյան Կովկասի գորգագործական ավանդույթներին բնորոշ, մեր կարծիքով՝ Շամախուց արեւմուտք գտնված մինչ 1980-ականների վերջը հայաբնակ եղած Կարամարյան գավառակի գորգագործական կենտրոններին վերաբերող

գորգը (պատկեր 13): Հարավային Կովկասի գորգագործությունը քաջատեղյակ Մ. Իսահելի դիտարկումների համաձայն՝ այդ կենտրոններում էին գործում նման չափսերի տեխնիկա-տեխնոլոգիական առումներով էլ բարձրակարգ գորգեր, որոնք շուկայում հայտնի էին որպես Խմա-նի խիլա, այսինքն՝ Հայկական մախշ կամ Հայկական գորգ¹: Գեղազարդման մանրակների առումով աչքի են ընկնում այս գորգի եզրագոտիները, որոնք համահունչ են նաեւ արցախայունիքյան գորգագործական արվեստի ավանդույթներին:

Այս խմբին պատկանող Ծաղկավոր տեսակին պատկանող գորգերի շարքում ուշագրավ է 1902 թվականին գործված նմուշը, որն ունի հայատառ թվակիր կարճ հիշատակարան²: Այս տեսակի գորգեր գործել են բոլոր գորգագործական կենտրոններում, ուստի հայտնի են տասնյակ տարբերակների տեսքով: Բայց այդքանով հանդերձ՝ դրանք առավել կատարյալ տեսքով գործվել են Լոռվա գորգագործական կենտրոններում, որին, մեր կարծիքով, վերաբերում է նաեւ այս նմուշը:

Խնդրո առարկա խմբի կազմում բավականին շատ են նաեւ բուսածաղկային վարդակներով գեղազարդվածները. նկատի ունենք մեր տիպաբանության մեջ Ամառաւ եւ Աղբակ տեսակներին պատկանող գորգերը: Ամառաւ տեսակի գորգերը բնորոշվում են մեծ չափսերով եւ ամբողջ գորգադաշտի երկայնքով պատկերված բազմաթերթ խոշոր վարդակներով, որոնք իրարից տարանջատված են ավելի փոքր նմանատիպ վարդակներով ու լայնակի ձգված բարդ հորինվածքներով (պատկեր 14): Ամառաւ գորգերի գեղազարդման համակարգում կարեւորված են նաեւ թռչնապատկերները, որոնք ներկայացվում են գորգադաշտի եզրերին³: Մայր Աթոռում այս տեսակի գորգերի մի մասը վերաբերում է Ժ. Գարի երկրորդ կեսին եւ Ժ. Բ. սկզբներին: Այս տեսակը բնորոշ էր հյուսիսարեւմտյան Պարսկաստանի, Վասպուրականի, Սյունիքի եւ Արցախի գորգագործական կենտրոններին: Մայր Աթոռում պահվողները հիմնականում վերաբերում են Արցախի գորգագործական կենտրոններին եւ մասնավորապես Շուշիին: Ավելացնենք, որ այս գորգերի գեղազարդման համակարգում առանձնակի նշանակություն ունի գորգադաշտի գեղազարդ-

¹ Տէմ Մ. ИСАЕВ, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, էջ 123:

² Մայր Աթոռի Վեհարան, գ/հ 15:

³ Տէմ, օրինակ, Գանձատանը պահվող՝ թիվ 12, 13, 15, Վեհարանում պահվող՝ թիվ 20 գորգերը եւ այլն:

ման համակարգը եզրափակող գորգադաշտի ծայրերում պատկերված թռչնակերպ գույզ ոճավորումներից կազմված հորինվածքը:

Գեղազարդման համակարգի բուսածաղկային մանրակներով հագեցած ության տեսանկյունից առանձնահատուկ են վարդակներով ու կիսավարդակներով բնորոշվող գորգերը: Այս տեսակետից Մայր Աթոռում պահվող նմանատիպ գորգերից այստեղ ներկայացնում ենք Գանձատանը պահվող թիվ 60 գորգը (պատկեր 15): Այն աչքի է ընկնում խոշոր չափսերով (830/280 սմ) եւ գուներանգների բազմազանությունամբ ու ներդաշնակությամբ: Այն կրում է հայոց գեղազարդման արվեստի ավանդույթների կնիքն ու, մեր կարծիքով, ստեղծվել է Խոյ-Սալմաստի գորգագործական կենտրոններում: Ընդհանրապես, գորգերի գեղազարդման այս սկզբունքը Պարսկաստանում առանձնապես տարածում ստացավ Սեֆյան արքայատոհմի գերիշխանության դարաշրջանում, երբ Պարսկաստանի մի շարք խոշոր քաղաքներում՝ մասնավորապես Սպահանում, հիմնվեցին արքունիքին սպասարկող գորգագործական արհեստանոցներ, որոնցում նախկինում ձեւավորված ավանդույթների հիման վրա պալատական գորգանկարիչներն ստեղծեցին գորգերի նոր տարբերակներ, որոնցից մեկն էլ Աղբակ տեսակն է: Ներկայացվող նմուշում բազմաթերթ վարդակները, կիսավարդակներն ու Շահ Աբաս անունով տարբերակված բուսածաղկային հորինվածքները, համադրվելով մանր ծաղկանախշերի ու բուսանախշերի հետ, ստեղծել են յուրատեսակ դրախտային այգու տեսարան:

Խնդրո առարկա խմբի կազմում առանձնահատուկ է Մշո որբանոցում 1908 թվականին գործված գորգը: Այն ունի հայատառ թվակիր ընդարձակ հիշատակարան, որից պարզվում է, որ գործել են Պոլսո պատրիարք Մատթեոս սրբազանին նվիրելու համար՝ «ՆՈՒԷՐ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԺ ԱՄԵՆ, Տ. ՄԱՏԹԵՈՍ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ՄՇՈՅ ԻԳԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՅՆ»⁴:

Այս խումբը հավաքածուում ներկայացված է նաեւ նշանախշերով ու ծառանախշի տարբերակներով գեղազարդված տեսակներին պատկանող նմուշներով:

⁴ Մայր Աթոռի Հին Վեհարան, գ/հ 3:

Ե. ԹԵՄԱՏԻԿ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ԳՈՐԳԵՐ

Գորգերի հավաքածուում մեծ հետաքրքրություն են ներկայացնում թեմատիկ-պատկերային գորգերը: Դրանք առանձնահատուկ են այն-քանով, որքանով աղերսվում են հանրույթի կենցաղին ու մշակույթին վերաբերող բոլոր ոլորտներին, եւ յուրաքանչյուրի դեպքում էլ ներկայացվող տեսարանները բնորոշվում են տվյալ ոլորտին վերաբերող մանրակների ներկայությամբ: Դրանք առանձնահատուկ են նաեւ նրանով, որ յուրաքանչյուր նմուշ գործել են սահմանափակ նմուշներով՝ հատուկ պատվերների դեպքում, ու միայն որոշներն են, որ թեմատիկ առումով կրում են համահայկական բնույթ, եւ հայտնի են դրանց պատկանող հարյուրավոր նմուշներ:

Այսպիսին են, օրինակ, Մայր Հայաստան տեսակին պատկանող գորգերը: Մայր Աթոռի հավաքածուներում կա այս տեսակին պատկանող երեք նմուշ: Պատկերագրման թեմայի աղբյուրն այստեղ միեւնույնն է՝ պատկերվում են պատմական Հայաստանը ներկայացնող ավերակներն ու սգակիր հայուհին: Առանձնահատկությունները եզրագորտիների գեղազարդման համակարգում են եւ գորգադաշտի հարդարման մանրակներում:

Այս խմբին պատկանող գորգերի թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հին Վեհարանում պահվող մի գորգ, որի պատկերագրման համակարգը բացառիկ հարուստ է եւ խորհրդանշական (պատկեր 16): ԺԹ. դ. վերջին քառորդում մետաքսաթելով գործված այդ գորգն աչքի է ընկնում կատարման բարձր որակով, արտակարգ նրբությամբ եւ մատնանշում է այն գործողների մասնագիտական անթերի ունակությունները: Ակնհայտ է, որ գծանկարը հատուկ պատվերով պատրաստել են որակյալ գորգանկարիչները, եւ գործել են բարձրակարգ գորգագործներ: Հնարավոր է, որ այն ստեղծվել է փոքրասիական հայաբնակ գորգագործական կենտրոնում՝ 1890-ական թվականներին հիմնված որբանոցներից մեկում: Այդ առումով կարեւորում ենք «որբ ենք» բառերը, որոնք գործված են գորգադաշտի վերին մասում պատկերված երկու շեփորահար հրեշտակների բռնած ժապավենին: Միեւնույն ժամանակ չի բացառվում նաեւ այդ բառերի կապ ունենալը գորգի գեղազարդման համակարգի թեմատիկ բովանդակության հետ: Պատկերագրման թեման, ըստ էության, ունի կրոնաժխտական ուղղվածություն, ներկայացնում է որոշակի

ավանդույթներ, որոնց հավերժությունն ու դրա հանդեպ հավատը շեշտում են կենաց ծառերն ու շեփորահար մունետիկները: Այս նմուշն ունի առանձնակի պատմամշակութային նշանակություն եւ ունի հետագա մանրակրկիտ հետազոտությունների կարիք:

Հայոց գորգագործական մշակույթի պատկերագրական ավանդույթների հետազոտման առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Ժ.Դ. Թվագրվող Թեմատիկ խմբին պատկանող եւս մեկ գորգ: Այն գեղազարդված է կանոնավոր շարքերով ներկայացված մարդկային ոճավորված պատկերների եւ նոճիանման ծառանախշերի կանոնավոր շարքերով: Այս դեպքում ուշագրավ է մարդկային պատկերներից յուրաքանչյուրի գլխարկի դիմային մասում պատկերված խաչազարդը: Պատկերների ոճավորման յուրահատուկ սկզբունքները, գունային երանգները, ինչպես նաեւ անգորական այծի բրդից մանված թելերի առկայությունը թույլ են տալիս այն վերագրելու Փոքր Ասիայի կենտրոնական մասերի՝ գորգագործական հնամենի ավանդույթներով հայտնի պատմական Փոքր Հայքին՝ մասնավորապես Սեբաստիա—Ակն—Արաբկիր—Տիվրիկ գորգագործական կենտրոններին: Բայց հարկ է արձանագրել, որ դրա հետ միասին կա եւս մեկ հատկանիշ. լայն գոտու գեղազարդման հիմնական տարրերից մեկը՝ Կենաց ծառ նախշի յուրահատուկ տարբերակը, բնորոշ էր պատմական Հայաստանի արեւելյան եւ հյուսիսարեւելյան, ինչպես նաեւ Ուրմիա լճի ավազանի գորգագործական կենտրոններին: Մասնավորապես դա առկա է 1731 թվականին ստեղծված վերը հիշատակված Գանձասար գորգի գեղազարդման համակարգում: Հավաքածուի վերոհիշյալ ու նման մյուս գորգերը ճանաչողական կարեւոր նշանակություն ունեն տարածաշրջանի գորգագործական մշակույթի պատմության ամբողջականացման հարցում: Ի դեպ, այս գորգի կրկնօրինակը պահվում է Վարշավայի արքունական պալատի՝ «Թերեզա Սահակյան» հավաքածուում, եւ դա մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ դրանք ստեղծվել են գորգագործական միեւնույն արհեստանոցում⁵:

Հավաքածուում կան նաեւ այս խմբում ներառված Զինանիշային տեսակին պատկանող գորգեր: Դրանք կաթողիկոսական գորգերն են, որոնք գեղազարդման հիմնական տարրով՝ արծվապատկերով պայմանավորված՝ հիմնականում հայտնի են որպես Կաթողիկոսական արծվա-

⁵ Տե՛ս <http://thenordar.com/zamok-v-varshave-s-kollekciei-kavkazskih-kovrov/>:

գորգ: Դրանց թվում աչքի ընկնող նմուշ է Վազգեն Ա. կաթողիկոսի գորգը, որն ըստ հիշատակարանի՝ գործել են 1960 թվականին՝ ենթադրաբար Լիբանանում կամ Սիրիայում (պատկեր 18):

Կատարման բարձր որակով ու պատկերագրման առումով ուշագրավ նմուշ է նաեւ 1903 թվականին հայոց Մեծ դարձի 1600-ամյակի առթիվ գործված՝ Էջմիածնի Մայր տաճարի պատկերով մետաքսահյուս գորգը⁶: Այս դեպքում առանձնահատուկ են գորգի եզրագոտիների գեղազարդման տարրերը, ընտրված մեղմ գուներանգները, որոնք բոլորն էլ համահունչ են կառույցի մանրակներին ու գորգադաշտի ընդհանուր նկարագրին:

2. ՈՒՇ ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐ

Վիշապագորգերի խմբում, ի շարս դասական վիշապագորգերի, մենք որպես առանձին ենթախումբ ներառել ենք նաեւ դրանց գեղազարդման ավանդույթները կրող ու ԺԹ.—Ի. դարերին վերաբերող վիշապագորգերը: Պայմանականորեն դրանք տարբերակել ենք Ուշ վիշապագորգեր անվանումով: Այդ ենթախմբում ընդգրկված գորգերի բնորոշման հարցում առանցքային հորինվածքն առասպելական վիշապի ոճավորումներն են: Դրանք աչքի են ընկնում պատկերագրման ձևի բազմազանությունը, որով էլ պայմանավորված է նաեւ Ուշ վիշապագորգերի տեսակների ու դրանց տարբերակների բազմազանությունը: Մայր Աթոռում պահվող գորգերի այս ենթախմբում ընդգրկված Ուշ վիշապագորգերի տեսակները հիմնականում կրում են Գուևար դասական վիշապագորգի ավանդույթները, իսկ մյուսներն իրենց պատկերագրման հատկանիշներով առանձնահատուկ են: Դրանք առավելապես աղբյուրում են Ուշ վիշապագորգերի Խնձորեսկ տեսակին բնորոշ վիշապա-պատկերի ոճավորումների պատկերագրման սկզբունքներին:

Գուհարյան ավանդույթները Մայր Աթոռի հավաքածուում ներկայացված են Սիսական տեսակի վիշապագորգերի երկու նմուշով: Երկուսն էլ աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով: Այստեղ ներկայացվածը Մայր Աթոռի՝ նախկինում գոյություն ունեցած հավաքածուների նմուշներից է, բնորոշվում է վիշապի ոճավորումների եւ ընդհանրապես գեղազարդման բոլոր մանրակների գծանկարային՝ երկրաչափականաց-

⁶ Մայր Աթոռի Հին Վեհարան, գ/հ 14:

ված տեսքով (պատկեր 19): Այն վերաբերում է ԺԹ. դ. առաջին կեսին, գեղազարդման ավանդույթներով ներկայացնում է Սյունիքի հարավային գավառների գորգագործական կենտրոնները եւ կարելոր սկզբնաղբյուր է այդ տարածաշրջանին բնորոշ վիշապագորգերի պատմության ուսումնասիրման եւ ընդհանուր նկարագրի առանձնահատկությունների բացահայտման համար: Պատկերագրման այդ նույն սկզբունքներով, բայց ավելի աշխույժ ու ներդաշնակ գույներով է վերջին շրջանում ձեռք բերված նմուշը, որը զանգեզուրյան ավանդույթների հետ կրում է նաեւ Դիզակի գորգագործական կենտրոնների ազդեցությունը⁷:

Հավաքածուում ավելի մեծ թիվ են կազմում խնամքով տեսակի եւ դրա ավանդույթները կրող մի քանի այլ տեսակներին պատկանող գորգերը: Ընդ որում՝ խնամքով տեսակը ներկայացված է միայն մեկ նմուշով: Դրա գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքը դասական է նույն ավանդույթները կրող մյուս տեսակների գորգերի համար: Այն բնորոշվում է բազմանիստ շրջանակում ներկայացված մի բարդ հորինվածքով, որի կենտրոնում՝ քառակուսի շրջանակում, ամփոփված կեռխաչ է կամ արեւի եւ հավերժության որեւէ մեկ այլ խորհրդանշան: Դրա շուրջ բոլորը պատկերված են վիշապի ութ ոճավորումներ եւ քառակուսուց ծլարձակած, կյանքի ու բնության հավերժությունը խորհրդանշող կենաց ծառերով (պատկեր 20): Հավաքածուում պահվող այս նմուշը խնդրո առարկա տեսակի եւ ընդհանրապես Ուշ վիշապագորգերի գեղազարդման համակարգերից առանձնանում է լայն գոտու գեղազարդման հիմնական հորինվածքով՝ բազմաթերթ վարդակով, որն իր հերթին կարող է աղբյուր հանդիսանալ Արցախ-Սյունիքի գորգագործական կենտրոններին վերաբերող այս գորգի ծագման վայրի առավել որոշակիացման համար:

Հավաքածուում համեմատաբար շատ են գեղազարդման այս նույն ավանդույթները ներկայացնող Գետաշեն տեսակի գորգերը: Այս դեպքում հիմնական հորինվածքը նույնպես ամփոփված է բազմանիստ շրջանակում: Դրա կենտրոնում լինում է ծաղկաթերթերով երիզված քառակուսի գծանագված վարդակ, շուրջը՝ ոճավորված ու բուսանախշային բնույթ ստացած ութ վիշապապատկեր (պատկեր 21): Այդօրինակ գորգերի գործման նշանավոր կենտրոններից մեկը Գետաշեն գյուղն էր, եւ այդ տեսակը տարբերակել ենք Գետաշեն անվանումով: Մայր Աթոռում պահ-

⁷ Տե՛ս Մայր Աթոռի գանձատուն-թանգարան, գ/հ 37:

վող նմուշները վերաբերում են պատմական Հայաստանի արեւելյան ու հյուսիսարեւելյան գորգագործական կենտրոններին: Դրանց մեծ մասը թվագրվում է ԺԸ. դարի վերջերով եւ ըստ էության նույնպես վերաբերում է Մայր Աթոռի՝ նախքան Հայաստանի խորհրդայնացումն ունեցած հավաքածուին: Կարելու է, որ այստեղ պահվող նմուշները հիմնականում ուղեգորգեր են ու հատկանշական են նրանով, որ վերը ներկայացված հորինվածքից բացի՝ մեկընդմեջ պատկերված են նաեւ Ամարաս տեսակի գորգերին բնորոշ բազմաթերթ խոշոր վարդակներ: Ընդ որում՝ այս տեսակի գորգերի գեղազարդման այդ տարբերակը, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա, վերագրում ենք Կապանի գորգագործական կենտրոններին: Խնդրո առարկա հավաքածուում եղած՝ ԺԸ. դ. վերջով եւ ԺԹ. դ. առաջին կեսով թվագրվող նմուշները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Կապանի գորգագործական կենտրոններում պահպանված այս տեսակին վերաբերող ավանդույթն ունի բավականին խոր ակունքներ:

Խնձորեսկ տեսակին բնորոշ ավանդույթների յուրահատուկ արտահայտություններն են ներկայացնում Վալֆ տեսակի Ուշ վիշապագորգերը: Այս տեսակին է պատկանում հավաքածուի երկու գորգ: Այստեղ ներկայացվածը դասական նմուշ է, աչքի է ընկնում կատարման բարձր որակով, հորինվածքների, գեղազարդման մանրակների ու գուներանգների կատարյալ ներդաշնակությամբ (պատկեր 23): Ունի նաեւ դժվար ընթեռնելի՝ հայատառ թվակիր հիշատակարան. «1900 Թ. Հ. ՄՈՒՍԱՅԵԼԻՆ ԱՆՅ...»: Այստեղ վիշապի ոճավորումները նույնպես ութն են եւ բնորոշվում են պատկերագրման ինքնատիպությամբ ու ոճավորման առավել հնամենի ավանդույթների ներկայությամբ: Դրանք բոլորն ամփոփված են մեկ ընդհանուր՝ բազմանիստ ուրվագծով շրջանակում ու ստեղծում են մեկ կուռ ամբողջություն: Այս հորինվածքի կենտրոնում կյանքի եւ բնության հավերժության հնամենի ծիսապաշտամունքային պատկերացումը խորհրդանշում է կենտրոնում ներկայացված Զարդ աշխարհի հորինվածքը: Մայր Աթոռում պահվող այս նմուշը Հայաստանի այլ թանգարանների նմուշներից առանձնանում է նաեւ գեղազարդման մանրակների՝ ոճավորված կենդանապատկերների ու քառակուսի զարդերի ու մանավանդ լայն գոտու պարունակած խորհրդաբանությամբ: Վերջինս գեղազարդված է Դադղդան (հմայական պահպանակ) զարդաշարով, որով գորգադաշտը, ըստ ժողովրդական հնամենի ծիսապաշտա-

մունքային պատկերացումների, զերծ է մնում չար աչքից եւ ընդհանրապես որեւէ վտանգից:

Է. ԱՍՏՂԱԶԱՐԴԵՐՈՎ ԳՈՐԳԵՐ

Աստղազարդը հայոց զարդարվեստի առավել հնամենի եւ ավանդական տարրերից է ու հայտնի է բազմաթիվ տարբերակներով: Այն որպես գորգի գեղազարդման համակարգի տարր հանդիպում է հայոց գորգագործական բոլոր կենտրոններում եւ բոլոր տեսակների գորգերում: Այս խմբում ընդգրկված տեսակներն առանձնանում են նրանով, որ դրանց գեղազարդման համակարգում հիմնական տարրն աստղազարդն է, որն իր հերթին հանդես է գալիս առանձին տարբերակների տեսքով: Դրանք տարբերվում են պատկերազման ձևերով, աստղաթեւերի քանակով, չափսերով եւ այլ հատկանիշներով: Պատկերվում են վանդակներում կամ առանց դրա, կանոնավոր շարքերով եւ ընդգրկում են ողջ գորգադաշտը: Սովորաբար լրացվում են բուսածաղկային նախշերով, ոճավորված կենդանապատկերներով՝ ընդհանրապես մանր հարդարանքով: Աստղազարդի ամենավաղ արտահայտությունը հայոց գորգարվեստում ներկայացված է Պաղիթիկ գորգի գեղազարդման համակարգում, ուր այն համադրված է Զարդ աշխարհի նախշի հետ: Այս հորինվածքով բնորոշվող գորգեր են պատկերված Վերածննդի նկարիչների՝ մասնավորապես Հանս Մեմլինգի, Հանս Հոլբայնի ու Վան Դեյկի կտավներում:

Այս տեսակի գորգերը մասնագիտական միջավայրում հայտնի են Լեզգի, Զեյվա, Լազախ եւ այլ անվանումներով: Մեր տիպաբանության համակարգում այն տարբերակված է Որոտան անվանումով: Ընդհանուր առմամբ՝ գորգերի այս տեսակը հայտնի էր պատմական Հայաստանի եւ ընդհանրապես Հարավային Կովկասի եւ Փոքր Ասիայի գորգագործական բոլոր կենտրոններում: Հայոց գորգագործական կենտրոններից այն առավելապես բնորոշ էր Սիսականի՝ մասնավորապես Որոտան գետի ավազանին: Այդ նկատի ունենալով՝ մենք գորգերի այդ տեսակը տարբերակել ենք Որոտան անվանումով: Մայր Աթոռում պահվում է այս տեսակին պատկանող երեք նմուշ, որոնցից մեկի գեղազարդման համակարգում էլ այս հորինվածքները ներկայացված են բազմախիտ շրջանակում ամփոփված տեսքով (տե՛ս պատկեր 10): Այստեղ ներկայացվածն ուշագրավ է աստղազարդերի թեւերին եղած հավելվածներով, ինչպես նաեւ

հիմնական հորինվածքի կենտրոնում ներկայացված բուսածաղկային նախշի պատկերագրումով (պատկեր 23): Դա վերաբերում է նաեւ լայն գոտու գեղազարդման համակարգի մատուցմանը: Ըստ էության՝ այդտեղ դրսևորված են ավանդական հորինվածքներն առանձին մանրակներով ու պատկերագրման իր մոտեցումներով լրացնելով՝ վարպետ գորգագործուն ալնհայտ կարողությունները:

Ը. «ՀԱՅԳՈՐԳ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՎԱԾ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի հավաքածուներում պահվում են նաեւ «Հայգորգ» արտադրական միավորման նկարիչների գծանկարներով գործված գորգեր, որոնցից շատերը կարելուր ներդրում են հայոց գորգարվեստի հարստացման գործում: Դրանք հիմնականում խորհրդային շրջանի հայ լավագույն գորգանկարիչ Հակոբ Քեշիշյանի ստեղծածներն են: Դրանց գեղազարդման համակարգն ամբողջությամբ արտացոլում է հայոց գորգարվեստի ավանդույթների ու նկարչի մտահղացումների ներդաշնակ ու հարուստ նկարագիրը: Նշենք, որ «Հայգորգ» արտադրական միավորումից ձեռք բերված գորգերը, որոնք ունեն նաեւ թվակիր հիշատակարաններ, մեծամասամբ ստեղծված են Վազգեն Ա. կաթողիկոսի պատվերով: Դրանց էական մասը դասական վիշապագորգերի վերամշակումներ ու դրանց թեմաներով արված հեղինակային ստեղծագործություններ են եւ այդ առումով ավանդականի ու գեղազարդման ժամանակակից պատկերացումների ուշադրավ ու հաջողված նմուշներ են: Այստեղ ներկայացված է դրանց թվին պատկանող լավագույն նմուշներից մեկը (պատկեր 24): Երեւան անվանակոչված այդ գորգի հեղինակը՝ Հակոբ Քեշիշյանը, օգտագործելով դասական վիշապագորգերի՝ մասնավորապես Ժէ. դարում գործված հանրահայտ Գրաֆ գորգի գեղազարդման համակարգում տեղ գտած առանձին հորինվածքները, ստեղծել է վիշապագորգերի նոր նմուշներ, որոնցով 1930–60-ական թվականների ընթացքում վերականգնել ու նոր հորինվածքներով հարստացրել է այդ խմբին պատկանող գորգերի գեղազարդման մանրակների ու գունեղանքների նկարագիրը:

Ըստ էության՝ այս խմբին վերաբերող գորգերը, լինելով հեղինակային ստեղծագործություններ, նաեւ պատմամշակութային նշանակության

արժեքներ եւ կարելոր սկզբնաղբյուրներ են հայոց ժամանակակից գորգարվեստն ուսումնասիրողների համար:

Թ. ԿԱՐՊԵՏՆԵՐ

Մայր Աթոռի գործվածքի հավաքածուում կան նաեւ կարպետներ: Դրանք գործված են տարբեր եղանակներով եւ ըստ այդմ էլ բաժանվում են մի քանի տեսակների: Հիմնականը երկուսն են՝ Երկերես ու մեկ երեսանի: Առաջինները բնորոշվում են նրանով, որ երկու երեսներն էլ հավասարապես ներկայացնում են տվյալ կարպետի գեղազարդման համակարգը: Կարպետների մյուս խումբը գործում են յուրահատուկ՝ այսպես կոչված օղանիւ, թե՛ օղանիւ, շուրջ եղանակների տարբերակներով: Այս դեպքերում գործվածքի գեղազարդման համակարգը դիտվում է միայն մեկ երեսին, իսկ հակառակ երեսին դիտվում են միայն նախշերի դարձերեսային գծանկարներն ու գործող թելերի ծայրերը: Թե՛ օղանիւ եղանակով գործված կարպետները հայտնի են Սումախ անվանումով: Մենք դրանք հարմար ենք գտնում միավորել խառն տեխնիկա հասկացության մեջ այնքանով, որքանով որ դրանցից յուրաքանչյուրի դեպքում սովորաբար օգտագործված է նաեւ մեզար գործելու եղանակը: Մայր Աթոռի հավաքածուում կան Երկերես ու Սումախ տեսակի կարպետներ, որոնք վերաբերում են պատմական Հայաստանի տարբեր կարպետագործական կենտրոնների եւ այս կամ այն չափով պատկերացում են տալիս հայոց մեջ ընդունված կարպետագործական ավանդույթների մասին: Երկերես կարպետների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Փոքր Հայքի կարպետագործական կենտրոններում ստեղծված կարպետը, որի գեղազարդման հիմնական տարրը շեղանկյունաձեւ ուրվագծով, սղոցատիպ եզրերով խոշոր զարդն է (պատկեր 25): Հավաքածուի ուշագրավ նմուշներից մեկն էլ վերաբերում է կարպետագործական մշակույթի դադստանյան՝ մասնավորապես ավարա-կումիկական ավանդույթներին ու այդ տեսակետից էլ կարելորություն է ներկայացնում հետազոտողների համար⁸: Նշենք, որ հիշյալ կարպետագործական կենտրոնները ծայրահեղ սակավաթիվ նմուշներով են ներկայացված Հայաստանի թանգարաններում: Ի դեպ՝ այդ նույն տարածաշրջանի Դերբենտի կարպետագործական կենտրոններին է վերաբերում նաեւ Սումախ տեսակի

⁸ Անդ, գ/հ 51:

երկու կարպետներից մեկը⁹: Այդ տեսակի կարպետներից երկրորդը վերաբերում է Վարանդայի կարպետագործական կենտրոններին եւ աչքի է ընկնում կատարման ու գեղազարդման հիմնական հորինվածքների եւ մանրակների ներկայացման բարձր մակարդակով:

Մայր Աթոռում պահվող կարպետների հավաքածուում անհամեմատ շատ են տրանսիլվանյան կարպետները: Դրանք գործել են Ռումինիայում 1940–50-ական թվականներին եւ Մայր Աթոռ են բերվել Վազգեն Ա. Վեհափառի գահակալման տարիներին:

Ժ. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ԷԹՆԻԿ ԱՅԼ ՀԱՆՐԱՅԻՆՈՒԹՅՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի թվում էական մաս են կազմում Պարսկաստանում գործված գորգերը: Դրանք բնորոշվում են ինչպես կատարման տեխնիկա-տեխնոլոգիական, այնպես էլ գեղազարդման սկզբունքների հատկանիշներով: Բուն պարսկական գորգերը ներկայացված են Սպահանի, Քաշանի, Մեշհեդի ու Թավրիզի գորգագործական կենտրոններին վերաբերող նմուշներով: Դրանց կատարումը շատ ավելի նուրբ է, գեղազարդման համակարգում էլ գերակշռում են բուսածաղկային մանր հորինվածքներն ու նաեւ գունային երանգների բազմազանությունը:

Տեխնիկա-տեխնոլոգիական յուրահատուկ հատկանիշներով տարբերակվում են հյուսիսարեւմտյան Պարսկաստանի գորգագործական կենտրոններում գործվածները: Դրանք ներկայացնում են Ուրմիա լճի ավազանի, Սոյուջ Բուլաղի, Համադանի, Լիլահանի եւ Բուրվար-Չհարմահալի գորգագործական կենտրոնների ավանդույթները, որոնք բնորոշվում են տեղական ակնհայտ հատկանիշներով: Դրանք մասնավորապես վերաբերում են հանգույցի ձեւին, հենքի եւ միջնաթելի ոլորքին, գունային երանգներին ու նաեւ գեղազարդման մանրակներին: Նշենք նաեւ, որ հյուսիսարեւմտյան Պարսկաստանի գորգագործական կենտրոններում ձեւավորված ավանդույթներում որոշակի ավանդ ունեն նաեւ հայերն ու քրդական ցեղերը: Այդ ամենով էլ պայմանավորված է հավաքածուի նշանակությունը վերոհիշյալ գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթների ու տեսակների բացահայտման համար: Որոշ գորգեր

⁹ Անդ, գ/հ 59:

ընդհանրապես պարսկական գորգագործական մշակույթի լավագույն ավանդույթները ներկայացնող նմուշներ են: Ստորեւ ներկայացվողները սույն հոգվածի ընձեռած հնարավորությունների սահմաններում թույլ են տալիս պատկերացում կազմելու ինչպես պարսկական գորգերի, այնպես էլ հավաքածուում եղած թուրքմենական, քրդական ու այլ հանրույթներին վերաբերող գորգերի մասին: Այս տեսակետից առանձնահատուկ է Գանձատանը պահվող մի նմուշ, որը հավանաբար գործել են Քերմանի գորգագործական արհեստանոցներում (պատկեր 26): Այն գեղազարդված է պարսկական գորգարվեստին բնորոշ բուսածաղկային հորինվածքներով, որոնց ներդաշնակ գուներանգները վկայում են դրա հեղինակների բարձր ճաշակի ու բանիմացության մասին: Գորգին առանձնահատուկ փայլ ու հմայք է հաղորդում հումքի հարուստ տեսականին. այդտեղ գեղազարդման առանձին մանրակների ընդգծման եւ առավել հստակ ներկայացման համար մետաքսաթելերի հետ օգտագործվել է նաեւ արծաթաթել: Այդ ամենով էլ պայմանավորված է այս նմուշի կարեւորությունը Մայր Աթոռում պահվող գորգերի հավաքածուի մշակութաբանական նշանակության գնահատման հարցում: Պարսկաստանի հնամենի գորգագործական կենտրոնների թվում առանձնակի տեղ ունի Սպահանը: Այդ քաղաքում եւ մերձակա բնակավայրերում գոյություն ունեցած գորգագործական արհեստանոցներում ստեղծված գորգերն ավանդաբար աչքի են ընկել տեսակների բազմազանությամբ, կատարման բարձր որակով ու գուներանգային բարձր հատկանիշներով: Սպահանի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի տեսակների թվում հանրահայտ են որսի թեմաներով գորգերը, որոնց վաղ նմուշները թվագրվում են ԻՁ.—ԻԷ. դարերով: Խնդրո առարկա հավաքածուի պարսկական ծագումով գորգերի թվում պահվում է Ի. դ. սկզբներին վերաբերող մետաքսաթել խավով մի որսագորգ (պատկեր 27): Դրա գեղազարդման համակարգը միանգամայն համահունչ է նախորդ դարերում ստեղծված որսի թեման ներկայացնող գորգերի գեղազարդման ավանդույթներին: Կատարված է տեխնիկա-տեխնոլոգիական բարձր մակարդակով, խավի համար օգտագործված է մետաքսաթել, գործված է պարսկական մեկուկես հանգույցներով:

Հավաքածուում մեկ նմուշով ներկայացված է պարսկական գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններից մեկը՝ Ճոշականը (պատկեր 28): Այս կենտրոնին վերաբերող գորգերից ընդհանրապես

քիչ են պահպանվել, եւ ժԹ. դ. երկրորդ կեսին գործված՝ Մայր Աթոռում պահվողն այդ սակավաթիվ նմուշներից է: Ճոշակա՞ն տեսակին պատկանող գորգերը, ի տարբերություն պարսկական գորգարվեստի հիմնական ավանդույթներից մեկի՝ բուսածաղկային հորինվածքով գեղազարդված լինելուն, այս դեպքում ներդաշնակորեն լրացված են մանր ծաղկանախշերով կազմավորված երկրաչափական տարրերով:

Ծագումնաբանական առումով ուշագրավ է նաեւ նշանախշերի յուրահատուկ մատուցմամբ բնորոշվող մի գորգ, որն ունի պարսկերեն ընդարձակ թվակիր հիշատակարան: Ըստ այդմ՝ այն գործել են 1905 թվականին եւ, մեր կարծիքով, կրում է պարսկական գորգագործական մշակույթի եւս մեկ նշանավոր կենտրոնի՝ Յեզդի ավանդույթները (պատկեր 29): Այն պատկանում է ուղեգորգային տեսակին, նեղ ու երկար է եւ կատարված է պարսկական գորգագործական մշակույթի լավագույն ավանդույթներով: Բայց մենք այս նմուշն առաջին հերթին կարեւորում ենք դրա եզրերին՝ լայն գոտու վրա, գործված հիշատակարանով. մի եզրին՝ «Քեալբալայի Դոլամ Ռեզաի կին Ֆաթիմեն նվիրում է Աբու Աբդուլլա իմամ Հուսեյնին», մյուս եզրին՝ «Այս նվիրված գորգը գողացողը, վաճառողը կամ առնողը անիծյալ լինի»: Թե ինչ պայմաններում է այս գորգը հայտնվել Մայր Աթոռի հավաքածուում, հայտնի չէ, իսկ գրությունը կարդացվել է 2008–2009 թվականներին, երբ կազմվում էին գորգերի գիտական անձնագրերը, ու այդ առիթով թարգմանվեց պատմական նշանակություն ունեցող այս հիշատակարանը: Ավելացնենք, որ այն գործված է պարսկական կամ մեկուկես հանգույցներով եւ ունի բավականաչափ բարձր խտություն (մեկ քառ. դեցիմետրում՝ 75 X 82 հանգույց):

Այս խմբում բավականաչափ շատ են պարտեզային թեմաներով գորգերը: Դրանք բնորոշվում են բուսածաղկային, մարդկային ու կենդանական պատկերների համադրությամբ ձևավորված գեղազարդման համակարգերով եւ ըստ էության ներկայացնում են խոսքով Անուշիրվան արքային վերագրվող Տարվա չորս եղանակները գորգի գեղազարդման ու բովանդակային ավանդույթների հետագա պատկերագրումների տարբերակները: Այս առումով կարեւորում ենք ուղղանկյուն շրջանակներում ամփոփված ծառանախշերով բնորոշվող եւ մասնագիտական շրջաններում քրդական բախտիար ցեղի անունով Բախտիար անվանակոչված գորգերը: Դրանց թվում առանձնահատուկ է ԺԼ. դ. վերջին եւ

ԺԹ. դ. սկզբին վերաբերող մետաքսաթելով գործված գորգը¹⁰: Այն ունի բավականին մեծ չափսեր, աչքի է ընկնում գուներանգների բացառիկ հարստությամբ ու ներդաշնակությամբ, գործված է բարձր մակարդակով, մեկուկես հանգույցով եւ բարձր խտությւն (90 x 80 հանգույց՝ մեկ քառ. դեցիմետրում):

Պարսկական գորգարվեստին վերաբերող բարձրակարգ նմուշների թվում առանձնակի տեղ ունեն նաեւ Թավրիզի, Քերմանի ու Քաշանի գորգագործական կենտրոններում ստեղծված ԺԹ. դ. երկրորդ կեսին վերաբերող եւս մի քանի գորգեր¹¹: Այս առումով էլ առանձնահատուկ է Քերմանի գորգագործական կենտրոններում ստեղծված Պարտեզային տեսակին պատկանող գորգը (պատկեր 30): Այս գորգի հենքը բամբակաթելից է, խավ թելն ու միջնաթելը՝ մետաքսից: Գեղազարդման որոշ տարրեր լրացված են մետաղաթելով: Անթերի կատարված նմուշ է, ներկայացնում է դրախտային աշգույց մի տեսարան՝ հեքիաթային թռչնապատկերներով հանդերձ: Այս դեպքում եւս գուներանգները ներդաշնակ են ու թեմային համահունչ, գործված է տեխնիկական բարձր մակարդակով, մեկուկես հանգույցով եւ ունի շատ բարձր խտություն (110 x 100 հանգույց՝ մեկ քառ. դեցիմետրում):

Ինչպես տեսնում ենք, Մայր Աթոռի թանգարաններում պահվող պարսկական գորգերը բավական կատարյալ են ու ներկայացնում են պարսկական (իրանական) գորգարվեստի լավագույն ավանդույթները:

Հավաքածուում կան նաեւ թուրքմենական եւ իսլամ դավանող այլ հանրույթներին վերաբերող մի քանի գորգեր, որոնք, ըստ էության, չեն ներկայացնում դրանց բնորոշ լավագույն ավանդույթները:

Այսպիսով՝ Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի հավաքածուն ընդհանուր առմամբ բնորոշվում է տեսակների բազմազանությամբ, որոնք հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու հայոց, ինչպես նաեւ առաջավորասիական մի ամբողջ շարք գորգագործական կենտրոններում արմատավորված ավանդույթների, գեղազարդման ու տեխնոլոգիական առանձնահատկությունների մասին: Միաժամանակ, նկատի ունենալով Մայր Աթոռում պահվող գորգերի հիման վրա հայոց գորգերի թանգարան հիմնելու հեռանկարը, հարկ

¹⁰ Անդ, գ/հ 8

¹¹ Անդ, գ/հ 25, 28:

է, որ այն համալրվի հայոց գորգագործական մշակույթը ներկայացնող գորգերի մի շարք տեսակներին պատկանող նմուշներով, որոնք առաջին չկան հավաքածուում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մայր Աթոռի թանգարան, գորգ, կարպետ, պարսկական գորգ, աստղազարդ գորգ, ուշ վիշապագորգ:

РЕЗЮМЕ

Ковер традиционно широко использовался в религиозных обрядах и во внутреннем убранстве церкви. Для удовлетворения этих и других потребностей крупные монастырские комплексы использовали сотканые в собственных мастерских или полученные в дар ковры. На их основе со временем в крупных монастырских комплексах, в том числе в кафедральном соборе Эчмиадзина, сформировались коллекции ковров. Но в силу крайне неблагоприятных геополитических условий эти коллекции регулярно подвергались разграблению. Нынешняя коллекция в основном состоит из ковров, полученных в дар от репатриантов, возвращавшихся на родину в 1940-ые годы. Заметное число составляют ковры приобретенные от производственного объединения «Айгорг» и у отдельных граждан. В коллекции также сохранилось около полутора десятка ковров из досоветской коллекции Первопрестольного монастыря. Здесь в основном представлены центры ковроделия Арцаха, Сюника, восточных провинции Васпуракана, а также бассейна озера Урмия и др. Довольно много ковров дошло из ковроткацких центров армянских областей Малой Азии и колоний. В музеях Эчмиадзина хранятся также персидские, курдские и туркменские ковры. Типологический аспект коллекций включает ковры, характеризующиеся крупными растительными, геометрическими, звездчатым композициями, фигурами стилизованных драконов, которые в целом дают возможность составить определенное представление о ковроткацкой культуре армян и соседних народов.



11. «Բարգուշատ» (հատված), Շուշի, XIX դ. կես, բուրդ, բամբակ, 408 x 220 սմ
(գ/հ 5, վեհարան):



12. «Կենաց ծառ», Բուրվար-Փերիա, 1910–20-ական թթ., բուրդ. (գ/հ 23, վեհարան):



13. «Վենաց ծառ», Հարավ-արեւելյան
Կովկաս՝ Դուբա-Դերբենտ, 1920-
ական թթ., բուրդ, բամբակ, 149 x 119 սմ
(գ/հ 9, Վեհարան):



14. «Ամառա», Արցախ՝ Դիզակ-
Վարանդա, XVIII—XIX դ. սկ., բուրդ,
բամբակ, 574 x 196 (գ/հ 12, Գանձատուն):



15. «Աղբակ» (տաբերակ), Ուրմիա
լճի ավազան՝ Նոյ-Սալմաստ, XIX դ.
առ. կես, բուրդ, բամբակ, 830 x 280
(գ/հ 60, Գանձատուն):



16. «Թեմատիկ-պատկերալիմ», Կեսարիա—
Սեբաստիա, XIX դ. երկ. կես, մետաքս
189 x 130 (գ/հ 6, Հին Վեհարան):



17. «Պատկերային», Փոքր Հայք՝
Սեբաստիա—Ակն—Տիվրիկ, XVIII դ.
(գ/հ 49, Գանձատուն):



18. «Զինանիշանային»,
Սիրիա—Լիբանան, 1960 թ.,
(գ/հ 43, Գանձատուն):



19. «Սիսական»,
Զանգեզուր—Բարգուշատ, XIX դ.
Երկրորդ կես, բուրդ, 205 x 117 սմ
(գ/հ 48, Գանձատուն):



20. «Խնձորեսկ» տիպի ուշ
վիշապագորգերի հիմնական հորինվածքը

22. «Վալֆ», Սիսական,
1900թ., բուրդ, 237 x 107
(գ/հ 30, Գանձատուն):

21. «Գետաշեն» հատված՝ հիմնական
հորինվածքը:



24. Գորգ «Երեւան», Երեւան,
1956 թ., բուրդ, բամբակ, 400 x 280,
հեղինակ՝ Հակոբ Քեչիշյան
(գ/հ 23, Գանձատուն):

23. «Որոտան», Արցախ, XX դ. սկ., բուրդ,
248 x 126 սմ (գ/հ Գանձատուն):



25. Կարպետ,
Կեսարիա — Սեբաստիա, 1910-
ակ թթ., բուրդ, 440 x 195 սմ
(գ/հ 52, Գանձատուն):



26. «Մաղկավոր», Իրան՝ Սպահան,
XIX դ. վերջ — XX դ. սկիզբ, 342 x 244 սմ
(գ/հ 44, Գանձատուն):



27. «Պատկերային», Իրան՝
Սպահան, XX դ. սկ., բուրդ,
բամբակ, մետաքս, 330 x 222 սմ
(գ/հ 45ա, Գանձատուն):



28. «Ճղճական», Կենտրոնական
Իրան՝ Ճոշական, XIX դ. երկ.
Կես, բուրդ, բամբակ, 410 x 317 սմ
(գ/հ 22, Գանձատուն):




30. «Պարտեզային», Քերման, XIX դ. վերջ, մետաքս, մետաղաթել, 218 x 104 սմ (զ/հ 28, Գանձատուն)

29. «Նշանախշով», Թավրիզ, 1905 թ., բուրդ, բամբակ, 252 x 56 սմ (զ/հ 31, Գանձատուն):

SUMMARY

Traditionally, carpets were widely used in religious ceremonies and in the interior decoration of churches. To meet these and other similar needs, large monastic complexes and churches with high reputation used carpets woven in their own workshops or received as gifts. Over time, carpet collections were formed on their basis in large monastic complexes, including the Cathedral of Holy Etchmiadzin. However, due to extremely unfavorable geopolitical conditions these collections were regularly looted or were donated to the rulers of the given regions for their safety. The current collection consists mainly of carpets donated by Diaspora Armenians, who have returned to their homeland since the 1940s, and by various Diaspora organizations. A noticeable number are carpets acquired from the “Haygorg” Production Association and from individual citizens. The collection also preserves about a dozen of carpets from the pre-Soviet collection of Yerevan. Carpet-making centers of historical eastern provinces of Armenia - Artsakh, Syunik, Vaspurakan, as well as the basin of Lake Urmia, are mainly represented here. There are also quite a lot of carpets related to Armenian settlements in Asia Minor. Carpets belonging to Persian and a number of other communities form a separate group. Typologically, the collection includes carpets characterized by large vegetal, geometric, and stellate compositions, stylized dragon figures, which give a certain idea of the carpet making culture of the Armenians and neighboring nations.



ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ ԼԻ, ՍՀՀԿ, ԳՊՀ

ՊԱՏԱՍԿԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՂ ԳԱՎԱՌԻ ԵՐԻՑՎԱՆՔ-ԱՐԾՎԱՆԻԿ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ. ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝

ՀԻՇԱՏԱՍԿՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մեր մատենագիրներից Երիցավանքի² համալիրը (հարակից բնակավայրն այժմ կոչվում է Արծվանիկ) հիշատակել են Մովսես Կաղանկատվացին³, Ստեփանոս Օրբելյանը⁴, Ղուկաս Սեբաստացին⁵, իսկ վիմագիր միակ հիշատակությունը արձանագրված է Վահանավանքում (1102 թ.)⁶: Մերձակա բնակավայրը հիշատակվել է որպես ավան⁷ կամ գյուղաքաղաք⁸:

Հստ ավանդազրույցի՝ Երեցավանքն իր անունը ստացել է Երիցակ անվամբ հոգեւորականից⁹: Սակայն շատ վկայություններ ունենք այն մա-

^{1*} Ստացվել է 4.03.2023, գրախոսվել է 7.03.2023: էլ. հասցե՝ mherkumunts@gmail.com:

² Երիցավանքը գտնվում է պատմական Սյունիքի Բաղք գավառում՝ ներկայիս Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում՝ Բարգուշատի լեռնաշղթայի արեւելյան լեռնաբազուկներից մեկի ժայռի վրա՝ Արծ[ց] վանիկ գյուղից ուղիղ գծով մոտ 2 կմ դեպի հյուսիս-արեւելք: Արծվանիկը հիշատակվում է նաեւ որպես ավան (ՀՀՇՏԲ I, էջ 452): Պատմական եւ հնագիտական աշխատություններում բազմիցս է արձանագրվել բնակավայրի հարուստ անցյալի մասին: Ք. ա. II–I հազարամյակից բնակության հետքեր կան՝ ուրարտական ժամանակաշրջանի ամրոցի ավերակներ, դամբարանադաշտեր եւ այլն: Հայտնաբերվել են Ք. ա. Դ.–Յ. դդ. ուրարտական սաղավարտներով զինվորների բրոնզե արձանիկներ (Շ. ԵՏԿԿԿ, Доспех древней Армении, Ереван, 1986, էջ 24, 33), պաշտպանիչ ճակատակալներ (Շ. ԵՏԿԿԿ, Доспех..., էջ 37):

³ ՄՈՎՍԵՍ ԿԱԿԱՆԿԱՏՎԱՅԻ, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969, էջ 214:

⁴ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 113–117 (այսուհետեւ՝ ՕՐԲԵԼՅԱՆ, 1986):

⁵ ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՅԻ, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երեւան, 1992, էջ 35:

⁶ ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՇՆԱ ԶՀԱՅՐ/ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՈՒ/ՎԱՆԱՅ ԱՌԱՋ/ՈՐԴ ՍՈՒՐԲ ՈՒՆԵՏԻՍ ՅԻՇ/ԵՋԻԲ ՅԱՂԱԽԹՍ (Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վահանավանք (Պատմահնագիտական ուսումնասիրություն), Երեւան, 2007, էջ 65–66):

⁷ ՐԱՖԻ, Երկերի ժողովածու, հտ. VI, Երեւան, 1962, էջ 498 (այսուհետեւ՝ ՐԱՖԻ), Ղ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երեւան, 1992, էջ 35:

⁸ ՐԱՖԻ, VIII, էջ 478:

⁹ Ս. ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, էջ 113–117:

սին, որ ոչ թե անձերից են առաջացել վանքերի կամ հիշարժան վայրերի անունները, այլ, հակառակը, անձնանունները կամ մականուններն են առաջացել տեղանուններից (հմմտ՝ Խորեա > Խորենացի, Նարեկ > Նարեկացի, Տաթեւ > Տաթեւացի, Որոտան > Որոտնեցի եւ այլն)։ Հնարավոր է, որ այս տեղանունից է հոգեւորականը ստացել իր անունը՝ Երեցակ¹⁰, բայց այս դեպքում չի նշվում տեղանվան ածանցը՝ -ացի։ Այս ենթադրության համար հիմք կարող է ծառայել այն, որ Երեց, այլեւ Երեցակ հասարակ անունը գրեթե չի հանդիպում հայոց անձնանուններում։ Օրինակ՝ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» Երեց անձնանվանը վերաբերող բառահոգւթում հանդիպում ենք. «Անդրանիկ. մի անգամ եմ գտնում գործածված ԺԴ. դարում. բայց հմմտ. նաեւ Երեցտիկին եւ Երիցակ»¹¹։ Ենթադրելի է, որ սկզբնապես գոյություն է ունեցել վանքը, ապա մի բարեշնորհ հոգեւորականի օգնությամբ այն նոր համարում է ձեռք բերել, վերականգնվել է վանքապատկան տնտեսությունը, զարգացել են հոգեւոր ծառայությունները։ Ժամանակի ընթացքում վանքի անունը զուգորդվել է հոգեւորականի անվանը, ինչի արդյունքում նշանավորվել են եւ վանքը, եւ նրա անխոնջ սպասավորը։ Ասվածը թերեւս տրամաբանական է դառնում նաեւ Երեց բառի ծագումնաբանական քննությամբ։ Երեց-ը բնիկ հնդեւրոպական ծագմամբ բառ է՝ *preiskhu-¹² «ծեր, տարեց, գլխավոր»։ Գ. Զահուկյանը բերում է հնդեվրոպական *per- «առաջ» արմատից՝ *preis-ku-¹³։ Այս արմատը հնդեվրոպական լեզուների մեծ մասին անցել ու բազմաթիվ ձեւիմաստային տարբերակներ է առաջ բերել¹⁴, մասնավորապես, ածանցական ձեւով՝ «առաջ, դուրս, վերելից այն կողմ, միջով» իմաստներով։ Նշված իմաստներով՝ «ավագ, մեծ, առաջ, ծեր, հին» հանդիպում է նաեւ ալբաներենում, հունարենում, լատիներենում, գերմաներենում եւ այլն։ Հ. Աճառյանը կանոնավորում է հայերենում ունեցած գործածության հարցը. բառի հնագույն նշանակությունն է «անդրանիկ, մեծ», իսկ «քահանա» իմաստը ստացել է քրիստոնեության մուտք գործելուց հետո՝ հունական բնագրերի թարգմանությունների միջոցով (հունարենում, ֆրանսերենում եւ այլ լեզուներ

¹⁰ Ձի բացառվում նաեւ Երեց հասարակ անունից հատուկ անվան անցումը։

¹¹ Հ. ԱճԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 142։

¹² Հ. ԱճԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1926, էջ 52–53 (այսուհետեւ՝ ՀԱԲ)։

¹³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 225։

¹⁴ J. POKORNY, Indogermanisches Etymologisches Wörterbuch, 1959, p. 810–816.

րում նույնպես տեսնում ենք «քահանա» իմաստը¹⁵): Հիշատակումներից ըմբռնելի է նաեւ, որ վանական համալիրը դեռեւս Օրբելյանների շրջանից գրեթե 800 տարի առաջ՝ մոտավորապես Ե. դարում, գոյություն է ունեցել: Չենք կարող հստակեցնել, թե վանքի՝ շրջակայքի հոգեւոր կյանքում ունեցած «ավագ» կարգավիճակից են առաջ եկել տեղանունը եւ համալիրի անունը, թե՞ առաջացել են տեղանքի՝ շրջապատի նկատմամբ ունեցած բարձրագույն դիրքից, ապա անցել նաեւ բնակավայրի անվանը: Հնարավոր է նաեւ, որ բնակավայրի՝ մյուս գյուղերի համեմատությամբ «ավագ, մեծ» լինելուց է առաջացել հատկանունը (արդյո՞ք նույն կերպ է ձեւավորվել Շնհեր անունը՝ Շնոյ հեր[ք]¹⁶, ինչպես վկայում են ավանդությունները, Արցախում՝ Մեծ շեն եւ այլն): Ստեփանոս Օրբելյանի վկայաբերումը՝ Երեւանի հոգեւորականի անունից վանքի առաջացած լինելու մասին ավանդազրույցը, լայն տարածում է ունեցել ժողովրդի մեջ: Ավանդազրույցից պարզ է դառնում, որ տեղանունը ժողովրդական ստուգաբանության է ենթարկվել, որից էլ առաջացել է մի հրաշալի գյուղանուն՝ Արծվանիկ: Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ ներառված Տաթևի հարկացուցակում այն նշվում է Մյուս Բաղք գավառի գյուղերի ցանկի առաջին տողում՝ Երեծ՝ 12 միավոր հարկով: Եւ այն, որ ժողովրդական ավանդազրույցի հետեւանքով Երեծ || Երեց անունը տարբեր շրջաններում փոփոխությունների է ենթարկվել, տեսնում ենք հենց տեղանվան բառաբանությունն անցկացնելիս:

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

1. Սյունիք-Արցախ բարբառային տարածքում երեց բառի բարբառային տարբերակն է իրից || իրիս > իրիսկիմ, իրիսփոխան: Հավանական է, որ Երեծ գյուղանունը հետագայում՝ հոգեւոր կառույցի երբեմնի փառքի շրջանում, հատկանշվել է եկեղեցով (հմմտ.՝ Տաթև–Տաթևի վանք, Գլաձոր–Գլաձորի վանք եւ այլն), որի արդյունքում այն անվանվել է Երեծ || Երեց վանք (մինչեւ Թ. դարը), իսկ հետագայում՝ ԺԲ. դարից հետո, ժողովրդական ստուգաբանությամբ Երեծ || Երեց վանք-ը դարձել է Արծվանիկ: Վերջինիս վերաբերյալ մեզ ավանդություն չի հասել,

¹⁵ Այս մասին տես ՀԱԲ, էջ 53:

¹⁶ Տես Ստեփանոս Օրբելյանի Պատմության հնագույն ձեռագիրը (թիվ 6271), ընդօրինակվել է 1513 թ.:

բայց կա մի կարեւոր հուշում. ինչպես ցույց են տալիս եկեղեցու հարակից շինությունները, այս տարածքում եղել է վանական համալիր, որի հետեւանքով ժողովրդական ստուգաբանությամբ գյուղանունը անցել է հետեւյալ տարբերակներով՝ Երեմ վանք > Արծվանք > Արծվանիք > Արծվանիկ: Երեմ-ը դարձել է Արծ հետեւյալ փոփոխությամբ՝ բառասկզբի ե > ա փոփոխությունը հանդիպում է Կապանի շրջանի խոսվածքներում եւ առհասարակ՝ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում. գրաբարի ե-ն բարբառախմբում դարձել է ա հետեւյալ բառերում՝ երկան-ք > աբկան-ք (Արկանիձոր > Ըրկենանց), այլեւ՝ երազ > աբազ եւ այլն: Բառամիջի ե-ն շեշտագուրկ դիրքում ընկել է երեմ > աբ[ե]մ -> բրծ[ց]-, իսկ վանք բառի հոգնակին ըմբռնվել է -վանիք, որից հետո էլ՝ -վանիկ՝ Արծվանիկ:

2. Հնարավոր է, որ տեղանունը ժողովրդական ստուգաբանության ենթարկվել է հատկապես քրիստոնեությունից հետո: Տեղանվան առաջացումը (կանխադրումով) առնչվում է արծուի-եւան-իկ կաղապարի հետ, որը նույն ժողովրդական ստուգաբանությամբ կարող էր դառնալ Երեմ, ապա Երեմ վանք: Այս տեսակետը կարող է հերքվել կամ հաստատվել հնագիտական եւ պատմական ուսումնասիրությունների համադրմամբ, որովհետեւ տարածաշրջանում, այդուհանդերձ, պահպանել են ուրարտական շերտի տեղանուններ, ինչպես Գորիս, Շոռնոխ, Հարժիս եւ այլն: Սույն խնդրի շրջանակներում չենք կարող բացառել տեղանվան՝ ուրարտական շերտից առաջ եկած լինելու հնարավորությունը, քանի որ, ինչպես նշվեց վերելում, նյութական աղբյուրները վկայում են նախաքրիստոնեական քաղաքակրթության հետքերի մասին: Այսպես՝ Հ. Կարազյուզյանը բերում է մի տեղանուն՝ Արծիմ, որ հիշատակվում է Իշպուինի եւ Մենուայի՝ Սյունիքում թողած ժայռափոր արձանագրության մեջ¹⁷: Սյունիքում այդ անվան մոտ է Արծվանիկը, որ, ինչպես նշեցինք, կարող էր առաջանալ հետագայում՝ մասնա-

¹⁷ Արձանագրությունը հայտնաբերվել է 1989 թ. ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի երկրաբան Վ. Իգումնովի կողմից: Այն թերեւս պիտի համարել տարածաշրջանում առկա ուրարտական հուշարձաններից հնագույնը: Սեպագիրն ունի հինգ տող՝ 1մ երկարության եւ 13–15 սմ լայնության վրա՝ քանդակված Ք. ա. մոտ 820-ական թվականներին (ըստ այդմ՝ փորագրված է երբեմնի բերդաքաղաքի հիմնադրման հուշարձանից (782) շուրջ 40 տարի առաջ): Մենուա թագավորի (810–788) հրամանով Իշպուինե (825–810) թագավորի անունից կազմված սեպագրի տեղանունները հիմնականում ընդգրկում են Սյունիքի եւ Նախիջեւանի «եթուինի» երկրի սահմանները: Ըստ այդմ կարծում են, որ արձանագրության մեջ հիշատակված Բուլուլա լեռը մինչեւ հիմա նույն անունն է կրում, իսկ Արծին տեղանունը առնչակցում են Զուլֆայի (Երնջակ գավառի վաղեմի տարածքները) Արագին բնակավայրի անվան հետ:

վորապես քրիստոնեության ընդունումից հետո ընկած շրջանում, հնարավոր լեզվական փոխազդեցությունների հետեւանքով կամ ժողովրդական ստուգաբանության միջոցով, որը բնորոշ երեւույթ է Սյունիքի տեղանվանական համակարգում: Հետազոտողները նկատում են, որ Բարձր Հայքի, Աղձնիքի եւ Սյունիքի միեւնույն անունը կրող քաղաքները բնակեցված են եղել միեւնույն լեզվաընտանիքին պատկանող ցեղային միավորումներով¹⁸: Արձանագրության երկրորդ եւ երրորդ տողերում արժ արմատով երկու բնակավայր է հիշատակվում.

1. Խալդյան զորությամբ Իշպուհինե Սարգուրորդին ասում է (°).

2. Մինուա Իշպուհին որդին Արծիմնե (քաղաքի) երկիրը գրավեց, Իշ[...]
(քաղաքի) [երկիրը] (գրավեց).

3. Արծիկումնե (°) (քաղաքի) [երկիրը] (գրավեց). Այանհանե (քաղաքի) երկիրը (գրավեց). (մարդկանց) սպանեց, վտարեց:

4. Վերադարձին հիմնեց Խալդեի կոթողը Բուլուա (լեռան) վրա: Սահմանեց կարգ.

5. Առարկաներն (գանձերն)¹⁹ այս Խալդեին թող զոհաբերվեն, (մեկ) ցլիկ (թող զոհաբերվի) Խալդե տիրոջն իր բարձրեալ Բուլուա(լեռան) վրա²⁰:

Արձանագրության մեջ հիշատակված Արծիմնե տեղանվան առաջին ստուգաբանական փորձի մեջ նշվում է, որ արմատը *arš-*ն է, իսկ *-ine-*ն «թերեւս, ուրարտերենի վերջածանցներից մեկն է այստեղ»: Ըստ հեղինակների՝ տեղանունը ծագում է «հնդեւրոպական նախալեզվի *arg-, «փայլել», «ցոլք», «լույս» արմատից: Սրանով կազմված տեղանունները լայնորեն տարածված էին Հայկական լեռնաշխարհում (Արծանիա-Արածանի, Արծն, Արծափ, Արծկե, Արծաշու եւ այլն)²¹: Արծիկումնե տեղանվան համար հոգվածի հեղինակները կանխադրում են բարդ կազմություն՝ արծ (*arš*) եւ *qume* (°): Վերջինս «նույնպես ունի հնդեւրոպական ծագում եւ առնչվում է հայերենի գոմ բառի հետ: Հնում այն ունեցել է նաեւ «բնակավայր» նշանակությունը՝ Արծիկումնե > «Ճերմակավան»²²: Մեզ չի հանդիպել

¹⁸ Այս մասին կարելի է տեսնել՝ Յ. ԿԱՐԱԳԵՈՋՅԱՆ, Սեպագիր տեղանուններ, Երեւան, 1998, էջ 89–90:

¹⁹ Վ. ԻԳՈՒՄԵՆՈՎ, Հ. ԿԱՐԱԳԵՈՋՅԱՆ, Ս. ՀՄԱՅԱԿՅԱՆ, Օձասարի սեպագիր արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, Երեւան, 1997, էջ 194:

²⁰ Վերծանությունը քաղել ենք սույն աշխատությունից՝ ԿԱՐԱԳԵՈՋՅԱՆ, 1989, էջ 324:

²¹ ԻԳՈՒՄԵՆՈՎ ԵՒ ԱՅԼՔ, Օձասարի..., էջ 195:

²² Անդ, էջ 196:

որեւէ գիտական աշխատանք, որտեղ լեզվական զուգահեռներ են անցկացվում սեպագրում նշված արժատով տեղանունների եւ Սյունիքի կամ նրա շրջակայքի այս կամ այն բնակավայրի միջեւ:

Արդ՝ Երիցվանք եւ Արծվանիկ բառերի ստուգաբանական երկրորդ վարկածը այն է, որ, հնարավոր է, այն առնչվում է ուրարտական արձանագրության մեջ նշված արժատին: Այս տեսակետի համար հիմնավորումներ կարող են լինել՝

Հայ մատենագրական աղբյուրներում երեց բառը չի հանդիպում ծվերջնահնչյունով: Կարծում ենք, որ եթե Թ. դարում ընկալված լիներ, որ բնակավայրը երեց սովորական գոյականից է, ապա նույն շրջանում եւ դրանից հետո թերեւս պիտի հանդիպեր ց- վերջնահնչյով: Այսինքն՝ հեղինակները եւ գրչագրողները բնակավայրի անունը նշել են այնպես, ինչպես տարածված է եղել ժողովրդի մեջ: Թե՛ գրաբարում, թե՛ հիշյալ տարածքի խոսվածքներում երեց բառը ծ վերջնահնչյով չի հանդիպում: Կարող էր լինել ց կամ ս:

Բնակավայրի եւ նրա շրջակայքի ուրարտական շերտն այնքան հարուստ է, որ ենթադրվում է մի մեծ բնակավայրի գոյություն մերօրյա Արծվանիկ գյուղի տարածքում կամ նրա շրջակայքում՝ Երիցվանքի հարակից մասերում: Հիշենք, որ Սյունիքում առանձնապես մեծ բնակավայրեր չեն հիշատակվում, իսկ Երեւո բնակավայրը բավական մարդաշատ էր եւ կենտրոնական դիրք է գրավել Սյունյաց գավառների շրջանում: Բնակատեղին ունի հարուստ բնություն, առանձնանում է բնակության համար բարենպաստ պայմաններով, եւ, որ չափազանց կարեւոր է, դեռ վաղնջագույն ժամանակներից հայտնի է եղել մետաղի հանքերի շահագործմամբ, որը զարգացման որոշակի նախապայմաններ է ստեղծել²³: Ուշ բրոնզե դարին վերագրվող նյութեր հայտնաբերվել են նաեւ Արծվանիկում (դաշտ № 34)²⁴: Հնագիտական պեղումների արդյունքում (այդպիսիք քիչ են իրականացվել նշված վայրերում²⁵) այս տարածաշրջանում հայտնաբերվել են մետաղագործության բնագավառին պատկանող նյութեր (Տանձավեր, Շիկահող, Կապան): Արժեքավոր տեղեկություններ կարող են հաղորդել Եղ-

²³ Առհասարակ Սյունիքի վաղ շրջանի մետաղի հանքարդյունաբերության մասին կարելի է տեսնել Օ. Խնկիկյանի աշխատության մեջ՝ Օ. ХНКИКЯН, Syunik During the Bronze and Iron Ages, Mayreni Publishing, 2002, 266 p., տպագիր:

²⁴ ОННИК С. ХНКИКЯН, Syunik..., p. 45–46.

²⁵ Այս մասին տե՛ս Հայկական գանձարան՝ <http://treasury.am/>:

վարդ գյուղում վերջերս հայտնաբերված իրերը²⁶: Դրանցից մեկը, հավանաբար, ձիու ճակատակալ է, որը սեպագրված է: Այն դեռևս վերծանված չէ. սեպագիրն ամբողջությամբ բացված չէ: Բուն նյութը չծանրաբեռնելու նպատակով նշենք միայն, որ Սյունիքը հարուստ է մետաղահանքերով, եւ մետաղի շահագործումը սկսվել է դեռևս նախաուրարտական շրջանից²⁷: Եւ ասվածի թերեւս ամենավառ վկայությունն է ուրարտական ժամանակաշրջանին վերագրվող առյուծի արձանիկը, որ գտնվել է Կապանի շրջանի Սզնակ գյուղում, մետաղյա բազմաթիվ առարկաներ՝ զարդեր, արձանիկներ, զենքեր եւ այլն: «Հայկական սովետական հանրագիտարանը» նշում է. «Արծվանիկի տարածքում են գտնվում Կարմրավանք գյուղատեղին՝ եկեղեցով եւ գերեզմանատնով, ինչպես նաեւ Ագռավի տապան եւ Ճգնավորի մատուռ միջնադարյան կառույցները: Հնագույն ամրոցի ավերակներում գտնվել են (մոտ մ. թ. ա. Դ.—Ա. դդ.) ձայնարկու գուսանների բրոնզե արձանիկներ: Արձանիկների աջ ձեռքերին ագուցված են շան, իսկ գլուխներին՝ աքաղաղի կատարներով եւ կենդանիների եղջյուրներով դիմակներ, որոնք եղել են կենդանիների պաշտամունքի խորհրդանիշներ: Դրանք լայն պատկերացում են տալիս ձայնարկու գուսանների զգեստների մասին: Արձանիկներն այժմ պահվում են Մոսկվայում՝ Պատմության պետական թանգարանում»²⁸:

Արծվանիկ տեղանունը միաձեւ չի հիշատակվում. կան տեղանվան տարբերակներ, որ վերաբերում են զանազան ժամանակներին ու խոսվածքներին՝ Արծեւանիք, Արծվեմիկ, Արցեւանիկ, Լրցվանեք, Երեց, Երեց-Երեցվանիկ, Երեցվանիկ, Երիցվանիկ, Երիցվանք, Երիցվանեկ, Երիցվանիկ, Երիցվանք, Երեցու վանք, Կարմիր վանք²⁹, Իրիցվանիկ³⁰: ԲաՖֆին նույնացնում է Արծվանիկը եւ Նախիջեւանիկը, որ «մի ժամանակ Բարգյուշատի վիճակի գյուղաքաղաքն էր»³¹: Ըստ ԲաՖֆու, «այդ ավանը կոչվում է նաեւ Երիցվանիկ, Երիցակի վանքի պատճառով, որ գտնվում է ավանի մոտ, լեռան գագաթի վրա, եւ ժողովրդի մեջ հայտնի է անու-

²⁶ Իրերը հայտնաբերվել են 2016 թվականին եւ գտնվում են Կապանի երկրագիտական թանգարանում, որի տնօրեն Ա. Հայրապետյանը տրամադրեց նկարները (դրանք հրապարակվում են առաջին անգամ):

²⁷ Այս մասին կարելի է տեսնել՝ Օ. ՄՈՒՄԿՅԱՆ, Syunik..., էջ 102—106 («Metallurgy»):

²⁸ Հայկական սովետական հանրագիտարան, Երեւան, 1976, հտ. Բ., էջ 72:

²⁹ Տեղանունների բառարան, հտ. 1, էջ 452:

³⁰ ԱՔՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՅԻ, Պատմություն, Երեւան, 1975, էջ 155:

³¹ ՐԱՖԳԻ, VIII, էջ 478:

նովս Կարմիր վանք»³²: Կապանի եւ Արծվանիկի մերօրյա խոսվածքում հնչում է Ըոցըվանէգ || Ըրցվանէգ || Ըրցվանէք, թեքված ձեւերում՝ Ըրցվանգա եւ այլն: Զուգահեռելով Արծինե (եթե ճիշտ է ընթերցված-վերծանված արձանագրությունը) եւ մեր օրերում պահպանված Արծվանիկ տեղանունները, կարող ենք ենթադրել, որ բառը ոչ միայն տեղաշարժեր է կրել հնչունական առումով, այլեւ պարունակում է ժողովրդական ստուգաբանության շերտեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղանունների ստուգաբանությունը եւ առհասարակ քննությունը չափազանց բարդ գործընթաց է, եւ ինչպես նկատում ենք, շաղկապվում է այլ գիտակարգերում արձանագրված տեղեկությունների եւ փաստերի հետ: Մատենագրական աղբյուրները, պատմական, հնագիտական եւ ազգագրական նյութը, այդուհանդերձ, հնարավորություն են տալիս որոշակի մակարդակում վերականգնելու այդ տեղանունները: Նման աշխատանքները զերծ չեն բացթողումներից, հնարավոր վրիպումներից, որ կարող են ի հայտ գալ անընդհատ զարգացող գիտության որեւէ մակարդակում, որովհետեւ գործ ունենք ժողովրդական լեզվում առկայացած հնագիտական նյութի հետ. տեղանուն, որ կարող էր փոփոխություններ կրել լեզվի տարբերակների փոփոխության, օտար լեզուների ազդեցության, ժողովրդական պատկերացումների եւ իմաստային ըմբռնումների արդյունքում: Արդ՝ փորձենք զուգահեռել ուրարտական արձանագրության Արծինե եւ Արծվանիկ բառերը: Մինչ տեղանունների տարբերակների ձեւիմաստային քննության անցնելը, այստեղ ամրագրենք, որ Արծինե՝ ուրարտական շրջանից հիշատակվող տեղանունը հետագայում ժողովրդական ստուգաբանությամբ կարող էր ունենալ [Ա]Երեծ, Երեց, Երեցակ տարբերակները եւ նաեւ չի բացառվում՝ ժողովրդի մեջ կարող են պահպանված լինել Արծինե > Արծվանի- > Ըրցըվանե- եւ այլ հնարավոր տարբերակները: Հետեւաբար մենք կարող ենք քննել Արծինե, Երեծ, ապա Արծվանիկ (ավելի ուշ շրջանում գործածվող) բառերը՝ զուգահեռելով դրանց բաղադրիչները ըստ ձեւիմաստային հատկանիշների: Այս բառերի առաջին բաղադ-

³² Անդ: Այս մասին առավել հանգամանալից տե՛ս Մ. ՔՈՒՄՈՒՆՅՑ, Դուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկ կամ Պատմություն Ղափանցոց»-ի տեղանվանական համակարգը, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, № 2(10), 2022, էջ 94—96:

րիչները նույն հիմքից են՝ արժ: Երեւոյն հնարավոր ժողովրդական տարբերակներից մեկն է՝ ա > ե փոփոխությամբ (վերելի՝ առաջին տարբերակում մենք ֆննեցինք ե > ա փոփոխությունը), ե-ի ազդեցությամբ բառամիջի ե-ի աճմամբ: Կարծում ենք՝ այս տարբերակի ժողովրդական ստուգաբանությունը լիարժեք չէ, այսինքն՝ հնարավոր է՝ վանքի անունը համըմբունվել է գյուղանվան հետ երեց[ծ] ձևով կամ բաղադրիչով, ապա հետագայում առավելապես հիշատակվել երեցվանիկ³³, ինչպես նշվում է Վահանավանքի արձանագրության մեջ: Սակայն տարրնթերցումներում՝ Արծեվանիք, Արծվենիկ, Արցեվանիկ, Լրցվանեք, հստակ նկատվում է, որ ոչ թե երեւոն է տարրնթերցվել արծվանի-ի, այլ հակառակը՝ արժ բաղադրիչն է ըմբունվել երեց[ծ], եւ, այդուհանդերձ, զուգահեռ պահպանվել են բանավոր-բարբառային տարբերակները³⁴:

Արծինե տեղանվան արժ բաղադրիչը կապվում է հնդեւրոպական «փայլ» իմաստով բառի հետ, որի նախնական իմաստն է «փայլ, ցուր, լույս»³⁵: Ընդունելով մեր նախորդների տեսակետները՝ փորձենք կատարել մասնակի շտկումներ եւ հավելումներ: Այս բառից է արծաթը, որ տարածված է հնդեվրոպական լեզուներում, այլեւ «վառել»-ը, որ հայերենում արտահայտվում է բառաբարդմամբ՝ արծարծել՝ «թեթացնել, բորբել» իմաստով: Նկատում ենք, որ բառը մետաղի հետ ունեցած հատկանիշից է ձեւավորել իմաստները: Հետեւաբար պետք է կարծել, որ Հայաստանի տարբեր վայրերում հանդիպող ուրարտական արժ արմատը, որ տրվել է տեղանուններին, մատնանշում է ոչ թե ստույգ քաղաքի անուն, այլ այդ վայրին բնորոշ անվանում, այսինքն՝ այդ տարածքի՝ «երկրի» ինչ-որ բանով հայտնի լինելու հանգամանքը: Այս դատողության հավաստիությունը թերեւս լրացնում է ուրարտական -ine[ի] ածանցը, որը կրում է «տեղ, վայր, երկիր, տարածք» իմաստները³⁶: Հայերենի խոսվածքներում

³³ «...ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՈՅՈՒՄ ՎԱՆԱՅ...» (Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վահանավանք (պատմահնագիտական ուսումնասիրություն), Երեւան, 2007, էջ 66):

³⁴ Բառի՝ ժողովրդական փոփոխությունը՝ արժ-ը այլեւս ընկալել երեց, չի կատարվել ամբողջական, եւ երեւ բառի վերջադիր ծ-ն կարող է մնացուկ լինել արժ-ի, որ ժողովուրդը հետագայում աղերսել է երիցակի անվան հետ եւ դրան զուգահեռ պահպանել արժ-ով, րժ-ով եւ երց-ով տարբերակները:

³⁵ ՀԱՐ I, էջ 319:

³⁶ Այս ածանցի «տեղ» մատնանշող իմաստին թերեւս առաջինը անդրադարձել է Ջ. Մարկվարտը (J. MARQUART, Die Entstehung und Wiederherstellung der armenischen nation, Berlin, 1919, էջ 67): Այս ածանցի մասին կարելի է տեսնել նաեւ Г. Меликишвили, Урартский язык, Москва, 1964, էջ 30, 42:

«ուրարտերենի վերջածանցը»³⁷ կարող էր տարբերակներով զրահավորվել, որը, ինչպես նկատում ենք, հետագայում տեղանվան տարբերակների մեծ մասում կարող էր նույնացվել վաճառքի կամ -վաճառքի հետ: Այս պարագայում նկատի առնելով առհասարակ Սյունիքի եւ մասնավորապես Կապանի տարածքի մետաղի հանքերի առկայությունը, մետաղի մշակման եւ արտահանման բնագավառներում դեռեւս հնագույն ժամանակներից հայտնի լինելու պարագան՝ տրվել է արծանվանումը *-ine[ı]* ածանցով՝ մատնանշելով այն երկիրը, որը հարուստ է մետաղական հանքերով, հայտնի մետաղի մշակման բնագավառում: Եւ հենց այս հիմունքով ժողովրդի մեջ պահպանվել է արծ-եւան[իմե]-ի կաղապարը, որ տարբերակներ է առաջ բերել, որոնցից վերջինը Արծվանիկ-ն է:

Ըստ էության՝ նշված երկու տարբերակները չեն հակասում միմյանց, այլ, ընդհակառակը, մատնանշում են բուն հայկական տեղանվան՝ պատմական խոր անցյալից ծագած, լեզվի զարգացման տարբեր շերտերով անցած եւ զանազան ազդեցություններ կրած լինելու հանգամանքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Երիցավանքը գտնվում է պատմական Սյունիքի Բաղք գավառում՝ ներկայիս Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում: Ըստ ավանդազրույցների՝ Երիցավանքից է առաջացել Արծվանիկ բնակավայրի անունը, որի վարչական տարածքի մեջ է ընդգրկվում Երիցավանքի եկեղեցական համալիրը:

Պատմական եւ հնագիտական աշխատություններում նշվում են, որ Արծվանիկում պահպանվել են Ք. ա. II—I հազարամյակների հայկական բնակության հետքեր եւ հուշարձաններ: Պահպանվել են նաեւ ուրարտական ժամանակաշրջանի ամրոցի ավերակներ, դամբարանադաշտեր եւ այլն:

Մատենագիրության մեջ Երիցավանքի մասին հիշատակել են Մովսես Կաղանկատվացին, Ստեփանոս Օրբելյանը, Ղուկաս Սեբաստացին եւ ուրիշներ: Վիմագիր առաջին արձանագրությունը պահպանվում է Վահանավանքում (1102 թ.):

³⁷ Ուրարտական արձանագրություններում այն ունեցել է նաեւ պատկանելության իմաստ: Այս մասին կարելի է տեսնել՝ Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, Введение (Вестник древней истории, 1953, № 1), Местоимения (<http://annales.info/>):

Ըստ ավանդազրույցի՝ Երեցավանքն իր անունը ստացել է Երիցակ անունով հայ հոգեւորականից: Հնարավոր է, որ տեղանունը ժողովրդական ստուգաբանության ենթարկվել է քրիստոնեությունից հետո: Տեղանվան առաջացումը առնչակցվում է արծուի-եւան-ի՝ կաղապարի հետ, որ նույն ժողովրդական ստուգաբանությամբ կարող էր դառնալ Երեծ, ապա Երեծ վանք:

Ստուգաբանական առաջին վարկածն այն է, որ տեղանունը ծագում է հնդեւրոպական նախալեզվի *arǵ-, «փայլել», «ցոլք», «լույս» արմատից: Սրանով կազմված տեղանունները լայն տարածում ունենին Հայկական լեռնաշխարհում (Արծանիա-Արածանի, Արծն, Արծափ, Արծկե, Արծաշ-ֆու եւ այլն):

Համաձայն երկրորդ վարկածի՝ Երիցվանք (> Արծվանիկ) բառը առնչվում է արծ արմատին, որ նշված է նաեւ Օձասարի ուրարտական արձանագրության մեջ: Նշում են, որ Արծինե տեղանվան արծ արմատը կապվում է հնդեւրոպական «փայլ» իմաստով բառի հետ, որի նախնական իմաստն է «փայլ, ցոլք, լույս»:

Փաստորեն՝ Հայաստանի տարբեր վայրերում հանդիպող ուրարտական արծ արմատը, որ տրվել է տեղանուններին, մատնանշում է ոչ թե կոնկրետ քաղաքի անուն, այլ այդ վայրին բնորոշ անվանում, այսինքն՝ այդ տարածքի՝ «երկրի» ինչ-որ բանով հայտնի լինելը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արծանիա-Արածանի, Արծն, Արծափ, Արծկե, Երիցվան, Երիցակ, ուրարտական անվանում, ժողովրդական ստուգաբանություն, տեղանուն:

РЕЗЮМЕ

Ерицаванк расположен в провинции Багк исторического Сюника, Капанского района современного Сюникского марза. По преданию, название поселка Арцваник произошло от Ерицванка, в административную территорию которого входит церковный комплекс Ерицванк.

В историко-археологических работах отмечается, что в Арцванике сохранились следы и памятники армянского поселения II—I тысячелетий до н. э. Сохранились также руины урартской крепости, захоронений и т. д. Ерицаванк упоминается в письменных источниках Мовсесом Каганкатвацци, Степаносом Орбеляном, Гукасом Себастиаци и другими. Единственная литографическая запись с упоминанием Ерицаванка сохранилась в Ваанаванке (1102 г.).

Согласно преданиям, Еретсаванк (Երեցաձախն) получил свое название от армянского священнослужителя по имени Ерицак (Երիցակ). Возможно, после христианства топоним в разговорном языке подвергся некоторым изменениям. Происхождение топонима связано с образцом арцуи-еван-ик (արծուի-եւան-իք), который по той же народной этимологии мог стать Ерец (Երեւ), а затем Ерец ванк (Երեւ ձախն) монастырь.

Первая этимологическая гипотеза состоит в том, что топоним происходит от индоевропейского корня *arg-, «светить», «светить», «светить». Образованные при этом топонимы были широко распространены в Армянском нагорье (Арцания-Арацани, Арцн, Арцап, Арцке, Арцашку (Արծախիս-Արաժախի, Արծն, Արծախ, Արծկե, Արծաշքու) и др).

Согласно второй гипотезе, слово Ерицванк (> Арцваник) (Երիցաձախն (> Արծախնիկ)) связано с корнем арц (արծ), который также упоминается в Одзасарской урартской надписи. Отмечается, что корень имени Арцине (Արծինե) связан с индоевропейским словом арц (արծ), означающим «сияние», первоначальным значением которого является «сияние, яркость, свет».

На самом деле урартский корень, встречающийся в разных регионах Армении, который был дан топонимам, указывает не на название конкретного города, а на имя, характеризующее указанное место, то есть на то, чем местность, «страна» известна.

SUMMARY

Yeritsavank is located in the Bagh province of historical Syunik, Kapan region of today's Syunik province. According to legend, the name of the village Artsuanik comes from Yeritsavank, the administrative territory of which includes the Yeritsavank monastic complex.



Երիցվան, լուսանկարներ՝ Ա. Հովհաննիսյանի



Արծվանիկ




Ձիու նակատակալ,
Կապան, Եղվար



Սեպագրեր ձիու նակատակալի վրա



Սուրբ ծառ, գ. Արծվանիկ, Սյունիք, 1930, լուսանկարներ՝ Գուրոսի



Կարսի վանքի ավերակները 1926 եւ 1932 թթ., լուսանկարներ՝ Գուրոսի



Կոլտնտեսության պահեստի վերածված
Եկեղեցի



Եկեղեցի Արծվանիկ գյուղում, 1932,
լուսանկար՝ Գուրոսի


Historical and archaeological works note that in Artsuanik there are traces and monuments of the Armenian settlement of the II-I millennia B.C. Ruins of a Urartian fortress, burial grounds, etc. are also preserved. Yeritsavank is mentioned in written sources by Movses of Kalankatu, Stepanos Orbelian, Ghukas of Sebastia and others. The only lithographic record mentioning Yeritsavank was preserved in Vahanavank (1102).


According to the tradition, Yeretsavank (Երեցավանքն) got its name from an Armenian clergyman named Yeritsak (Երիցակ). Perhaps, after the adoption of Christianity the toponym was subjected to folk etymology. The origin of the toponym is related to the pattern Artsui-evan-ik (արծուի-եւան-իք), which by the same folk etymology could become Yerets (Երեւ), and then Yerets vank (Երեւ վանք) monastery.

The first etymological hypothesis is that the toponym derives from the Indo-European root *argʰ-, “shine”, “shine”, “shine”. The toponyms formed at the same time were widespread in the Armenian Highlands (Artsania-Aratsani, Artsn, Artsap, Artsk, Artsashku (Արծանիա-Արաճանի, Արծն, Արծափ, Արծկե, Արծաշքո, etc.).

According to the second hypothesis, the word Yeritsvank (> Artsuanik) (Երիցավանք (> Արծվանիկ)) is related to the root arts (արծ), which is also mentioned in the Odzasar Urartian inscription. It is noted that the root of the name Artsine (Արծիւն) is associated with the Indo-European word arts (արծ), meaning “radiance”, the original meaning of which is “radiance, brightness, light”.

In fact, the Urartian root արծ found in different regions of Armenia, which was given to toponyms, indicates not the name of a particular city, but the name that characterizes the specified place, i.e. what the place, the "country" is known for.





ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԼԻ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ ԴԻՍԱՆԿԱՐԻ ԼԵԶՈՒՆ¹

Քրական դիմանկարի տեսակը համաշխարհային, նաեւ հայ գրականության մէջ ունի ուրոյն դեր եւ հետաքրքիր զարգացում: Սկզբնապէս այն դրսեւորուել է կենսագրական ժանրի միջոցով, որը հայ գրականութեան մէջ ունի վաղեմի պատմութիւն: Բաւական է յիշել, որ հայերէնի գրաւոր շրջանի առաջին գործը՝ Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկը, փաստացի գրական դիմանկար է: Ե. դարից սկսեալ՝ մեր պատմիչների երկերում եւս հանդիպում ենք նշանաւոր անձանց՝ հոգեւորականների, աշխարհականների, պետական, ռազմական գործիչների եւ այլոց արտաքին ու ներքին, սեղմ կամ ծաւալուն նկարագրութիւնների, որոնք եւս կարելի է համարել դիմանկար:

Այս ժանրը հանդէս է եկել սրբախօսական հիմնական տեսակների՝ վարքերի ու վկայաբանութիւնների տեսքով, եւ կայ կարծիք, որ սրանց «ընդերքում են սաղմնաւորուել փոքր ծաւալի գեղարուեստական արձակի ժամանակակից այնպիսի ժանրեր, ինչպիսիք են նորավէպը, պատմութեան մէջ: Անշուշտ, նշուածների շարքում իր առանձնաշատուկ տեղն ունի գրական դիմանկարը: Դիմանկարն անցել է դարերի հոլովոյթով, կրել զանազան փոփոխութիւններ եւ իր մի չափազանց հետաքրքիր ու կարեւոր հանգրուանին է հասել ժԹ.—Թ. դդ. արեւմտահայ գրականութեան մէջ: Ինչպէս նշում է հետազօտողը, «Գրական—քննադատական եւ յուշագրային — կենսագրական դիմանկարների կողքին արեւմտահայոց

¹* Ստացուել է 3.03.2023, գրախօսուել է 7.03.2023: էլ. հասցէ՝ karine.arakelyan.2016@mail.ru:

² Ք. Տէր. ԴԱԹԵԱՆ, Վկայաբանութիւն եւ վարք, «Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», Երեւան, 1984, էջ 38:

մօտ, իբրեւ ինքնուրոյն ժանր, աստիճանաբար ձեւաւորոււմ է գրական դիմանկարի միանգամայն նոր ու անօրինակ տեսակ՝ գրական-գեղարուեստական դիմանկարը»³:

Արեւմտահայ բազմաթիւ գրողներ ու բանաստեղծներ անդրադարձել են այս ժանրին: Մէկը միւսի հետեւից իրենց դիմանկարներն են հրատարակել Գրիգոր Զոհրապը, Օննիկ Զիֆթէ Սարաֆը, Թէոդիկը, Սիպիլը, Տիգրան Արփիարեանը եւ այլք: Գրական դիմանկարների կամ, ինչպէս ինքն է նշել, գրական կենդանագիրների հեղինակ է նաեւ արեւմտահայ ականաւոր քնարերգու Միսաք Մեծարենցը: Նրա կենդանագիրները նուիրուած են Նղիշէ արքեպիսկոպոս Դուրեանին, Գրիգոր Զոհրապին, անտիպ բանաստեղծ Վահրամ Թաթուլին: Մեծարենցը անդրադարձ է կատարում նշուած հեղինակների քնարերգութեանը եւ նշում. «Այս «Դէմքերը» կենդանագրած եմ լոկ բանաստեղծական տեսակէտով»⁴:

Այս ամենից զատ՝ գրական դիմանկարն ունեցաւ մէկ այլ ուղղուածութիւն՝ երգիծականը, իսկ երգիծական դիմանկարն իր կատարելութեանը հասցրին արեւմտահայ ականաւոր գրողներ Յակոբ Պարոնեանը եւ Նրուանդ Օտեանը: Պէտք է նշել, որ երգիծական դիմանկարը եւս հայ գրականութեան մէջ նորութիւն չէր եւ գալիս էր դեռեւս սկզբնական շրջանից: Յիշենք միայն Փաւստոս Բուզանդի՝ «Հայոց պատմութիւն»-ից յայտնի՝ Յովհան Եպիսկոպոսին նուիրուած մանրապատմային դրուագները: Յակոբ Պարոնեանի «Ազգային ջոջերը» եւ Նրուանդ Օտեանի «Մեր երեսփոխանները» եղան այն կոթողային երկերը, որոնց գրական-երգիծական դիմանկարների անկրկնելի նմուշները ցայսօր մնում են չգերազանցուած թէ՛ գաղափարական, թէ՛ գեղագիտական առումներով:

Արեւմտահայ մեծ գրողների, նաեւ երգիծաբանների աւանդները շարունակեցին Սփիւռքի հայ գրագէտները, այդ թւում՝ Ֆրանսահայ անուանի գրող Նշան Պեշիկթաշեանը, որն առաւել յայտնի է իբրեւ երգիծաբան: Ի թիւս բազմաթիւ այլ ստեղծագործութիւնների՝ Ն. Պեշիկթաշեանը նոր շունչ հաղորդեց գրական-երգիծական դիմանկարին, ինչի վառ ապացոյցն են նրա հեղինակած հարիւրից աւելի դիմանկարները, որոնց մէջ իր առանձնայատուկ տեղն ունի անուանի հրապարա-

³ Ա. ՄԱԿԱՐԵԱՆ, Արեւմտահայ գրական դիմանկարը, Երեւան, 2002, էջ 23:

⁴ Մ. ՄԵՏԱՐԵՆՑ, Երկերի լիակատար ժողովածու, Երեւան, 1981, էջ 229:

կախօս, քննադատ, հայ գրական անդաստանի անխոնջ մշակ Արշակ Զօպանեանի դիմանկարը:

Դիմանկարն ինքնատիպ է տարբեր առումներով: Ճնշող մեծամասնութեամբ ծաղրանկարների հերոսները՝ երգիծուող անձինք, արժանանում են հեղինակի քննադատութեանը, յաճախ շատ սուր քննադատութեանը եւ կծու հեզնանքին, մինչդեռ Զօպանեանի դիմանկարում առկայ է հումորային տրամադրութիւն եւ խորին յարգանք ու, ինչու ոչ, հիացմունք հանդէպ այս բազմաբեղուն գործիչը:

Զօպանեանի դիմանկարը մէկն է ամենածաւալուններից եւ աչքի է ընկնում տարբեր արժանիքներով՝ գաղափարական, գեղարուեստական եւ այլն: Դրանցից մէկն էլ ճոխ լեզուն է եւ զարմանալի պատկերաւոր խօսքը, որին խիստ նպաստել են լեզուական ամենատարբեր միջոցների հմուտ կիրառութիւնները, որոնց ուզում ենք անդրադառնալ ստորեւ եւ մասնաւորապէս խօսել պատկերաւորման լեզուական միջոցների մասին, որոնք Արշակ Զօպանեանի դիմանկարում բազմաթիւ հետաքրքիր դրսեւորումներ ունեն:

Պատկերաւորման միջոցներից նախեւառաջ յիշենք չափազանցութիւնը, որը երգիծաբանութեան մէջ առհասարակ յաճախակի կիրառութիւն ունի: Չափազանցութիւնը ենթադրում է գոյների խտացում, մտքի կամ գաղափարի արտայայտում ոչ իրական չափերով, ինչի շնորհիւ երգիծուող երեւոյթն աւելի ցայտուն, տպաւորիչ ու գունեղ է դառնում:

Զպէտք է սակայն եզրակացնել, որ չափազանցութիւնը գոյները խտացնում է միայն բացասական իմաստով եւ խօսքը վերածում կծու հեզնականի: Այն կարող է օգնել արտայայտելու հումորային տրամադրութիւն եւ, ինչու ոչ, խօսքին դրական լիցքեր հաղորդել: Այսպէս է հայ գրական անդաստանի երկու անխոնջ մշակների՝ Արշակ Զօպանեանի եւ Վահան Թէքէեանի դիմանկարներում, որտեղ հեղինակը նաեւ չափազանցութիւնների միջոցով է արտայայտում իր հիացմունքը նշուած անձանց գործունէութեան հանդէպ:

Ընդգծելով հրապարակախօս, քննադատ Արշակ Զօպանեանի անմնացորդ նուիրումը, աշխատասիրութիւնը, ազգասիրութիւնը՝ Պեշիկթաշլեանը գրում է. «Կաշխատի օրական 96 ժամ: Մէկ ժամուան մէջ 240 վայրկեանի գործ կարտադրէ... Զօպանեան գրած ատեն գրիչը կը բռնէ հորիզոնական, արեւմուտքէն արեւելք: Գրիչին կոթը կը նայի Հրոյ Երկիր (Բաթոկոնիա) ու ծայրը՝ Զինումաչին: Մէկ երկու ժամուան մէջ հա-

զար մեթր ժապաւէնով քրոնիկ մը կը գրէ, ընելով աշխարհի շրջանը: Կը գրէ նաեւ ժամական երեսուն-քառասուն նամակ: Կը վարէ տասը ճակատին վրայ ահագին գրչապայքարներ: Եթէ իր բոլոր բանավէճերը հաւաքենք ու վառենք, կրնանք վեց ամիս տաք պահել Սիպերիան»⁵:

Ա. Զօպանեանի՝ Մայր հայրենիքի եւ Սփիւռքի գաղթօջախների կեանքին, գրական եւ մշակութային անցողարձին քաջատեղեակ լինելը, դրանցով ապրելն ու դրանց զարգացման գործին սեփական մեծ լուծման ընծայաբերելը հեղինակն արտայայտում է մի շափազանցութեամբ, որին խիստ միահիւստուած է փոխաբերութիւն. «Աջ ձեռքը դրած է Հայաստանի վրայ, ձախ ձեռքը Միացեալ Նահանգներուն վրայ, աջ ոտքը Սուրիոյ վրայ, ձախ ոտքն ալ Եգիպտոսի վրայ, իսկ գլուխը կը մնայ Փարիզ» (Ծ, 26):

Գեղարուեստական գրականութեան մէջ պատկերաւորման խիստ լայն կիրառութիւն ունեցող միջոց է փոխաբերութիւնը, որը յաճախ է հանդիպում նաեւ երգիծական խօսքում: Ընդգծուել է, որ «փոխաբերութիւնը սահմանում է որպէս թաքնուած համեմատութիւն, որն իրականացում է մի առարկան անուանելով միւսի փոխարէն եւ դրանով ի յայտ բերելով երկրորդին բնորոշ որեւէ էական յատկանիշ»⁶:

Փոխաբերութիւններն ընդունուած է բաժանել երկու հիմնական տեսակի՝ լեզուական եւ խօսքային: Լեզուական փոխաբերութիւններն ընդհանրական բնոյթ ունեն. սրանք ժամանակի ընթացքում խօսքայինից վերաճել են լեզուականի: Խօսքային փոխաբերութիւնները, որոնց երբեմն անուանում են անհատական, ստեղծում են անհատների՝ հիմնականում հեղինակների կողմից եւ խօսքային համապատասխան միջավայրում ծառայում որոշակի նպատակների: Փոխաբերութիւնները կարող են արտայայտուել մէկ բառով, կապակցութեամբ, նախադասութեամբ, երբեմն պարբերութեամբ, մինչեւ իսկ ամբողջական ստեղծագործութեամբ:

Լեզուական փոխաբերութիւն է գլուխ բառը, որը հայրենում ունի բազմաթիւ իմաստներ, այդ թւում՝ խելօք, առաջնորդ փոխաբերական նշանակութիւնները: Այսպիսի փոխաբերական գործածութիւնների հանդիպում ենք Արշակ Զօպանեանի եւ Մխիթարեան հայրերից Ներսէս Ակի-

⁵ Ն. ՊԵՇԿԵՆԵՆԿՆԱՆ, Ծաղրանկարներ, Երեւան, 2009, էջ 25: Այսուհետեւ այս գրքից կատարուող մէջբերումների էջերը կը նշուեն շարադրանքին կից՝ փակագծերի մէջ, Ծ. նշումով:

⁶ С. АРНОЛЬД, Стилистика современного английского языка, Ленинград, 1973, с. 146.

նեանի դիմանկարներում: Զօպանեանի դիմանկարում՝ Արշակի ծննդեան դրուագում բժիշկն աւետում է ծնողներին՝ ասելով. «Ծնաւ գլուխ մը մեր անգլուխ ազգին համար» (Ծ. 22):

Փոխաբերութեան առանձին տեսակ են դարձուածներն ու դարձուածային կապակցութիւնները. «Սրանք երկու եւ աւելի բառերի այնպիսի միութիւններ են, որոնք, ամբողջութեամբ առած, մէկ փոխաբերական իմաստ են արտայայտում»⁷:

Բացի դարձուածներից՝ Պեշիկթաշլեանը փոխաբերութիւններ է ստեղծում հանրաճանաչ խօսքերի, նաեւ անուանի հերոսների նմանողութեամբ: Նկարագրելով Արշակ Զօպանեանի ծնունդը եւ ընդգծելով դրա կարեւորութիւնն ազգային կեանքում՝ հեղինակը դիմում է Մովսէս Խորենացուն՝ Սուրբ Ծննդեան շարականին, որտեղ հրեշտակներն աւետում են Քրիստոսի ծնունդը՝ ասելով. «Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի.

Որդի՛ք մարդկան, օրհնեցե՛ք, զի վասն մեր մարմնացաւ»⁸:

Մէկ տեղանուան փոփոխութեամբ Պեշիկթաշլեանը հումորային երանգ է հաղորդում շարագրանքին եւ գրում. «Ծնաւ նոր արքայ ի Պէշիկթաշ քաղաքի» (Ծ. 22):

Նկարագրելով նոյն Զօպանեանի աշխատասենեակը՝ Պեշիկթաշլեանն այն համեմատում է ճգնարանի հետ, իսկ Զօպանեանին՝ Ալեքսանդր Դիմաշի «Կոմս Մոնտէ-Քրիստօ» վէպի հերոս Աբբա Ֆարիայի, որը բանտի ամենաանբարենպաստ պայմաններում զբաղւում էր գիտութեամբ:

Զօպանեանի գրական դիմանկարին իւրօրինակ ոճական լիցք են հաղորդում կրկնութիւնները՝ աւելի շեշտադրելով ու ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելով իրենց արտայայտած գաղափարի վրայ: Այսպէս է պէտ եւ փռչի արմատների եւ դրանցով բաղադրուած բառերի կրկնութեան դէպքում, ինչպէս, «Այդ շրջանին կըլլայ դպրոցին մէջ դասապետ, եկեղեցիին մէջ դպրապետ, եւ զբօսանքի ժամերուն խմբապետ, պարապետ, խաղապետ... Ամբողջ կեանքին մէջ կըլլայ խմբադրապետ, կուսակցապետ, սեղանապետ, նախագահապետ, ժողովապետ, քերթողապետ, փարիզահայապետ, ատենապետաց ատենապետ եւ կարապետ» (Ծ. 22—24): Կամ՝ «Իր գիրքերու սենեակը կը նմանի «Մայր Հայաստան» պատկերին: Գետին ամէն կողմ փռածածուկ սիւ-

⁷ Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, *Խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ*, գիրք երկրորդ, Երեւան, 1991, էջ 38:

⁸ «Հայ հին եւ միջնադարեան քնարերգութիւն», Երեւան, 1987, էջ 68:

ներ, փոշեծեփ խոյակներ, փոշեգոյն խաչեր, փոշոտ պատուանշաններ, փոշեթաւ թերթեր, փոշեկազմ գիրքեր ու փոշիներ: Ինքը՝ Ոգի Հայաստանի» (Ծ. 27):

Պատկերաւորման լայն տարածում ունեցող միջոց է համեմատութիւնը, որը մեծ կիրառութիւն ունի թէ՛ բանաւոր, թէ՛ գրաւոր խօսքում: Նշան Պեշիկթաշլեանը գրական դիմանկարներում չափազանց յաճախակի է կիրառել համեմատութիւններ: Բաւական է նշել, որ բացի շարադրանքում առկայ համեմատութիւններից՝ բոլոր դիմանկարներն աւարտւում են հերոսի համեմատութեամբ որեւէ անձի, առարկայի կամ երեւոյթի հետ: Այս համեմատութիւնները յաճախ աչքի են ընկնում իրենց ինքնատիպութեամբ, քանի որ դրանց եզրերն առաջին հայեացքից իրար հետ որեւէ առնչութիւն ունենալ չեն կարող: Անսպասելիութիւնը երգիծական բնոյթի ստեղծագործութիւններում շատ էական է եւ կարող է ասելիքը խիստ ծիծաղաշարժ դարձնել: Ինչպէս նշուել է. «Յաջող համեմատութեան կարեւորագոյն յատկանիշներից մէկը անսպասելիութեան, նորոյթի, հնարամտութեան տարրն է: Այդ իսկ պատճառով իւրաքանչիւր հեղինակ չափազանց անհատական է համեմատութիւնների ընտրութեան եւ գործածութեան իմաստով»⁹:

Կան դէպքեր, երբ համեմատելին բնորոշւում է մէկից աւելի, երբեմն բազմաթիւ համեմատեալներով. դա հնարաւորութիւն է տալիս անձին կամ առարկան բազմակողմանիօրէն ու բազմաշերտ ներկայացնելու:

Ինչպէս արդէն նշել ենք, Նշան Պեշիկթաշլեանն իր բոլոր դիմանկարներն աւարտում է համեմատութիւններով, որոնք սովորաբար ծաւալուն են. սրանց միջոցով նա կարծես ամբողջացնում է կտաւը եւ տալիս դրա ամփոփագիրը: Եւ մենք էլ մեր խօսքն աւարտենք Արշակ Զօպանեանի դիմանկարի բաւական ծաւալուն «ամփոփագրից» մէջբերելով հատուածներ. «Կը նմանի Փարիզի սրահներուն, ամեն օր բռնուած է միութեան մը կամ անձի մը կողմէ... Սա պահուս կը կարծուի նաեւ Հիթլէրէն փախած իսրայէլացի իմաստասէր: Կը նմանի նաեւ «Յո երթասի» հերոսներէն Քիլոն Քիլոնիտէսին: Իսկ աստուածաշնչական դէմքերէն կը նմանի դէպի երկինք համբարձող Եղիա մարգարէին (երբ մանաւանդ խօսած պահուն կուղղէ աչքերը անկիւն մը, շեղակի): Ամէնէն աւելի կը նմանի սակայն Յոբ Երանելիին» (Ծ. 27):

⁹ А. Ефимов, Стилистика художественной речи, Москва, 1961, с. 491.

Եթէ փորձենք ամփոփել այս համառօտ քննութիւնը, ապա պիտի փաստենք, որ Արշակ Չօպանեանի գրական դիմանկարը յատկորոշում է տարբեր արժանիքներով, որոնցից մէկն էլ ճոխ լեզուն է եւ զարմանալի պատկերաւոր խօսքը, որին հասնելու համար հեղինակը դիմել է նաեւ լեզուական զանազան պատկերաւորման միջոցների: Ոճական առումով այս միաւորների հնարաւորութիւններն ահռելի են, եւ յաճախ սրանց առկայութեան հետ է կապուած խօսքի արտայայտչականութիւնը, յագեցուածութիւնը, ազդեցիկութիւնը եւ այլն: Այս միաւորների շնորհիւ հեղինակն ամբողջացրել է Արշակ Չօպանեանի դիմանկարը՝ ընթերցողի մէջ առաջացնելով ոչ միայն հումորային տրամադրութիւն, այլեւ խորը հիացմունք հանդէպ իր հերոսը՝ այս հայրենանուէր ու բազմաբեղուն գործիչը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արշակ Չօպանեան, գրական դիմանկար, Նշան Պեշիկթաշլեան, գրական տեսակ, ժանր, սրբախօսութիւն, դիմանկար:

РЕЗЮМЕ

Тип литературного портрета имеет уникальную роль и интересное развитие в мировой и армянской литературе. Он прошёл через века, претерпел различные изменения и достиг чрезвычайно важной и интересной вехи в западноармянской литературе XIX и XX веков, и к этому жанру обращались многие западноармянские писатели и поэты. Помимо всего этого у литературного портрета была и другая направленность: сатирическая, а сатирический портрет был доведён до совершенства великими западноармянскими сатириками Акопом Пароняном и Ервандом Отяном.

Творчество великих западноармянских писателей продолжили армянские писатели диаспоры, в том числе известный французско-армянский писатель Ншан Пешикташлян, больше известный как сатирик. Пешикташлян вдохнул новую жизнь в литературно-сатирический портрет, о чём свидетельствуют созданные им более сотни портретов, среди которых свое особое место имеет портрет Аршака Чопаняна.

Портрет выделяется разными достоинствами: идейными, художественными и т. д. Одним из них является великолепный язык и удивительно образная речь, чему немало способствует обилие лингвистических средств выразительности, их правильное и уместное использование.

SUMMARY

The type of literary portrait has a unique role and interesting development in the Armenian and world literature. It has passed through centuries, undergone various changes and reached an extremely important and interesting milestone in the Western Armenian literature of the 19th—20th centuries, and many Western Armenian writers and poets turned to this genre. Apart from all this, literary portrait had another orientation — the satirical one, and the satirical portrait was brought to perfection by the prominent Western Armenian satirists Hagop Baronian and Yervant Odian.

The works of the great Western Armenian writers were continued by Armenian writers of the Diaspora, including the famous French-Armenian writer Nshan Beshiktashlian, best known as a satirist. Beshiktashlian breathed new life into the literary-satirical portrait, as evidenced by his more than a hundred portraits, among which Arshag Chobanian's portrait has a special place.

Portrait stands out for various merits: ideological, artistic, etc. One of them is the magnificent language and amazingly figurative speech, which is greatly supported by the abundance of linguistic means of imagery, their correct and appropriate use.



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ

ՆՆԱԿԵՒ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2022 թ., Բ. 2023 թ.

Սիրիայի հյուսիսային նակատում

Թեև Թամար քաղաքի հարավային ծայրամաս: Նախկին հիվանդանոցի շենք: Հիմա այստեղ YPG-ի (քրդերեն հնչում է «ԵՊԳ», սիրիական քրդերի ժողովրդական ինքնապաշտպանության ուժեր) մարտիկների դիրքերն ու զորանոցն են: Նախկին հիվանդանոցի պատի երկայնքով մարդահասակ հողաթումբ է: Մարտիկներից Ահմադը բացատրում է, որ թմբի հետեւից ավելի լավ է գլուխը չհանել. դիպուկահարը կարող է խոցել: Հողաթմբի հետեւում նախկին ռեստորանն է՝ միհարկանի բետոնե շինությունը՝ հարթ թիթեղից կառուցված տանիքով: Տանիքը պայթյունից ցրիվ է եկել, պատերին բեկորներից առաջացել են փոսեր: Ահմադն ասում է. «120 միլիմետրանոց ական է հարվածել: Երկու օր առաջ»: Դրանից անդին ավելի քան 200 մետր բաց տարածություն է՝ դաշտ: Դաշտից այն կողմ Թեւ Շամիրամ գյուղն է: Թեւ Շամիրամում «Իսլամական պետության» գրոհայինների դիրքերն են: Գյուղից եւ նրա թիկունքից սեւ ծխի քուլաներ են բարձրանում: «Մեկ ժամ առաջ ամերիկացիները ռմբակոծել են իսլամականներին», — ցույց է տալիս Ահմադը: Այստեղ «ամերիկացիներ» են անվանում ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների միությանը: Այդ երկրները որոնք ավիառումբային հարվածներ են հասցնում ԻՊ վերասկողության տակ գտնվող տարածքներին:

Հարեւան շենքում տեղավորվել է «ասաիշը»՝ ոստիկանության տեղական տարբերակը: Թեւ Շամիրամի կողմից երեւում են բետոնե աղյուսներ, հողաթմբեր: Հաջորդ շենքում ասորի կամավորականներ են տեղակայված: Այս դիրքերից ընդամենը 50 մետր դեպի քաղաքի խորքը հացի փուռն է: Բաշխման պատուհանի մոտ հավաքվել են Թեւ Թամարից չմեկնած սակավաթիվ բնակիչներ՝ շուրջ երկու տասնյակ, ստանում են

հաց, իրար վրա դարսված բարակ կլոր լոշեր: Հագուստից երեւում է, որ արաբներ են:

Թեւ թամարի շրջանում մարտերը սկսվել են փետրվարի վերջին: Այդ պահին քաղաքում ապրում էր մինչեւ 10 հազար մարդ՝ տեղի բնակիչներ եւ փախստականներ: Բնակչությունը խառն է՝ արաբներ, քրդեր եւ ուղղափառ ասորիներ: Թեւ Շամիրամ գյուղը լիովին վերահսկվում էր YPG-ի կողմից: «Իսլամական պետության» տարածքը սկսվում է հարեւան Թեւ Նասրի գյուղից: Փետրվարի 23-ին իսլամիստները գրոհել են Թեւ թամարի եւ մոտակա ասորական գյուղերի վրա, սպանել եւ առեւանգել շուրջ 400 տեղաբնակներ: Այդ ժամանակից ի վեր այստեղ է գտնվում Ռոժավայի սիրիական ինքնավարության ամենից «թեժ կետերից» մեկը՝ Զազիրա երկրամասը՝ նրա ամենամեծ մակերեսն ունեցող եւ ամենաշատ բնակեցված տարածքը:

Զազիրան երկար ժամանակ զերծ էր մնում բուռն մարտական գործողություններից: Թեպետ ԻՊ-ը դեռ 2014-ի ամռանը գրավել էր նրան սահմանակից տարածքներ: Երբեմն փոխհրաձգություններ էին տեղի ունենում Ռաս էլ-Այն քաղաքից արեւմուտք թուրք-սիրիական սահմանին, սակայն շփման գիծը մնում էր նախկինը: Փետրվարի կեսերին իսլամականները հարձակվեցին Զազիրայի հարավ-արեւելքում գտնվող գյուղերի վրա, որտեղ հիմնականում ապրում են ուղղափառ ասորիներ: Սպանվեցին եւ առեւանգվեցին տասնյակ քրիստոնյաներ: Նրանց ճակատագիրը դեռեւս անհայտ է: Ի պատասխան՝ YPG-ն, YPJ-ն (կանանց աշխարհագոր) եւ ասորի աշխարհագորայիները հարձակվեցին արմատականների վերահսկողության տակ գտնվող տարածքի վրա: Նրանց հաջողվեց ազատագրել տեղական չափանիշներով բավականին մեծ Թեւ Համիս քաղաքն ու շրջակա գյուղերը: Դրանից հետո արմատականները հարվածեցին Զազիրային մյուս ուղղությունից՝ հարավ-արեւմուտքից, Թեւ թամարի կողմից: Գրեթե բոլոր բնակիչները հապճեպորեն լքեցին քաղաքը: Ընդ որում, ինչպես պատմում են ինքնապաշտպանության ուժերի մարտիկները, նրանց մի մասը՝ առավելապես ասորիներն ու քրդերը, հեռացան Զազիրայի այլ շրջաններ: Մյուս մասը՝ առավելապես սուննի արաբները, մեկնեցին ԻՊ վերահսկողության տակ գտնվող տարածք:

Քաղաքը դատարկ է: Բազմաթիվ սյուներից կախված են YPG-ի եւ YPJ-ի խորհրդանիշները: Երբեմն փողոցներով, փողի բարձրացնելով, սլանում են ինքնապաշտպանության ուժերի բաց թաքով թեթև

բեռնատարներն (pick-up) ու զրահատեխնիկան: Մոռացված մի հավանաբար թրեւում է լքված տան բակում: Եթե ուշագիւր չնայեք տներին, չնկատեք բեկորներից ու փամփուշտներից առաջացած փոսերը, ապա սա սովորական մերձավորարեւելյան քաղաք է՝ ցածրահարկ շէնքերով: Սակայն քաղաքը դատարկ է: Այն չափից դուրս դատարկ է մերձավորարեւելյան քաղաքի համար: Խանութներն ու արհեստանոցները, որոնք պետք է աղմկեին, ընդունեին ու ճանապարհէին մարդկանց, փակ են, ծածկված են մետաղական շերտավարագույրներով:

Հացի փոխի հաց ստացած արաբներից մեկն անցնում է շարժանիվով. նրա սեւ երկարափեշ խալաթը ծածանվում է քամուց:

Ինքնապաշտպանութեան ուժերի մարտիկները պատմում են, որ սպանված իսլամականների մեջ շատ են «չինացիները»: Նրանք պատկերավոր ցույց են տալիս՝ մատնեքով ձգելով աչքերը մինչեւ շեղանկյուն դռնալը: Սակայն ուսսախոս բժիշկ Հասանը, որն աշխատում է մոտերքում գտնվող Կարմիր մահիկի հիվանդանոցում, ինձ բացատրեց, որ սրանք ուզեցին են, կամ զրոգն են, կամ զազախներ, կամ գուցե թուրքմեններ: Բժիշկ Հասանը սովորել է Մոլդովայում, Մոլդովայի անկախ հանրապետությունում, նա ավելի լավ է զանազանում ազգությունները: Ինքնապաշտպանութեան ուժերի մարտիկները, նրանք, ում հետ ես շփվել եմ, Սիրիայից այն կողմ չեն անցել, ազգաբանություն ունենալով նրանց գիտելիքները շատ աղքատ են: «Ներողություն եմ խնդրում արտահայտություն համար, բայց Միջին Ասիայից է այս ամբողջ աղբը լցվել այստեղ», — ասաց դոկտոր Հասանը: — Դուք կարծում եք՝ արաբեկիչների մեջ շատ են սիրիացիները: Չափազանց քիչ են: Աննշան մասն են: Հիմնականում օտարերկրացիներ են»:

Եւրոպայից մի քանի կամավորներ, որոնք կուվում են YPG-ի կողմից, պատմում են, որ բազմիցս լսել են, թէ ինչպես են իսլամիստները ռադիոէթերում բանակցում անգլերեն: «Սակայն սպանվածները, ում ես տեսել եմ, — ասում է օտարերկրացի կամավորականներից մեկը, — արաբներ են: Ոչ սիրիացի: Չափազանց թխամորթ ու գանգրահեր են սիրիացի լինելու համար: Գուցե Իրաքից, գուցե Սաուդյան Արաբիայից են: Հարավցի արաբներ են: Ամեն դեպքում քուրդ մարտիկներն ավելի շատ սպանվածների են տեսել, քան ես»: Օտարերկրացիները խնդրում են իրենց չլուսանկարել, չհարցնել իրենց ազգությունն ու անունները: «Մեր տանն էլ տականքների պակաս չկա, հասկանում ես», — բացատ-

րում են նրանք: Ասում են, որ իսլամականների մեջ շատ են արհեստավարժները, մարդիկ, որոնք հասկանում են, թե ինչպես գրագետ վարել մարտական գործողությունները:

Ճակատ, որպես այդպիսին, չկա: Գյուղերից մեկը գրավել են ԻՊ զինյալները: Մյուսը՝ ինքնապաշտպանության ուժերը: Երրորդը կարող է նվաճված լինել կամ չլինել մեկ ուրիշի կողմից, դա կպարզի հետախուզությունը: Գյուղերի միջև դատարկ, սփռոցի պես հարթ դաշտեր են:

Թեև Թամարի հյուսիսային ծայրամաս՝ թիկունք: Այստեղ են մոտեցնում T-55 տանկը: Աշտարակի վրա խունացած տառեր են: «ԴԱԻՇ¹-ից ենք խլել», — հպարտանում է Մեհմեդ անունով մարտիկը: Նրա խոսքերով՝ այդ շրջանում արմատականներն ունեն 45–50 միավոր տարբեր տեսակի զրահատեխնիկա: Ինքնապաշտպանական ուժերն էլ «զրահ» ունեն: Ամերիկյան «Համվի», խորհրդային МТЛБ (բազմագործառույթ թեթև զրահապատ փոխադրամիջոց), երկաթե հաստ թիթեղով պատված թրթուրավոր մի սարած (հողաբարձ մեքենա), որին վերելից եռակցված է աշտարակը, աշտարակի վրա՝ ДШК զնդացիրը: Ամենաշատը բաց թաքով թեթև բեռնատարներն են՝ թափքում տեղադրված ДШК-ներով, ինչպես ռուսական բանակում, քրդերը եւս այս զնդացիրն անվանում են «դուշկա»:

Նստած ենք YPG մարտիկների հետ ռազմավար տանկի մոտ եւ թեյ ենք խմում: Նրանք կարծիք են հայտնում, որ իսլամականները հարձակման անցնելիս մեծ չափով թմրանյութեր են օգտագործում: «Գոռում են Ալլահ աքբար» եւ առաջ խոչանում խելապակասի պես», — ասում է Շիլանը: Շիլանը ղեկավարում է 20 հոգանոց ստորաբաժանումը: Նրա բոլոր ենթակաները, բացառությամբ մեկ աղջկա, տարբեր տարիքի տղամարդիկ են: «Բայց եթե իսլամականները տեսնում են, որ իրենց վրա կրակում են կանայք, — շարունակում է Շիլանը, — նրանք սկսում են իրենց ավելի խելամիտ պահել. թաքնվում են, տեղաշարժվում խուսանավելով: Նրանք շատ են վախենում կանանց կողմից սպանվելուց: Չէ՞ որ այդ դեպքում չեն հայտնվի իրենց դրախտում: Եւ կանանց դեմ նրանք ավելի դաժան ու համառ են կռվում, քան տղամարդկանց: Երեւի ուզում են բոլոր կանանց վերացնել, որ հետո հանգիստ մեռնեն՝ կռվելով տղամարդկանց դեմ»:

¹ «Ալ-Դաուլիա ալ-Իսլամիա ֆի էլ-Իրաք ուս ալ-Շամ», արաբական հապավում, որով հատկանշվում է «Իսլամական պետություն» կազմավորումը:

Թուշող ինքնաթիռի գվվոցը անցնում է մեր գլխավերելով: «Ամերիկացիներն են»: Թեև Շամիրամի կողմից հակաօդային կայանք է շամփրում երկինքը: Ի պատասխան՝ իրենց դիրքերից արմատականների ուղղությամբ կրակ են բացում քրդերը: Ինքնաթիռը հեռանում է առանց ուժեղացնելու: Կրակոցները դադարում են: Կրկին լռություն է: «Որքանով են արդյունավետ «ամերիկյան» ուժակոծությունները», — հարցնում եմ: «Դե, նայած երբ», — պատասխանում է Շիլանի ստորաբաժանման մարտիկը: — Մեկ կարգին «բմբւում են» թիրախը, ինչպես այսօր: Ծուխը տեսար, չէ՞: Մեկ էլ վրիպում են, գցում են դաշտի վրա: Բայց ընդհանուր առմամբ բավարար չէ: Քիչ են ուժեղացնում: Ժիշտ է, մենք օդուժ ընդհանրապես չունենք, ուստի ուրախ ենք գոնե ինչ-որ օդային աջակցության համար»: Սիրիական օդուժը եւ ընդհանրապես կառավարական բանակը տեղակայված են Զազիրայի տարածքում: Նրա խոշորագույն քաղաքներում՝ Ղամիշլիում եւ Հասեքում, կան սիրիական բանակի ռազմակայաններ, Ղամիշլիում՝ ռազմաօդային ուժերի բազա: Սակայն կառավարությունը ինքնապաշտպանական ուժերին որեւէ աջակցություն չի ցուցաբերում:

Արմատականների ամենախորամանկ ու ստոր զենքը պայթուցիկներով լցված մեքենաներ վարող մահապարտներն են: Դրանք պետք է ոչնչացվեն հեռավորության վրա: PIII-ն եւ «դուշկան» քրդական եւ ասորական աշխարհագորայինների գլխավոր զենքն են դրանց դեմ:

Արեւը թեքվում է դեպի մայրամուտ: Ինքնապաշտպանական ուժերն իրենց զրահատեխնիկական առաջնագծից քաշում են թիկունք: Ժամանակն է, որ մենք էլ մեկնենք: Զազիրայի վարչական կենտրոն Ամուդա քաղաք տանող մոտակա 25 կմ ավտոճանապարհները ոչ ոք չի վերահսկում: Մթությունից օգտվելով՝ այդ ճանապարհ դուրս գալ կարող են իսլամիստները՝ շրջանցելով Թեւ Թամարը դաշտերով: 25 կիլոմետրից սկսվում են քրդա-արաբական գյուղերը, ճանապարհին կան տեղի աշխարհագորայինների դիտակետեր: Այնտեղ արդեն ավելի անվտանգ է ուղեւորվել մթության մեջ:

Հրաժեշտից առաջ Շիլանն ինձ ասում է. «Լսիր, այս տանկը», — ցույց է տալիս խլված T-55-ը, — շատ հին է: Մենք դեմ չենք լինի, եթե Ռուսաստանը մեզ նոր ինչ-որ բան ուղարկի: Դու այնտեղ Պուտինին կփոխանցե՞ս, լավ»: Մյուս մարտիկները գլխով հավանություն են տալիս:

Ես գրել եմ այս հաղորդումը բառացիորեն երկու ժամում՝ Թեւ Թամարից Ամուդա մեկնելիս: Ռուսաստանում այն ժամանակ չէին էլ հաս-

կանում, թե ինչ է կատարվում Սիրիայում՝ ո՞վ ում կողմից է, ինչո՞ւ, ինչի՞ համար: Ես առաջին ռուս լրագրողն էի, որը մեկնել էր Ռոժավա եւ գրել դրա մասին: Կես տարի անց, երբ ռուսական բանակը մտավ Սիրիա՝ օգնելու Բաշար Ասադի կառավարությանը, Ռուսաստանում հայտնվեցին Սիրիայի հարցով բազմաթիվ «փորձագետներ»՝ երբեք այս երկիր չայցելած, բայց անվերջ դատողություններ անող: Հայտնվեցին նաեւ Ռոժավայի հարցով որոշ «փորձագետներ»: Հիմնական հյուսվածքը վերցնում էին իմ նյութերից, իսկ հղումներ չէին անում:

ԻՊ-ի դեմ պայքարում ամենաարդյունավետ գործիքը դարձան Սիրիայի քրդերն ու նրանց դաշնակիցները: Մեկ ամիս շարունակվող, թեկուզ եւ դանդաղընթաց մարտերից հետո նրանք արմատականներին քշեցին Թեւ Թամարից (նահանջելիս արմատականները պայթեցրին Թեւ Նասրի գյուղում գտնվող Մարիամ Աստվածածնի ուղղափառ եկեղեցին) եւ շարունակեցին քշել նրանց դեպի արեւմուտք եւ հարավ: Քրդերին միացած ասորիները (ի դեպ, ոչ բոլորը միացան նրանց, մի մասն աջակցում էր նախագահ Բաշար Ասադին եւ գործում էր կառավարական բանակի հետ) կազմեցին ասորական ռազմական խորհուրդ: Այն YPG-ի եւ YPJ-ի հետ մասնակցեց Սիրիայի տարածքում ԻՊ ուժերի դեմ ամենածանր մարտերին:

ՄԱՍ 4. ՎԵՐԱԴԱՐՁ

Մոսկուի եւ շրջակայքի ազատագրման գործողության մասին բազմիցս հայտարարվել է Իրաքյան Քուրդիստանի կառավարության եւ Բաղդադի դաշնային կառավարության կողմից. մի քանի անգամ 2015-ին, 2016-ի գարնանը, 2016-ի ամռանը: Վերջապես այն իսկապես սկսվեց 2016-ի հոկտեմբերի 16-ին: Այն դարձավ 21-րդ դարի սկզբից ի վեր ամենալուսաբանված ճակատամարտը:

Ուղիղ եթերում մի քանի հեռուստաալիքներ ցույց էին տալիս, թե ինչպես է Մոսկուի ուղղությամբ շարժվում զրահատեխնիկան, ինչպես են պայթում նրա շրջակայքում հրետանային արկերն ու ավիառումբերը, ինչպես են ժպտացող իրաքցի զինվորները, ռստիկաններն ու քրդական փեշմարգայի մարտիկները «V» նշանը (ինչը տեղացիների պատկերաց-

մամբ նշանակում է ե՛ւ «հաղթանակ», ե՛ւ «ազատություն») ցույց տալով շարժվում դեպի առաջնագիծ:

Երկու շաբաթ անց իրաքցիներն ու փեշմարգան ազատագրեցին Նինվեի հարթավայրի մեծ մասը: Բայց որքան մոտենում էին նրանք Մոսուլին, այնքան ավելի համառ ու անզիջում էր դառնում ծայրահեղականների պաշտպանությունը: Ստորգետնյա անցուղիներ, ականապատված մեքենաներով մահապարտներ («շահիդ-մոբիլներ»), դիպուկահարների արդյունավետ աշխատանք, ԻՊ-ը շատ լավ էր պատրաստվել քաղաքային պատերազմին: Ծայրահեղականներն առանց լուրջ դիմադրության նահանջում էին բաց տարածքներից, բայց քաղաքի շենք-շինությունների մեջ զգալի վնաս էին հասցնում իրաքցիներին ու քրդերին:

Մեկ ամիս անց իրաքցի պաշտոնյաները կտրուկ փոխեցին հռետորաբանությունը եւ հրաժարվեցին Մոսուլը «արագ ու առանց մեծ կորուստների» ազատագրելու իրենց նախկին խոստումներից:

Դեկտեմբերի սկզբին իրաքյան բանակի 9-րդ զրահատանկային զորամիավորումը փորձեց հընթացս ազատել Տիգրիսի վրա գտնվող կամուրջներից մեկը Արեւելյան Մոսուլում: Գրոհայինները տանկիստներին թույլ տվեցին գրավել աս-Սալլամի հիվանդանոցը, իսկ հետո իրենք գրոհեցին. «շահիդ-մոբիլներով» մխրճվեցին զրահատեխնիկայի կուտակման վայրը, ապա գետնուղիներից ներխուժեցին շենք: Այս քառսի մեջ ամերիկյան օդուժը ռմբակոծում էր իրաքցի զինվորականների դիրքերը: Զոհվեցին առնվազն 200 կառավարական զինվոր ու սպա, ավելի քան 1000-ը վիրավորվեցին: Ողջ մնացածները նահանջեցին: Մի քանի ժամ տեւած խեղահեղ մարտում գրոհային խմբից բան չմնաց:

Հունվարի 19-ին իրաքցի գեներալ Աբդուլ Ամիր Ռաշիդ Յարալլան հայտարարեց, որ ամբողջությամբ ազատագրվել է քաղդեական Թեյֆ Քաղաքը (ասորական անվանումը՝ Թեյ Քեպպե)՝ Մոսուլից 10 կմ հյուսիս-արեւելք: Դրա պաշարումը տեւեց գրեթե երեք ամիս: Հունվարի 23-ին կառավարական ուժերն ամբողջությամբ ազատագրեցին Արեւելյան Մոսուլը:

Ամենագոյնի մարտն ուղեկցում էր: Արեւմտյան Մոսուլի գրոհը սկսվեց փետրվարի 19-ին: Այն ձգվեց հինգ ամիս: Մարտի սկզբին, երբ Իրաքի բանակն ու ոստիկանությունը հարավից ներթափանցեցին քաղաքի թաղամասեր, ես հնարավորություն ունեցա անձամբ տեսնելու գրոհը:

Ստորեւ՝ իմ հաղորդումը այդ մասին:

ԻՊ-ի դրոշը կիսանախագահ կոչիկների փոխարեն

Իրաքի դաշնային ոստիկանության թեթև բեռնատարը, որում տեղացի եւ արտասահմանցի 7 լրագրողներ էին տեղավորվել, մտնում է Արեւմտյան Մոսուլի հարավային ծայրամաս: Այդ շրջանը ԻՊ-ի գրոհայիններից ազատագրվել է մոտ երեք շաբաթ առաջ: Այստեղ լիքը զինվորականներ ու ոստիկաններ են, որոնք հանգստանում են: Նրանք նստած են տնեւրից դուրս բերված աթոռներին կամ բազկաթոռներին: Ոմանք նարգիլ են ծխում, մյուսները թեյ են խմում: Քաղաքացիական անձինք փորձում են վերադառնալ իրենց առտնին կյանքին: Արդեն բացվել են մի քանի փոքր խանութներ:

Մինչեւ ճակատային գիծ ուղիղ գծով մոտ երկու կիլոմետր է: Ժամանակ առ ժամանակ լսվում են արկերի եւ ուղղաթիռներից արձակված հրթիռների պայթյուններ: Դեռեւս չազատագրված տարածքներից ծխի խիտ սեւ ամպեր են բարձրանում: Զինվորականների ու քաղաքացիական անձանց վրա դա բոլորովին տպավորություն չի թողնում: Միայն այն լրագրողների դեմքերն են լարվում, որոնք առաջին անգամ են ժամանել Արեւմտյան Մոսուլ: Մնացածը՝ ԻՊ-ի դեմ պատերազմական առօրյան է: Ծայրահեղականների դիպուկահարներն ու «շահիդ-մոբիլները» այստեղից երկու կիլոմետր հեռավորության վրա են, դու նրանցից պաշտպանված ես խիտ կառուցյաներով, նեղ փողոցներով եւ կառավարական ուժերի գրաված բազմաթիվ դիրքերով. կարճ ասած՝ նրանք մտավախություններ չեն առաջացնում:

* * *

Ավերածություններ, այո, կան: Բայց դրանք այնքան համատարած չեն, որքան թվում է, երբ դիտում ես հեռուստատեսային տեսանյութեր եւ ֆոտոռեպորտաժներ Արեւմտյան Մոսուլից: Իհարկե, լրագրողները միտումնավոր շեշտը դնում են ավերածությունների վրա, եւ բոլորովին աննկատ են մնում մարտական գործողություններից չվնասված հսկայական թվով տներն ու շենքերը: Արեւմտյան Մոսուլը նման չէ 1995-ի Գրոզնիին: Կան առանձին տներ՝ վնասված տանիքներով կամ պատերով: Շատ քչերն են, որ հիմնովին ավերված են: Քաղաքի այս հատվածում ավերածությունները համեմատելի են Լուգանսկի ավերածությունների հետ 2014-ի ամռանը, երբ այն պաշարված էր ուկրաինական բանակի կողմից:

Իրաքյան ուժերի՝ փողոցային մարտերի ներկայիս մարտավարությունը բավականին պարզունակ է. այն կրկնօրինակում է ամերիկյան եւ իսրայելական բանակների մարտավարությունը: Յամաքային գրոհային խմբերն առաջ են շարժվում՝ ընթացքում ստուգելով շենքերը, հենց որ թշնամին կրակ է բացում նրանց վրա, կանգ են առնում եւ դիրքավորվում: Գրոհայինների կրակակետերի ուղղությունը սկսում է «աշխատել» օդուժը՝ հարվածային ուղղաթիռներն ու ԱՄՆ-ի եւ Իրաքի ՌՕՈՒ-ի կործանիչները, խփում է հրետանին, մոտենում են «Համվի» զրահամեքենաները եւ խիտ կրակ բացում խոշոր տրամաչափի գնդացիներից: Անհամեմատ քիչ են գործի դրվում տանկերը. Մոսուլում փողոցների մեծ մասը շատ նեղ է, ինչը դժվարացնում է հրասայլերի տեղաշարժը՝ դրանք դարձնելով բավականին հեշտ խոցելի թիրախ ԻՊ գրոհայինների համար: Հակառակորդի կրակակետերը ճնշվելուն պես առաջխաղացումը շարունակվում է:

Սակայն գրոհայիններն արդեն հակաքայլեր են մտածել: Նրանց հաջողվում է զսպել կառավարական ստորաբաժանումների առաջխաղացումը մի քանի ժամ կամ նույնիսկ մի ամբողջ օր բառացիորեն 3–5 մարդու ջանքերով: 2–3 դիպուկահար կրակում են գրոհային խմբերի վրա: Եւ հենց նրանց վրա կրակ են բացում օդուժն ու հրետանին, իսկույն փոխում են դիրքերը: Գրոհային խմբերը սկսում են առաջ շարժվել եւ կրկին հայտնվում են կրակի տակ. ստիպված են լինում կանգ առնել: Գրոհայինները տնից տուն են տեղափոխվում պատերի մեջ բացված ճեղքերով: Դրանք օդից նկատելը չափազանց դժվար է: «Շահիդ-մոբիլների» օգտագործումը մեկ ժամ, երբեմն ավելի երկար ժամանակով խառնաշփոթ է առաջացնում իրաքցիների շրջանում: Մի քանի «շահիդ-մոբիլների»՝ մեկ ժամվա տարբերությամբ պայթյունները կարող են երկար ժամանակով հետաձգել հարձակումը:

Գրոհայինները, ի դեպ, վերջերս կատարելագործել են «շահիդ-մոբիլների» կառուցվածքը. հիմա դրանք փակվում են դրսից, այլ ոչ թե ներսից: Մահապարտ-վարորդին այլ ընտրություն չի մնում՝ միայն շարժվել դեպի թիրախը եւ պայթել, նա այլեւս չի կարող դուրս թռչել մեքենայից: Կա եւս մեկ կատարելագործում: Փողոցներում ազատ տեղաշարժվելու համար նրանք հիմա մեծ սավաններ են ձգում տների տանիքների միջև: Օդային հետախուզության արդյունավետությունն իսկույն նվազում է մի քանի անգամ: Եւս մեկ նորամուծություն՝ գրոհայինները փորձում են

այրել իրենց սպանվածների դիակները կամ այլանդակել նրանց դեմքերը, որպեսզի հնարավոր չլինի նույնականացնել: Ես ինքս այդպիսի չորս դիակ եմ տեսել տների բակերում: Չնայած այն հանգամանքին, որ այդ արմատականները զոհվել էին հրաձգային մարտում, նրանց գլուխները մինչև ոսկոր այրված էին, նման էին սեւախանձ կոճղի: Սակայն մարմիններին եւ հագուստներին այրվածքահետքեր չկային:

* * *

Լրագրողները իջնում են թեթեւ բեռնատարից, որպեսզի շարժվեն առաջնագծի ուղղությամբ. դաշնային ոստիկանության գնդապետը, որը պատասխանատու է Մոսուլում ԶԼՄ-ների աշխատանքի համար, անմիջապես հիշեցնում է. «Ոչ մի լուսանկար եւ հարցազրույց, եթե հանդիպեք ԱՄՆ զինծառայողների»: Իրաքցի զինվորականների եւ ոստիկանների հետ լուսանկարների ու հարցազրույցների սահմանափակումներ չկան: Այլ երկրների ներկայացուցիչների հետ՝ նույնպես: Բայց արդյո՞ք կան, այսպես կոչված, «այլ երկրների ներկայացուցիչներ» առաջնագծի շրջակայքում. միայն շուկաներ են: Մոսուլում ԻՊ գրոհայինների դեմ ցամաքային գործողությունների գլխավորապես ներգրավված են իրաքցիներ եւ ամերիկացիներ: Որոշ գործողություններում ներգրավվում են Իրաքյան Թուրքիստանի զինված ուժերի հատուկ ստորաբաժանումները: Հստակ հանձնարարություն կատարելով՝ քրդերը վերադառնում են իրենց ռազմակայան, առաջնագծում չեն մնում:

Իրաքցի ճարպիկ զինվորականները կարգավորել են իրենց գործերը ամերիկացիների հետ, որոնցից կարելի է չճարվող իրեր ձեռք բերել Իրաքի բանակի կարիքների համար: Օրինակ՝ նոր՝ գերազանց որակի կիսաճտքավոր կոշիկներ: Սերժանտ Ալան անգլախոս է, ուստի նրան հաճախ է վիճակվում միջնորդ լինել նման հարցերում: «Ես եկել եմ Մոսուլ դատարկ ուսապարկով: Հիմա, տե՛ս, արդեն երկու պալուսակ լիքը տարբեր իրեր ունեմ: Բոլորն ամերիկյան են»,— հպարտանում է նա իր փոխանակումային հաջողություններով: Իրաքցիներն ԱՄՆ զինվորների համար կարող են շուկաներից կամ «սեւ շուկայից» գնել այն, ինչ նրանց անհրաժեշտ է: Հետո արդեն սկսվում է սակարկությունը՝ որքան են ամերիկացիները պատրաստ վճարել կամ ինչ կփոխանակեն անհրաժեշտ իրերի հետ: «ԻՊ մեկ դրոշի դիմաց ես մի ամերիկացուց երկու զույգ նոր կիսաճտքավոր կոշիկ եմ ստացել, առաջին բուժօգնության արկ-

ղիկ եւ ահա»,—Ալան ցույց է տալիս հին «Acer» նոութբուքը:—Միայն թե գլխի չեմ ընկնում՝ աշխատում է, թե՞ ոչ»: Ավելի ուշ պարզվեց, որ նոութբուքն իսկապես չի աշխատում, եւ իրաքցի սերժանտը որոշում է մյուս անգամ այն վերադարձնել ամերիկացուն եւ հանդերձանքից որեւէ այլ բան ստանալ:

Մարտի կեսերին ես մեկնեցի Իրաքից: Քաղաքի ազատագրումը շարունակվում էր նույն ընթացքով, ինչ ես նկարագրեցի հոդվածում: Վերջապես հունիսին բանակն ու ոստիկանությունը սկսեցին գրոհել Հին քաղաքը: Հին քաղաքում միջնադարյան մերձավորարեւելյան տիպի կառույցներ են. նեղ անցումներ տների միջեւ, որտեղ զրահատեխնիկան չի անցնի, փողոցները ոլոր-մոլոր են՝ բավիղների պես, խուլ, առանց պատուհանների ու պատերի: Ահա այստեղ ավերածությունների չափը պակաս չէր, քան Ստալինգրադում: Հրետանին եւ օդուժը պարզապես հողին էին հավասարեցրել Հին քաղաքը:

Հուլիսի 10-ին Իրաքի վարչապետ Հայդեր ալ Աբադին հայտարարեց Արեւմտյան Մոսուլի լիակատար ազատագրման մասին: Ճիշտ է, Հին քաղաքում մարտերը դեռ մեկ շաբաթ էլ շարունակվում էին: Օգոստոսին եւ սեպտեմբերին իրաքցի զինվորականներին հաջողվեց գերել ԻՊ գրոհայիններին, որոնք թաքնվում էին քաղաքի հին ստորգետնյա անցումներում: Սեպտեմբերին ոչնչացվեց գրոհայինների մի խումբ, որը թաքնվում էր Մոսուլից ոչ հեռու գտնվող ճահճուտներում:

Սեպտեմբերի վերջին ես վերադարձա Իրաք: Ինչպես արդեն նշել եմ, իմ նպատակը ասորիներն էին եւ Իրաքյան Քուրդիստանի հանրաքվեն:

Հոկտեմբերի սկզբին ես ուղեւորվեցի Բահդիդա, որը գտնվում է Նինվեի հարթավայրի այն հատվածում, որը վերահսկվում էր Բաղդադի դաշնային կառավարության կողմից:

Իրաքի քրիստոնյաները. Ազատագրումից հետո

Եռանուն քաղաք՝ Բահդիդա, Կարակոշ, Համդանիա: Այն համարվում է Իրաքի քրիստոնյաների գլխավոր կենտրոնը: ԻՊ բռնազավթման ժամանակ տեղի եկեղեցիները զինյալներն օգտագործում էին որպես վարժանքների կենտրոններ: Վանքերում պաշտպանական դիրքեր էին ձեւավորում: Ոչ մի տուն չի մնացել, որը այս կամ այն չափով չի տուժել ծայրա-

հեղականներից: Կես տարի առաջ քաղաքը դատարկ էր: Այնտեղ կային միայն զինվորական եւ ոստիկանական մի քանի կետեր:

* * *

Բահրիդա քաղաքի ծայրամասում գտնվող Մար Յուհաննա Մակրթայի ուղղափառ վանքը «Իսլամական պետության» գրոհայիններն օգտագործել են որպես իրենց ռազմակայան: Բլրի տակ, որի վրա գտնվում էին վանքի ամենահին՝ է. դարին վերագրվող շինությունները (զինյալները դրանք նույնպես ոչնչացրել են, ինչպես նվաճված քրիստոնեական սրբավայրերից շատերը), թունելներ են փորվել: Թունելները տանում են դեպի դիտակետեր եւ կրակակետեր: Այսօր կրակակետերը ավերված են: Իրաքի բանակը գրոհել է Բահրիդան 2016 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին՝ Մոսուլի ազատագրման գործողության ամենասկզբում:

Այդուհանդերձ, այսօր էլ թունելներում, այն սենյակներում, որտեղ թաքնվում էին ահաբեկիչները, կարող եք տեսնել ներքնակներ եւ կենցաղային տարբեր իրեր, որոնք նրանք օգտագործում էին: Արմատականների կողմից փորված ստորգետնյա ուղիները ձգվում են չորս կիլոմետր քաղաքի շուրջը: Դրանց մուտքերն այժմ հսկում է ասորական աշխարհագործը «Նինվեի հարթավայրի պաշտպանության ստորաբաժանումը» (աշխարհագորայիններն օգտագործում են անգլերեն հապավումը NPU, Nineveh plain protection units՝ իրենց կազմավորումը անվանելու համար): Բահրիդայից բացի, NPU-ն ապահովում է մոտակա Քարամլես քաղաքի անվտանգությունը, որտեղ բնակվում են առավելապես ասորիներ, որոնք Քաղդեական կաթոլիկ եկեղեցու հավատացյալներ են, եւ Բարտելլա քաղաքի, որը գտնվում է Մոսուլից 10 կմ դեպի արեւելք, այնտեղ եւս բնակչության մեծամասնությունը ուղղափառ եւ կաթոլիկ ասորիներ են:

Գլխավորն այն է, որ դպրոցները նորից գործեն

Բահրիդան քաղաքի ասորական անվանումն է: Այն ունի եւս երկու անվանում՝ արաբական Համդանիա եւ թուրքական Կարակոշ: Այն բանից հետո, երբ Նինվեի հարթավայրին տիրացավ Օսմանյան կայսրությունը, Բահրիդային տրվեց թուրքական անվանումը: 1970-ական թվականներին Իրաքի իշխանությունները, պարտադրողական արաբացման քաղաքա-

կանոնություն վարելով, քաղաքը վերանվանեցին արաբական Բանու Համ-դան ցեղի անունով, որը միջնադարում իշխում էր Մոսուլում: Եւ այսօր թուրքաման կամ քուրդ տաքսու վարորդին բացատրելու համար, թե ուր եք ցանկանում մեկնել, ավելի լավ է գործածել Կարակոշ անվանումը, իսկ արաբ վարորդին՝ Համդանիա:

Բահդիդան Նինվեի հարթավայրի ամենահին բնակավայրերից է, որտեղ ժամանակին գոյություն է ունեցել Ասորեստանի թագավորությունը: Աստվածաշնչում այն հիշատակվում է Ռեսեն (Դասեման) անվանումով: Մովսեսի առաջին գրքի 10-րդ գլխում կա մի հատված՝ «Եւ Նինուէի ու Քաղանի միջեւ գտնուող Դասեմանը (Ռեսեն)... Սա մեծ քաղաք է»²: Մինչեւ 2014-ի ամառ «մեծ քաղաքի» բնակչությունը շուրջ 60 հազար էր:

Նրանց գերակշիռ մասը Սիրիական կաթոլիկ եկեղեցու ծխականներ են: Մեծությունը երկրորդ համայնքը կազմում են Սիրիական ուղղափառ եկեղեցու հետեւորդները: Այս համայնքը զգալիորեն փոքրացել է 2003 թվականին Իրաքի ամերիկյան բռնազավթումից հետո, երբ սկսվել են մոլեռանդ իսլամիստների կողմից քրիստոնյաների հետապնդումները: Զավթումից առաջ ուղղափառ ասորիները քաղաքացիների 30 տոկոսն էին:

NPU-ն Նինվեի հարթավայրի ասորական բնակչության անվտանգությունն ապահովելու գործառույթներ ստանձնել է 2016 թվականի հոկտեմբերից, երբ ավարտվեց հարթավայրի ազատագրումը ԻՊՊ զինյալներից: Կառուցվածքային առումով այն իրաքյան բանակի կազմի մեջ է. աշխարհագրորայիններին ռոճիկ վճարում է Բաղդադի կառավարությունը: Նրա գործունեության շրջանը միայն հարթավայրի այն հատվածն է, որը վերահսկվում է Իրաքի դաշնային կառավարության կողմից: Տարածաշրջանի գրեթե կեսը գտնվում է Իրաքյան Քուրդիստանի ինքնավարության տիրապետության տակ: Քրդերը թույլ չեն տալիս NPU-ին տեղակայվել իրենց տարածքում:

Ասորական աշխարհագրորի հրամանատարն է իրաքյան բանակի գնդապետ Զուլադ Հաբիբը: Տարեց, ժուժկալ մարդ է՝ շատ տխուր աչքերով: Փաստորեն, բացի Բահդիդայի ռազմական իշխանությունից, նա նաեւ քաղաքացիական վարչակազմի ղեկավարի պարտականություններ է կատարում: Թեեւ պաշտոնապես քաղաքացիական վարչակազմ գոյու-

² Նկատի ունի Ծննդոց գրքի 10-րդ գլուխը (Ծննդոց. Ժ. 12):

թյուն ունի, քաղաք վերադարձած բնակիչները իրենց խնդրանքներով ու կարիքներով դիմում են հենց Հաբիբին:

«Մինչեւ 2014-ի օգոստոսին Բահդիդայի գրավումը այստեղ ապրում էր շուրջ 8 հազար ընտանիք: Նրանցից ոմանք քրիստոնյա փախստականներ էին Իրաքի այլ շրջաններից, որոնք ստիպված էին եղել լքել տները իսլամական արմատականների սպառնալիքների պատճառով: Բնակիչները սկսել էին Բահդիդա վերադառնալ այս տարվա հունիսին, երբ Մոսուլում ռազմական գործողությունը գրեթե ավարտվել էր,—պատմում է գնդապետ Հաբիբը:—Այժմ Բահդիդայում ապրում է 2800 ընտանիք: Նրանց տներն արդեն կարողացել ենք ապահովել կենտրոնացված էլեկտրա- եւ ջրամատակարարմամբ: Մեր գլխավոր խնդիրն այժմ դպրոցների վերաբացումն է: Բնակիչներից շատերի համար, ովքեր դեռ չեն վերադարձել, վերադառնալու կարեւոր խթան է, որ նրանք կարողանան այստեղ երեխաներին դպրոց տանել»:

ԻՊ գրոհայինների ներխուժումից առաջ Բահդիդան շատ հարուստ քաղաք էր: Նույնիսկ եթե հենց այնպես զբոսնեք քաղաքում, զննեք նրա տներն ու շենքերը, պարզ կդառնա, որ բնակիչները իրաքյան չափանիշներով բավականին հարուստ են եղել: Երկհարկանի եւ եռահարկ մեծ առանձնատներ (միհարկանիներ գրեթե չկան), բազմահարկ առեւտրի կենտրոններ ու գիշերային ակումբներ, նոր եկեղեցիներ՝ Եւրոպայում այժմ նորաձեւ ուսական կոնստրուկտիվիզմի ոճով: Գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ իր սեփական խանութը: Մինչեւ 2014-ի ամառը՝ մինչեւ ԻՊ զավթարշավը, արաբներն ու քրդերը Մոսուլից հենց Բահդիդա էին այցելում՝ ոգելից խմիչքներ գնելու եւ գիշերային ակումբներ հաճախելու: Արաբները հիմա էլ գալիս են ոգելից խմիչքներ գնելու, բայց նրանց արգելվում է մնալ երեկոյան ժամը 8-ից հետո: Սրանք NPU-ի պահանջներն են՝ անվտանգության ապահովման նպատակով:

Ընդհանուր առմամբ, քաղաքում աստիճանաբար վերականգնվում է առեւտրային գործունեությունը: Արդեն գործում են մի քանի տասնյակ մթերային խանութներ: Կենտրոնական շուկան, թեեւ ծավալներով զիջում է մինչեւ 2014-ի ամռանը եղածին, բայց արդեն բացված է: Մերձավորարեւելյան ցանկացած քաղաքի համար սա կարեւորագույն ցուցանիշներից մեկն է: Շուկան Մերձավոր Արեւելքի ցանկացած բնակավայրի կենդանի սիրտն է: Եթե այն բաբախում է, նշանակում է, որ դրա շուրջը կլինեն բնակիչներ, կլինի աստիճանական բարգավաճում:

«Բոլոր տները թալանվել են ԻՊ գրոհայինների կողմից», — պատմում է քաղաքի բնակիչ 27-ամյա Դավիթը:— Ոչ մեկը չի խուսափել: Այն ամենը, ինչ ահաբեկիչները չեն կարողացել տանել իրենց հետ, այրել են»: Իսկապես, այն տները, որոնց բնակիչները դեռ չեն վերադարձել, մրի մեջ են: Սենյակներում եւ տնտեսական շինություններում այրված իրերի մոխրակույտ է: Գնդապետ Հաբիբի խոսքով՝ քաղաքում ամբողջությամբ ավերվել է 128 շենք: 2400-ը վնասվել են այս կամ այն չափով եւ վերանորոգման կարիք ունեն:

Այն տներից, որտեղ վերջերս հայտնվել են բնակիչները, շարունակ լսվում են կոտորված ապակու շխշխկոց եւ կրամածքի (անգլ. concrete, ռուս. бетон) երեսը քերող բահերի ձայներ: Բնակիչները կարգի են բերում շրջակայքը: Բնակիկենցաղային ծառայություններն արդեն աշխատում են, բայց չեն հասցնում ժամանակին մաքրել ԻՊ բռնազավթումից հետո մնացած բազմաթիվ աղբակույտերը: Դրանք կուտակվում են մայթերին: «Սարսափելի չէ, — մեկնաբանում է Դավիթը:— Դա նշան է այն բանի, որ կյանքը վերականգնվում է: Կամաց-կամաց, քայլ առ քայլ, աղբը ամբողջովին կմաքրվի, իսկ փողոցները երեկոյան կլինեն լուսավոր ու մարդկանցով լի: Ինչպես նախկինում՝ ԻՊ գրավումից առաջ»:

Գնդակահարված տիրամայրեր

Եկեղեցիները, քանի որ դրանք քաղաքի ամենաշքեղ եւ ամենամեծ շենքերն են, զինյալներն օգտագործել էին իրենց կենտրոնակայաններն ու հաստատությունները տեղակայելու համար: Անարատության կաթոլիկ եկեղեցին, որը քաղաքի ամենահին շինություններից էր, դարձրել էին վարժանքի կենտրոն: Մինչեւ հիմա պատերին մնում են արաբերեն մակագրություններ՝ ԻՊ կարգախոսներով եւ ահաբեկչական կազմակերպության՝ ձեռքով նկարված դրոշներ:

Քրիստոնեական պատկերները գրոհայիններն օգտագործել են որպես հրաձգության թիրախներ: Եկեղեցու պատերի մեջ տարբեր տրամաչափի փամփուշտներ են խրվել-մնացել: Կրակել են Տիրամոր արձանի գլխին: Տիրամորը պատկերող ամենամեծ սրբապատկերը եւս գնդակահարված է: Զանգակատունը պայթեցվել է, գմբեթների արտաքին խաչերը կոտորվել են: Սկզբունքային նշանակություն ունեւ գրոհա-

յինների համար գմբեթների եւ տանիքների բոլոր խաչերը տապալելն ու զանգակատները պայթեցնելը:

Մաջդիդ Պետրոսը 30 տարի շարունակ հետեւել է Անարատության եկեղեցու կարգուկանոնին ու մաքրությանը: Հիմա Քրիստոսի կամ Տիրամոր պատկերներով կարպետներ է կախում խոցոտված պատերից: Նա դեռեւս միայնակ է կարգի բերում եկեղեցին, հոգեւորականը դեռ չի վերադարձել: Երբեմն հարեւանն է օգնության շտապում: «Մենք այստեղ դեռ հոգեւոր սպասավորություն չունենք, բայց, ոչինչ, դա էլ կլինի: Կկարգավորենք, ու մարդիկ նորից կաղոթեն մեզ մոտ: Կարեւորը՝ քաղաքն ազատագրվել է ահաբեկիչներից, Մաշալլահ», — ասում է Մաջդիդը: Ռուսաստանցիները սովոր են, որ «Ինշալլահ», «Մաշալլահ», «Օալլահ» արտահայտությունները վերաբերում են բացառապես մահմեդականությանը: Այնուամենայնիվ, Մերձավոր Արեւելքում եւ մահմեդականների, եւ քրիստոնյաների համար Աստծու անունը նույնն է՝ Ալլահ: Հետեւաբար, «Ինշալլահ» (Տա՛ Աստված), «Մաշալլահ» (Փա՛ռք Աստծու) եւ նման արտահայտություններն օգտագործում են թե՛ սրանք, թե՛ մյուսները:

Մար Բեհնամ եւ Սառա եկեղեցին կառուցվել է 2008 թվականին: Նրբաշուք շենք է, որը տեղավորում է մի քանի հարյուր ծխականների: Զանգակատունը արմատականները պայթեցրել են ուղղորդված հարվածով, որպեսզի չվնասեն շենքն ու շրջապատող քարե պարիսպը: Եկեղեցու ներսը տաքացնելու համար զինյալներն օգտագործել են սոբիա վառարաններ (Մերձավոր Արեւելքում օգտագործվող վառարաններ, որ ջեռուցվում են քարյուղով): Այդ պատճառով առաստաղն ու պատերը մրի հաստ շերտով են պատված: Խաչերն ու սրբապատկերները փամփուշտների հետքեր են կրում: Շինությունը, ուր գտնվում էր եկեղեցական կրպակը, զինյալները գոմի են վերածել: Թեեւ NPU աշխարհագորայինները լվացել են այն, գոմաղբի հոտը դեռ չի վերացել:

Այնուամենայնիվ, հունիսից ի վեր հինգ կաթոլիկ եկեղեցիներ վերականգնվել եւ մաքրվել են: Այժմ այնտեղ վերսկսվել են առավոտյան եւ երեկոյան ժամերգությունները: Մար Զինի եկեղեցում երեկոյան ժամերգության են հավաքվում տասնյակ ծխականներ: Հիմնականում՝ կանայք: Եկեղեցու քահանա Յուհաննան իր քարոզներում խոսում է հիմնականում այն մասին, թե ինչպես հաղթահարել հոգեւոր եւ նյութական կորուստները, ձգտում է մարդկանց վարակել լավատեսությանը: Քարոզը տեղի է ունենում ծխականների հարցերի եւ վանահոր

պատասխանների տեսքով: Կոլեկտիվ հոգեթերապիայի յուրօրինակ ցուցադրություն է:

Իսկ ահա Մար Գիվարգիսի ուղղափառ տաճարի դռները նախկինի պես փակ են: Քաղաք է վերադարձել ոչ ավելի, քան 15 ուղղափառ ընտանիք: Բահրիդայում ուղղափառները ամենահարուստներից էին: Նրանք, ովքեր 2003-ից մինչև ԻՊ բռնազավթումը չէին մեկնել Եւրոպա, Ավստրալիա կամ ԱՄՆ, որոշեցին արտագաղթել ԻՊ հաստատումից հետո: Նրանք դրա համար դրամական հնարավորություններ ունեն:

Հարսանիքներ են անում, ուրեմն կյանքը վերականգնվում է

Կիրակի երեկոյան փողոցներում, որտեղ լույսերը կրկին վառվում են, բայց որոշ շենքեր ու եկեղեցիներ դեռ փլատակների մեջ են, ազդանշան տալով եւ լուսարձակները թարթելով, յոթ ամենագնացներ են անցնում: Սա հերթական հարսանիքն է Բահրիդայում: Փեսան՝ Սարմանը, եւ հարսնացուն՝ Իդելը, ծանոթացել էին, երբ քաղաքում դեռ իշխում էին ահաբեկիչները: Սարմանն այդ ժամանակ ապրում էր Իրաքի Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլի Այնքավա քրիստոնեական արվարձանում: Իդելը ծնունդով Ալկոշից է՝ Նինվեի հարթավայրում գտնվող ասորական քաղաքից, որը ԻՊ-ը չկարողացավ գրավել:

«Մենք համեստ ենք նշում: Հարսանիքն էլ տոնում ենք ոչ թե իմ, այլ ազգականիս տանը, — պատմում է փեսայի հայրը՝ Գիվարգիսը: — Իմ տունն այրել են: Այն դեռ պետք է վերականգնել: Բայց պատերը կանգուն են, տանիքն անվնաս է՝ կվերականգնենք»:

Մինչ քաղաքի նվաճումը գրոհայինները, որ արդեն գրավել էին Մոսուլը, զանգահարել էին Գիվարգիսին եւ առաջարկել նրան անվտանգության դիմաց վճարել «ջիզյա»՝ ոչ մահմեդականների տուրք: Նա ընտանիքի հետ հասցրել էր լքել Բահրիդան գինյալների ժամանումից 7 ժամ առաջ:

Պատմությունն այն մասին, թե ինչպես է Իրաքի խոշորագույն քրիստոնեական քաղաքը հայտնվել ԻՊ տիրապետության տակ, շատ առումներով նման է Մոսուլի անկման պատմությանը: Իրաքի բանակն ու ոստիկանությունը Մոսուլը լքել են հաշված ժամերի ընթացքում մինչ այժմ

պաշտոնապես անհայտ պատճառներով: Քաղաքի բնակիչներին իրենց տարհանման մասին զինվորականները չեն տեղեկացրել:

2003-ին ամերիկացիների իրաք մտնելուց հետո Բահդիդայում անվտանգությունն ապահովում էին քրդական ռազմականացված կազմավորումները՝ փեշմարգան: Անհայտ պատճառներով 2014 թվականի օգոստոսի 5-ի երեկոյան ժամը 10-ին փեշմարգան շտապ լքել է քաղաքը: Բայց քանի որ Բահդիդան, այնուամենայնիվ, զգալիորեն փոքր է Մոսուլից, բնակիչներն արագ տեղեկացել են, որ մնացել են առանց պաշտպանության: Սկսել են հապճեպ հեռանալ դեպի էրբիլ: Շատերը հետագայում բնակություն են հաստատել բարեկամների կամ ընկերների տանը Այնքավայում: Մյուսները լքել են իրաքը, որպեսզի այլեւս չվերադառնան:

«Ես այստեղից ոչ մի տեղ չեմ ուզում հեռանալ,—ասում է Գիվարգիսը:—Սա մեր՝ ասորական հողն է: Ես ուզում եմ, որ իմ երեխաներն ու թոռներն էլ ապրեն այստեղ: Հեռանանք այստեղից ու ընդմիջտ դառնանք օտարներ հեռավոր մի երկրում: Ում է դա պետք: Այն բանից հետո, երբ բնակիչները սկսեցին վերադառնալ Բահդիդա, այստեղ առնվազն տասը հարսանիք է տեղի ունեցել: Քանի որ հարսանիք են անում, ուրեմն՝ կյանքը վերականգնվում է»: Որոշ դադարից հետո հավելում է. «Ամեն բան լավ կլինի մեզ մոտ, ինչալլահ»:

Միայն միջազգային վերահսկողությունը կփրկի ասորիներին

Բահդիդայից դեպի էրբիլ ես պետք է հասնեի պատահական փոխադրամիջոցով: Բախտի բան է՝ մեկնումեկը կկանգի: Նստեցի Բահդիդայի բնակիչ Իմադի մեքենան, որը ԱՄՆ քաղաքացիություն էր ստացել 20 տարի առաջ: «ԱՄՆ-ում ես աշխատում եմ, այնտեղ են ծնվել եւ ապրում իմ երեխաները: Բահդիդայում մինչեւ ԻՊ ներխուժումը ապրում էին իմ ծնողները: Հիմա նորից մոտ մեկ ամիս առաջ այստեղ են վերադարձել»,—պատմում է Իմադը, քանի դեռ անցնում ենք իրաքի «Հաշդ աշ-Շաաբի» շիա աշխարհազորայինների, քրդական փեշմարգայի ստուգիչ անցակետերով, Նինվեի հարթավայրի դեռեւս ավերված ու անմարդաբնակ գյուղերի կողքով:

Իմադր 2014 թվականի օգոստոսի 5-ին քաղաքում էր: Նա ծնողների հետ լքել է քաղաքը օգոստոսի 6-ի գիշերը ժամը 2:40-ին: Մեկուկես ժամ անց դատարկ փողոցներ են մտել մի քանի ամենազնացներ ԻՊ զինյալներով: «Հարեւանս որոշեց մնալ: Նա ուներ 15 կով: Չուզեց թողնել դրանց: Գրոհայինները կտրել էին նրա գլուխը», — ասում է Իմադր: Քաղաքում մի քանի հոգի էլ էր մնացել՝ շատ տարեց մարդիկ, որոնց կողքին հարազատներ չէին եղել, որ հանեն քաղաքից: «Հարեւան փողոցում երկու քույր էին ապրում՝ երկուսն էլ 60-նն անց: Նրանց, ի դեպ, զինյալները ձեռք չեն տվել: Նրանց ընդհանրապես ոչինչ չեն արել, նույնիսկ չեն ստիպել կրոնափոխ լինել: Սկզբում ԻՊ արմատականներից շատերը Մոսկվից Բահդիդա էին գալիս պարզապես թալանելու մեր տները: Հետո արդեն որոշեցին, որ քաղաքում պետք է կահավորել իրենց հենակետերն ու վարժանքների կենտրոնները», — հազվագյուտ ականատեսների պատմություններն է վերապատմում ամերիկացի ասորին:

«Ինչ եք կարծում, ասորիները ապագայի հնարավորություն ունեն այստեղ՝ Իրաքում», — հարցնում եմ ես նրան: Նա երկար ու սեւեռուն նայում է ինձ, կարծես թե ես ինչ-որ հիմարություն ասացի: «Ինչ հնարավորություն: Այս խառնաշփոթը Իրաքում երբեք չի ավարտվի», — պատասխանում է Իմադր: — Իմ երեխաները, օրինակ, ասում են Իրաքը: Ես նրանց մի քանի անգամ հրավիրել եմ այցելելու նախնիների տունը, տեսնելու տատիկին ու պապիկին: Բայց նրանք վախենում են այս երկրից, վախենում են նրա մարդկանցից: Նրանք ոչ մի բառ չգիտեն ո՛չ ասորերեն, ո՛չ էլ արաբերեն: Նրանց համար մայրենի լեզուն արդեն անգլերենն է: Ասորիներին եւ Իրաքի մյուս փոքրամասնություններին կփրկեր ինքնավարության ստեղծումը ՄԱԿ-ի, եւրոպական երկրների, ԱՄՆ-ի վերահսկողության ներքո: Միայն միջազգային վերահսկողությունը մեր քաղաքների ու գյուղերի նկատմամբ կփրկի ասորիներին: Բայց դա հնարավոր չէ: Ո՛չ քրդերը, ո՛չ արաբները չեն համաձայնի նման որոշմանը»:


Անցակետերում Իմադր նույնիսկ փաստաթղթեր ցույց չի տալիս: Նա ասում է, որ քրիստոնյա է եւ Համդանիայից (Կարակոշ) ուղեւորվում է էրբիլ: Դա բավական է՝ զինվորականները շարժումներով ցույց են տալիս, որ կարող է շարունակել ճամփան:

Մտորելով ասորիների ապագայի մասին՝ վարորդը հանկարծ ցնցող միտք է ասում: Ցնցող, քանի որ այն ասում է ԱՄՆ քաղաքացին: «Սադամի օրոք հանգիստ էր: Ոչ ոք քեզ չէր նեղում քո հավատքի համար: Ո՛չ պայթյուններ, ո՛չ ահաբեկչական հարձակումներ, ո՛չ իսլամական արմատականներ: Ափսո՛ս, որ Սադամին տապալեցին», — ասում է այն երկրի քաղաքացին, որը 2003 թվականին տապալեց Սադամ Հուսեյնի բռնատիրությունը:

Շարունակությունը հաջորդիվ

Թարգմանությունը ուսերենից՝
բանասիրական գիտ. թեկնածու
ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ





ԱՐԺԵՒՈՐՄԱՆ ՓՈՐՁ

Ղեռեա քրիստոնեության ընդունումից եւ առաջին վարդապետներից սկսած Հայ Եկեղեցու սպասավորները, քաջ գիտակցելով այն ճշմարտությունը, որ հավատի տարածման ու խորացման գործն առավել արդյունաշատ կարող է լինել, եթե զուգորդվում է գիտական եւ աստվածաբանական ուսումնասիրությունների կատարմանը, թարգմանչական գործունեության ծավալմանը, ինչպես նաեւ գրական ստեղծագործություններ հեղինակելուն, իրենց հիմնական կոչմանն ու պաշտոնին զուգահեռ զբաղվել են նաեւ վերոնշյալ աշխատանքներով: Դարերի ավանդույթը շարունակվում է նաեւ այսօր: Մեր ժամանակի եկեղեցական ճանաչված գործիչներից մեկի՝ Հակոբ արք. Գլնճյանի կյանքն ու գործն ասվածի վառ վկայությունն են:

Ավարտելով ծննդավայրի՝ Սիրիայի Քեսապի Ուսումնասիրաց միաջյալ վարժարանը եւ Լիբանանում ստանալով միջնակարգ կրթություն՝ Հակոբ արք. Գլնճյանը 1973 թվականին ընդունվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարան, իսկ 1975 թվականին՝ Ռեգենս-բուրգի համալսարան (Գերմանիա): Ուսումնառությունը զուգընթաց պաշտոնավարում է իբրեւ Գերմանիո հայոց հոգեւոր հովիվ: Արդեն 1984 թվականից Հակոբ արք. Գլնճյանն սկսում է իր ծառայությունը Ուրուգվայի Արեւելյան Հանրապետությունում՝ նախ որպես նոր կազմավորված Հայոց թեմի առաջնորդական տեղապահ, միեւնույն ժամանակ նաեւ տեղի Ներսիսյան դպրոցի տնօրեն, ապա, 1990 թվականից մինչ օրս՝ նույն թեմի առաջնորդ¹:

Հատկանշական է, որ Հակոբ արքեպիսկոպոսը, այն ժամանակ դեռ սարկավազ, իր աշխատանքային գործունեությունն սկսել է հենց «Էջմիածին» հանդեսի խմբագրությունից: Ամենայն հավանականություն

¹ Տե՛ս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայք-էջ (<https://beta.armenianchurch.org/hy/episkopos/19>):

կրոնագիտական եւ հայագիտական այդ կարեւոր ամսագրի խմբագրությունում աշխատելու ժամանակահատվածում ի մոտո շփվելով իրենց զբաղմունքն աստվածաբանությունը դարձրած մարդկանց հետ, աշխատելով, այսպես ասած, գիտական միջավայրում, նրա մեջ սեր է արթնացել դեպի գիտական-աստվածաբանական ասպարեզը: Ահա եւ հստակեցվել է նրա հետաքրքրությունների շրջանակը, եւ նախանշվել արժեպիսկոպոսի հետագա ուղին գիտության աշխարհում:

1998 թվականին իսպաներենով հրատարակված Հայոց Եկեղեցու պատմությունը եւ վարդապետությանը վերաբերող «Հայ Եկեղեցին՝ հավատի եւ հայրենասիրության աղբյուր» (իսպաներեն վերնագիրը՝ «Iglesia Armenia») աշխատությունից² հետո մեկը մյուսի հետեւից գիտությամբ եւ աստվածաբանությամբ հետաքրքրվող ընթերցողի սեղանին են դրվում Հակոբ արք. Գլնճյանի արժեքավոր ուսումնասիրությունները:

Հակոբ արք. Գլնճյանի «Մարտին Լութեր (Մի բարեպաշտ վանականի ըմբոստությունը)» վերտառությամբ գիրքը³, որ հրատարակել է «Հ. Բ. Ը. միության Ալեք Մանուկյան» բարեգործական հիմնադրամը, հայ իրականության մեջ առաջին խոր եւ սպառիչ վերլուծությունն է բողոքականության հիմնադիր Մարտին Լութերի աշխարհայացքի եւ, առհասարակ, վերաբերում է քրիստոնեական Եկեղեցու նոր ուղղության առաջացման հանգամանքների ուսումնասիրությանը: Օգտագործելով մեծավ մասամբ գերմանական աղբյուրները, նաեւ անտես չառնելով հայկական նյութը, Հակոբ Գլնճյանին հաջողվել է «բոլորովին առարկայական եւ անաչառ մոտեցումով» շարադրել նշանավոր բարեկարգչի վարդապետության դրական եւ ուսանելի տեղիները՝ ցուցաբերելով ճշմարիտ հոգեւորական գործչին ու գիտնականին վայելող լայնախոհություն:

Գրքի ունեցած հաջողությամբ է պայմանավորված նրա երկրորդ հրատարակության անհրաժեշտությունը: 2013 թվականին Ուրուգվայում էդուարդո Սեֆերյանի մեկենասությամբ իրականացվում է «Մարտին Լութեր (Մի բարեպաշտ վանականի ըմբոստությունը)» աշխատասիրության

² Տեղեկությունը վերցրել ենք պրոֆ. Անթաուամ Ահարոնյանի «Առաջաբանից» (տե՛ս Հակոբ արք. Գլնճյան, Միրանի ծառ (արձակ եւ չափածո էջեր, թարգմանություններ), Երեւան, 2016, էջ 14):

³ ՅԱՎՈՐ ԵՊՍ. ԳՐԼՆՃԵԱՆ, Մարտին Լութեր. Մի բարեպաշտ վանականի ըմբոստությունը, Մոնտեվիդեո, 1994:

երկրորդ, բարեփոխված տարբերակի հրատարակությունը⁴: Գրքի էջերում զետեղված՝ առաջին հրատարակության առիթով մամուլում հնչած կարծիքների բովանդակությունը հաստատում է վերելում ասվածի ճշմարտացիությունը: Աշխատության համահայկական կարեւորությունն է ընդգծել Համո Պետրոսյանը. «Ամեն հայ ընթերցող քիչ թէ շատ բան մը ունի սորուելու Յակոբ Եպիսկ. Գլնճեանի հատորէն, եւ տարակոյս չունինք՝ ըլլայ սփիւռքի կամ Հայաստանի ընթերցողներուն մօտ, լայն ընդունելութեան պիտի արժանանայ»⁵:

«Մարտին Լութերին» ժամանակագրորեն հաջորդում է «Մեկնություն Արարածոց» հետազոտությունը⁶: Քահանայական եւ Յահվեական պատումների համաձայն շարադրված սույն աշխատանքը փորձ է՝ կրոնափիլիսոփայական նոր հայացքով մեկնաբանելու «Գիրք Ծննդոցի» հանրահայտ գույգ պատումների բովանդակությունը: Մեկնակետ ընդունելով Եղիշե վարդապետի (Ե. դար) հայտնի խոսքը, ըստ որի «Բոլոր շարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից», Հակոբ արք. Գլնճյանն իր այս աշխատանքով հետամուտ է լինում «հայորդիների կրօնական դաստիարակման նուիրական գործին»:

Աշխատությանը գիտական արժեք եւ նշանակություն է հաղորդում, ի թիվս այլ հանգամանքների, նաեւ այն, որ ուսումնասիրողը մեկնությունը գրելիս առաջնորդվել է ինչպես Հայ Եկեղեցու սուրբ հայրերից մեզ հասած բնագրերով, այնպես էլ արեւմտաեւրոպական աստվածաբանական մտքի ձեռքբերումներով: Վերջիններիս մասին ընդարձակ տեղեկատվությունը Գլնճյանին տրամադրել է գերմանացի ճանաչված աստվածաբան Հայնրիխ Գրոսը, որին իր ստացած օգտակար խորհուրդների համար իր երախտագիտությունը չի մոռանում հայտնել հեղինակը «Մեկնություն Արարածոց» գրքի երկրորդ հրատարակության⁷ «Նախաբանի» խոսքում (էջ 13): Գրոսի գնահատմամբ, «Յ. Գլնճեանը պատրաստել է մի բարեխիղճ եւ կուռ մենագրութիւն, որն օժտուած է բացառիկ բանիմացութեամբ եւ կանգնած ժամանակակից սուրբգրային մեկնողական հետազօտութիւնների մակարդակի հաւասար բարձրութեան վրայ...» (էջ 277):

⁴ ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Մարտին Լութեր. Մի բարեպաշտ Վանականի Ըմբոստութիւնը, Երկրորդ հրատարակութիւն (բարեփոխուծ), Մօնտէվիդէօ-Ուրուգվայ, 2013:

⁵ «Նաւասարդ», թիվ 207–209, 1999:

⁶ ՀԱԿՈԲ ԵՊՍ. ԳԼՆՃԵԱՆ, Մեկնություն Արարածոց, Երեւան, 1995:

⁷ ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Մեկնութիւն Արարածոց, Կոհելէթ կամ Գիրք Ժողովողի, Երեւան, 2017: Հետագա հղումները՝ շարադրանքում՝ փակագծերի մեջ համապատասխան էջի նշումով:

«Մեկնություն Արարածոցի» անժխտելի արժանիքներն ու գիտական կարեւորությունն ընդգծել է գրքի տպագրության հովանավորը՝ նշելով, որ «այս հատորն իր արժանի տեղն է ունենալու Աստվածաշնչի համաշխարհային մեկնողական գրականության ոսկե գրապահոցում եւ հղման հիմնավոր աղբյուր է հանդիսանալու հետագա շատ ուսումնասիրողների համար» (էջ 5–6):

Անշուշտ Հակոբ արք. Գլնճյանի աստվածաբանական գործերի շարքում էական տեղ է զբաղեցնում «Կոհեղեթ կամ Գիրք Ժողովողի» վերտառությամբ մեկնությունը⁸: Սողոմոն Թագավորին վերագրվող «Ժողովողի կամ Քարոզողի գրքի» (ամբողջական անվանումը՝ «Դավթի որդու՝ Երուսաղեմի Թագավոր Կոհեղեթի խոսքերը») այս մեկնության «Առաջաբանում» աստվածաբանը գրում է հայ ժողովրդի «հոգեւոր վերազարթոնքի» արդյունքում ստեղծված «նոր ու նպաստավոր պայմանների» հրամայականով գործելու պարտավորության մասին, «մանավանդ առավել պատասխանատվությամբ, աննկուն հավատով, անձանձրույթ ոգով, ինչպես նաեւ ամենայն նվիրվածությամբ» Ս. Գիրքը քարոզելու եւ նրա «անժամանցելի ճշմարտությունները» հանրամատչելի դարձնելու անհրաժեշտության մասին (էջ 5):

«Կոհեղեթը» կարեւորվում է հատկապես նրանով, որ այն հանդիսանում է քրիստոնեական հավատի գաղափարախոսության բարոյաբանական հիմքն ու ատաղձը, Քարոզողի պատգամների էությունը, կարծում ենք, կյանքի մեջ կյանքի իմաստի որոնումն ու բացահայտումն է: Այս առումով «Ժողովողի գիրքը» մինչեւ ժամանակների վերջը կապահպանի այժմեականությունը՝ շարունակելով իր վրա սեւեռել տարբեր քրիստոնյա երկրների աստվածաբանների ուշադրությունը:

Այստեղ հարկ ենք համարում ավելացնել, որ, ինչպես նախորդ գրքերում, այս դեպքում եւս հետազոտողը հավատարիմ է մնում իր դավանած գիտական սկզբունքին՝ տալ աստվածաշնչային նյութի բովանդակության հնարավորինս բազմակողմանի նկարագրությունը, կատարել տրամաբանված վերլուծություններ՝ հանգելով համոզիչ եզրակացությունների:

Ժողովողի գրքի քննվող մեկնությունը շարադրելիս Հակոբ արք. Գլնճյանը հաշվի է առել արեւմտաեւրոպացի կրոնական տեսաբանների

⁸ ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԳԸԼՆՃԵԱՆ, Կոհեղեթ կամ Գիրք Ժողովողի, Մոստեվիդեո-Ուրուգվայ, 2000:

հիմնավորումները: Պակաս կարեւոր չէ այն, որ հետազոտողի վերլուծությունները մշտապես խարսխվում են հայ միջնադարյան եկեղեցական գրականության հարուստ ավանդույթներին. Գլնճյանի ուշադրության կիզակետում են մասնավորապես Ներսես Լամբրոնացին (1153–1198) եւ Գրիգոր Տաթևացին (1346–1410):

Հակոբ սրբազանի «Հավատի եւ բանականության հետքերով»⁹ ժողովածուն՝ նվիրված Մայր Տաճարի հիմնադրման 1700-ամյակին, ամփոփում է հեղինակի տարբեր տարիներին գրած հոդվածները եւ գրախոսությունները՝ հրատարակված «Էջմիածին», «Սիոն», «Առագաստ», «Հասկ» եւ էլի ուրիշ հանդեսների էջերում, ինչպես նաեւ որոշ բնութագրական հատվածներ նախորդ երեք գրքերից: Ժողովածուի վերահրատարակության¹⁰ (ձեռնված Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին) «Երկու խոսքում» հեղինակը հույս է հայտնում, որ սույն հատորը կազմող հոդված-ուսումնասիրությունների «արծարծումը առիթ կ'ընծայի իւրաքանչիւր հաւատացեալի առաւել ճոխացնելու իր գիտելիքները եւ որոշ չափով էլ ապահովելու հոգեւոր ներշնչանք ու փորձառութիւն» (էջ 8): Ինչպես իրավացիորեն նկատում են Գ. Եպս. Սարոյանը եւ Ա. Քալաշյանը, «Օբյեկտիվ հետեւողականությամբ համադրելով հավատի եւ բանականության փոխհարաբերության տարբեր լուծումների բազմաբնույթ եւ չափազանց հետաքրքրական փաստերը՝ հեղինակը հայեցակարգային տեսքով հիմնավորում է «բանապաշտության» ծայրահեղությունները եւ հանգում այն հետեւությանը, որ «բանականության ողջամիտ կիրարկումը տանում է հավատի զորացման», թույլ տալիս հավատն ավելի զորացնել «յստակ բանաձեւումներով», հավատը քարոզել «որպէս լոյս՝ լուսածարաւ հոգիների համար» (էջ 5):

Ամենատարբեր առիթներով Հակոբ արք. Գլնճյանը քրիստոնեական դաստիարակության հիմնախնդիրներին անդրադառնալիս մեծ դեր ու նշանակություն է տալիս հանրամատչելի խոսքի ազդեցությանը: Մատուցվող նյութի ու դրա քննության-մեկնման բովանդակությունից բացի՝ խիստ կարեւոր պահանջ են լեզվի պարզությունը, շարադրանքի հասանելիությունը եւ ճիշտ ոճավորումը: Իր աստվածաբանական եւ մեկնողական երկերը ստեղծելիս Հ. արք. Գլնճյանը առաջնորդվել է նույն հավատամբ-

⁹ ՀԱՎՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃՅԱՆ, Հավատի եւ բանականության հետքերով, Երեւան, 2003

¹⁰ ՅԱՎՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃՅԱՆ, Հավատի եւ բանականության հետքերով, Երեւան, 2014: Նույն գրքից մյուս մեջբերումները՝ հոդվածում:

համոզմունքով: Ուշագրավ է, որ սրբազանի գրությունն հենց այս առանձնահատկության մասին են, խոսքերն ասես մեկ արած, գրել «Մարտին Լութերի» առաջին հրատարակության գրախոսները. «...Այս գիրքը հաճելի ոճ եւ լեզու ունի, դիւրութեամբ կը կարդացուի» (Ռոպէր Հատտէճեան (Կ. Պոլիս), «Մարմարա» օրաթերթ, 3 սեպտեմբեր, 1996), «...Շարագրանքը գրուած է անթերի հայերէնով. այն կարդացում է սահուն ոճով...» (Նուպար Տէր-Միքայէլեան (Երեւան), «Մարմարա» օրաթերթ, 3 սեպտեմբեր, 1996), «Հեղինակի խորաթափանց եւ բազմակողմանի մեկնաբանութիւնները մատուցուած են դիւրմբունքի լեզուով, հրապուրիչ ու պարզ ոճով, իսկ նրա նկարագրած դէպքերը, Մարտին Լութերի կեանքի դրուագները պատմուած են վիպասանի հմտութեամբ...» (Յովհաննէս Պոտուքեան (Մօստեփիդէօ), «Մասիս» շաբաթաթերթ, 14 Յունուար, 1995)¹¹:

Այստեղ մեր նպատակագրումից դուրս է ավելի մանրակրկիտ անդրադառնալ Հակոբ արք. Գլնճյանի աստվածաբանական աշխատանքներին. դրանք բոլորն էլ իրենց ժամանակին բավարար չափով եւ որակով վերլուծությունների են ենթարկվել, արժանացել հայ եւ օտարազգի մասնագետների դրվատական գնահատականներին: Նրա աշխատություններից շատերը դասագրքային արժեք ունեն եւ կարող են հավակնել գործածվելու որպէս ուսումնական ձեռնարկներ աստվածաբանական դասընթացներ իրացնող հաստատություններում: Այսպէս, «Հավատի եւ բանականության հետքերով» (2014) հատորը, ինչպէս հիմնավորել են գիրքը հրատարակության երաշխավորելու վերաբերյալ կարծիքի հեղինակները, «Թեմատիկ նյութի կառուցվածքով, առաջադրված լուծումներով, գիտատեսական արժեքով եւ փաստական հագեցվածությամբ... կարող է ուսումնական օժանդակ ձեռնարկ ծառայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագույն հոգեւոր կրթական հաստատությունների համար»¹²: Նույնը կարելի է ասել Հ. արք. Գլնճյանի «Մարտին Լութեր»¹³ մենագրության մասին նույնպէս, որի «հետեւողական լուծումները եւ եզրակացությունները կարող են օգտագործվել ոչ միայն տեսական եւ պատմական աստվածաբանության, այլեւ պատմագիտության եւ մշակութաբանության շրջանակներում տեսական մոտեցումներ մշակելու գործում: Դրանք կա-

¹¹ ՅԱՎՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Մարտին Լութեր. Մի բարեպաշտ Վանականի Ըմբոստութիւնը, Երկրորդ հրատարակութիւն (բարեփոխուծ), Մօստէփիդէօ-Ուրուգվայ, 2013, էջ 4:

¹² ՅԱՎՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Հավատի եւ բանականութեան հետքերով, Երեւան, 2014, էջ 6:

¹³ ՅԱՎՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Մարտին Լութեր. Մի բարեպաշտ Վանականի Ըմբոստութիւնը, Երեւան, 2015:

րող են կիրառական կարեւոր նշանակություն ունենալ հոգեւոր կրթական համակարգի համապատասխան դասընթացներում»,— գրում է Ա. եպս. Ժամկոչյանը (էջ 16): Դիտելի է, որ վերոնշյալ երկու մեջբերումների հեղինակները կրթական գործի կազմակերպիչներ են, հանգամանք, որ լրացուցիչ կշիռ է տալիս նրանց եզրահանգումներին:

Մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հակոբ արք. Գլնճյանի գեղարվեստական հակումները: Թեեւ պատկերավոր մտածողությունը, գրական որոշակի ձիրքը, գրողական լեզուն եւ ոճը, ինչպես վերելում նշել ենք, աչք են զարնում նրա «մաքուր» գիտական բնույթի աշխատանքներում, գրական-գեղարվեստական ստեղծագործություններում ընթերցողի առջեւ նոր կողմերից է բացահայտվում սրբազանի տաղանդը: 2016 թվականին Կանադահայոց թեմի հրապարակած «Տէր, լույս իմ եւ կյանք իմ» խորագիրը կրող գրքի¹⁴ քերթվածներում հեղինակի համար բանաստեղծական ներշնչանքի անսպառ աղբյուր է Ս. Գրոց Մատյանը՝ աստվածային Սիրո, Բարու եւ Լույսի կենարար ակունքներով: Մյուս կողմից՝ բանաստեղծի գրչին ներհատուկ է Չարի իշխանության եւ «ապազգային հրեշների» տիրապետության դեմ սրբազան ընդվզումը: Թիկունքին ամուր կրելով հայ միջնադարյան քնարերգության ավանդները, հաճախ օգտագործելով նաեւ աշուղական արվեստի հնարներ, մեկ այլ դեպքում նոր իմաստ հաղորդելով հայոց հին առասպելաբանության դրվագներին, բանաստեղծը գրում է տողեր, որոնք միգուցե այսօր առավել, քան երբեւէ ձեռք են բերում արդիական հնչողություն.

Հին կարգերն ընկան դրսի ննշումով
Ջրի երես ելան տակամփները:
Երեկվա վախկոտ աղվեսներն հիմա
Առյուծ են դարձել, խելփի աշեցեփ:
Նրանք են այսօր հարգանք վայելում,
Որոնք չգիտեն՝ ինչ է հայրենիք,
Օջախ եւ պատիվ, գիր ու մշակույթ
(«Հին կարգերն ընկան», էջ 57):

Կամ՝

...Վա՛յ մեզ, վա՛յ մեր երկրին ու ազգին,
Երբ թագավորը ազնվագարմ չէ,

¹⁴ ՀԱԿՈՐ ԱՐՔ. ԳԼՆՃՅԱՆ, Տէր, լույս իմ եւ կյանք իմ, Երեւան, 2016: Այս գրքին հղումները՝ շարադրանքում:

Այլ դրածոն է պիղծ վիշապների...
 Այդ գաղտնածածուկ վիշապներն այսօր
 Նորից են գալիս, գործում խավարում,
 Խաղաղամեղով տեղը բռնելու
 Մեք արժանավոր հայորդիների,
 Եւ կամ բազմելու Հայոց գահերին,
 Մինչ մենք քնած ենք եւ կամ անտարբեր
 («Վիշապագումք», էջ 114):

Այս եւ էլի ուրիշ ոտանավորների որոշ իմաստով պարզ բանատողերը բնութագրվում են գաղափարական հարուստ բովանդակությամբ:

«Իր հանձն առած Խաչին հավատարիմ եւ Ոգու դրոշը գալիքին պարզած՝ նա (Հակոբ արք. Գլնճյանը,— Ա. Ս.) ասպետական խիզախությամբ ծառանում է շարության ու անարդարության դեմ, որ անընկեր հոգիները շթեւատվեն, սիրակարոտ սրտերը մխիթարվեն, աշխատանքն աղոթք դառնա, Պատկերն Աստուծու անխաթար մնա»,— իր բացման խոսքում գրում է Աբգար եպս. Հովակիմյանը (էջ 5):

Նույն թվականին լույս տեսած «Ծիրանի ծառ»¹⁵ ժողովածուն չափաժող էջերից զատ ընդգրկում է հեղինակի արձակ գրվածքներն ու թարգմանական գործերը: «Անվերնագիր» վերտառությամբ նախաբանում Արտակ Ոսկանյանը մանրակրկիտ վերլուծության է ենթարկում Հակոբ արք. Գլնճյանի մի շարք բանաստեղծություններ՝ դրանք դիտարկելով աստվածաշնչյան փիլիսոփայության եւ կրոնական մտածողության հետ փոխկապակցության մեջ: Իսկ հաջորդող «Առաջաբանում» Անթառամ Ահարոնյանը, ներկայացնելով հեղինակի արձակից մի քանի նմուշներ, գրում է իր տպավորությունների մասին եւ հընթացս արժեւորում արձակագիր Գլնճյանին:

Մեր համոզմամբ Հ. արք. Գլնճյանն իբրեւ գեղարվեստագետ հաջողել է առավելաբար հուշագրական տեսակին պատկանող գործերում: Եւ սա ամենեւին այն դեպքը չէ, որը բանավոր ձեւակերպել է Համո Սահյանը՝ մանկության մասին հնարավոր չէ անհետաքրքիր գրել¹⁶: Հեղինակի գրական շնորհը հիրավի փայլում է հուշագրական գրեթե բոլոր պատումներում: Եւ դա կարելի է պնդել ոչ միայն մանկության ու պատանեկության

¹⁵ ՀԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃՅԱՆ, Ծիրանի ծառ (արձակ եւ չափածո էջեր, թարգմանություններ), Երեւան, 2016, էջ:

¹⁶ ՏԵՄ Լ. ՄԿՐՏԵՅԱՆ, Զրույցներ բանաստեղծի հետ, Երեւան, 1984, էջ 124:

տարիների վերապրումների գրական արտահայտությունների վերաբերմամբ: Այդ գրվածքներն իրենց հուզական ներքին լիցքերով խոր ներգործություն են ունենում ընթերցողի հոգում:

Գրքում ամփոփված հուշագրական երկերում գրողի վարպետ գրչի ուժով շնչավորվում են հայրենի եզերքն ու նրա բնաշխարհը, կենդանանում են անցյալի դեմքերն ու դեպքերը: Առանձնակի հուզմունքով ու շթուլացող հետաքրքրությամբ են ընթերցվում հուշագրի ընտանիքին եւ հարազատներին, դպրոցական եւ ճեմարանային տարիներին վերաբերող հուշապատումները, ինչպես նաեւ իր կյանքի ճանապարհին՝ տարբեր ժամանակներում հանդիպած նշանավոր կամ աննշան մարդկանց մասին հուշերը կամ ակնարկները:

«Ծիրանի ծառ» ժողովածուի երրորդ բաժնում գետեղված են Հակոբ արք. Գլնճյանի՝ տարբեր տարիներին ամենատարբեր առիթներով կատարված թարգմանությունները: Թարգմանվող հեղինակների միայն անունների թվարկումը (Ֆրիդրիխ Շիլլեր, Ջորջ Բայրոն, Վիկտոր Հյուգո Օսկար Ուալդ, Ջիբրան Խալիլ Ջիբրան, Հերման Հեսսե եւ այլն) լավագույնս պատկերացում է տալիս թարգմանչի գրական նախասիրությունների ու ճաշակի մասին: Աստվածաբանական բնագրերի եւ դասական գեղարվեստական գրականության նմուշների թարգմանությունների կողքին ընթերցողը կգտնի գերմանալեզու մեծանուն գրող Ֆրանց Վերֆելի «Մեղավորը ոչ թե սպանողն է, այլ սպանվածը» (1920) վեպի մի հատվածի եւ «Կատարել եմ մի լավ գործ» վերնագրով բանաստեղծության թարգմանությունները: Վերջինս ավարտվում է հետեւյալ տողերով.

Կատարել եմ մի լավ գործ:

Ուրախությամբ եմ լցված

եւ հաճությամբ անսահման,

ես այլեւս մեճակ չեմ,

Ո՛չ, այլեւս մեճակ չեմ:

Ուրեմն հրճվի՛ր, ո՛վ իմ սիրտ (էջ 535):

Լավ եւ բարի գործեր «հեղինակելը» անանձնական ուրախությամբ է համակում Վերֆելի քնարական հերոսի էությունը, հոգին պարուրում է անեզր բերկրությամբ, հեռու է վանում միայնության զգացումները, հրճվանք պարգեւում սրտին:

Համոզված կարող ենք ասել, որ համանման զգացողություններ է ապրել Հակոբ, արք. Գլնճյանը, երբ վերջերս, ավարտին հասցնելով նույն Ֆրանց Վերֆելի «Երեմիա» վեպի թարգմանությունը, վայր է դրել գրիչը:

Հակոբ արք. Գլնճյանի՝ առաջժամ վերջին կոթողային աշխատանքը հրեական արմատներով ավստրիացի հռչակավոր արձակագիր, թատերգակ եւ բանաստեղծ Ֆրանց Վերֆելի (1890–1945) «Երեմիա. լսե՛ք ձայնը» վեպի թարգմանությունն է, որ կատարվել է գերմաներեն բնագրից: Վեպը հրատարակվել է 1937 թվականին, իսկ թարգմանությունն արված է 1965 թվականի՝ ամբողջական համարվող հրատարակությունից¹⁷: Գիրքը, որ 2022 թվականին լույս է ընծայվել Գրիգոր Մովսիսյանի եւ Նաիրա Կարապետյանի մեկենասությամբ, «երախտագիտությամբ» նվիրված է «Ֆրանց Վերֆելի լուսավոր եւ անանց հիշատակին»¹⁸:

Հավանաբար Վերֆելի նշանավոր «Մուսա լեռան քառասուն օրը» (1934) վեպի շոնդալից հաջողությունը, նրա ընդունելությունը հատկապես Եւրոպայի հականացիստական դիրքորոշում որդեգրող հասարակության շրջանակներում, ինչպես նաեւ սփյուռքահայության մեջ եւ Հայաստանում, վեպի՝ տարիներ ի վեր շարունակվող հռչակը հայ իրականության մեջ, մի տեսակ, ստվերում են թողել «Երեմիա. լսե՛ք ձայնը» վեպը, որին վիճակված չէր ունենալու «Մուսա լեռան» ճանաչումը: Գրողի մասին կենսագրական գրականության մեջ շատ դեպքերում անգամ չի հաղորդվում «Երեմիային» վերաբերող որեւէ տվյալ: Այլեւս չենք խոսում գրականության պատմությանը վերաբերող աշխատությունների կամ գրականագիտական-վերլուծական ուսումնասիրությունների մասին, որոնցում նույնպես վեպի մասին հիշատակումները հիմնականում իսպառ բացակայում են կամ, լավագույն դեպքում, նշվում են կարճառոտ ականարկի ձեւով: Այնինչ վեպի ընթերցանությունը նոր դիտանկյուններից է երեւան բերում գրողի հանճարը, նոր գույներ է ավելացնում նրա ստեղծագործական ներկայանակին՝ հաստատելով թարգմանչի՝ վեպին տրված «հոյակապ եւ անժամանցելի» բնորոշումները: Այս ամենը հաշվի առնելով հանդերձ, առանց չափազանցության կարելի է ասել, որ ներկա վեպը իր կարեւոր եւ անշփոթելի տեղն ունի ոչ միայն Վերֆելի գրական ժառանգության, այլեւ ամբողջ եւրոպական գրականության պատմության մեջ:

¹⁷ «Franz Werfel, Jeremias, Höret die Stimme» (Fisher Taschenbuch Verlag).

¹⁸ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ, Երեմիա. լսե՛ք ձայնը, Երեւան, 2022: Հետագա հղումները այս վեպին՝ շարադրանքում:

Իբրեւ գրականության մեջ արտահայտչապաշտական ուղղության ներկայացուցիչ, Վերֆելը արդի աշխարհի մարտահրավերներին դիմագրավելու միտումով իր հայացքը հառում է անցյալին: Ինչպես նկատում է Վերֆելի ստեղծագործության ուսումնասիրողը, արտահայտչապաշտության (expressionism) հետեւորդ գրողների շրջանում մեծ հետաքրքրություն էր առաջացնում Հին Արեւելքի ժողովուրդների՝ այդ թվում հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությունը¹⁹: Ահա պատկերման նյութ դարձնելով աստվածաշնչյան ժամանակների մեծ մարգարեի՝ Երեմիայի (Ք. ա. 650—585) կյանքի դրվագները, Վերֆելը նկատի է ունեցել իր ժամանակի ֆաշիստական Գերմանիան: Վեպում առանձնահատուկ կերպով շեշտադրվում է այն գաղափարը, ըստ որի ոչ ոքի տրված չէ կործանել եւ ոչնչացման հասցնել այն ամենը, ինչն Աստված է արարել: Ժողովուրդը, ասում է Տերը (կարգա՝ Երեմիան կամ Վերֆելը.— Ա. Ս.), երես է թեքել ճշմարիտ Աստծուց, շեղվել է նախնիների ավանդներից եւ, անտես առնելով անարատ ջրի ակունքները՝ ծարավը հագեցնում է ջրափոսերից ու ճահիճներից:

Վեպի «Երեմիա» վերնագրին Վերֆելը գրեթե միշտ կցել է «Լսե՛ք ձայնը» վերտառությամբ ենթավերնագիրը, որի ընտրությունը, ինչպես «Թարգմանչի կողմից» անվանվող առաջաբանում պարզաբանում է Հ. արք. Գլնճյանը, պատահական չէ. մեծ գրողը կոչում է մարդկությանը՝ ունկնդիր լինելու Աստծու ձայնին, քանի որ Երեմիա մարգարեի շուրթերով խոսում է ոչ այլ ոք, քան Ինքը՝ Տերը: Թարգմանիչն այս ճշմարտությունը հաստատող օրինակներ է բերում Ս. Գրքից. Աստված Երեմիային է դիմում՝ ասելով. «Մինչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչեւ ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ, մարգարէի ի հեթանոսս եդի զքեզ»²⁰: Ապա Տերը, դիպչելով մարգարեին, պատգամում է. «Ահա ետու զբանս Իմ՝ ի բերան քո...»²¹: Երեմիայի միջոցով Տերը զգուշացնում էր Իսրայելի որդիներին սպառնացող արհավիրքների մասին: Ժողովուրդը պետք է կատարի Աստծու կամքը եւ չզավաճանի Աստծուն, այլպես նրան սպասում են Բաբելոնի լուծն ու ստրկացումը: Երեմիայի ձայնը, սակայն, հնչում է որպես «ձայն բարբառոյ յանապատի»: Ավելին՝ մարգարեն նվաստացում-

¹⁹ Տե՛ս Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հայերեն հրատարակության (Երեւան, 1987) վերջաբանը՝ Մեջի Փիրումովա, «Ֆրանց Վերֆելի եւ նրա վեպի մասին», էջ 894):

²⁰ Երեմիա Ա., 5:

²¹ Երեմիա Ա., 9:

ների, հալածանքների ու կտտանքների է ենթարկվում՝ մեղադրվելով մինչև անգամ լրտեսության մեջ: Աստծու ձայնին ականջալուր չլինելն էլ հենց կործանարար դեր է ունենում Սեդեկիա արքայի եւ Հուդայի երկրի ու նրա ժողովրդի համար: «Նույն վիճակն է նաեւ այսօր,— գրում է թարգմանիչը եւ, ընդգծելով նյութի այժմեականությունը, հավելում է,— Աշխարհն ու մարդկությունը ահասարսուռ կործանումից փրկելու համար պետք է անպայման լսել Աստծու հուսատու եւ կենսապարգեւ ձայնը...» (էջ 11):

Չնայած հայրենակիցների մերժումներին, Երեմիան, հուսախաբ չլինելով, շարունակում է աստվածային ճշմարիտ խոսքի քարոզը: «Այս մարգարեն մի զգայուն մարդ էր,— Երեմիային բնութագրում է վեպի կենտրոնական հերոսներից մեկը,— որն անզիջում կերպով հակառակության մեջ էր իր աշխարհի ու ժամանակի հետ: Նա մի երկյուղած մարդ էր, որին այս երկրում տիրող բացահայտ մոլորություններն ու հզոր տիրակալների գործած ճնշումները չեն կարողացել ընկճել, քանզի նա ուրիշ ոչ ոքի չէր հնազանդվում, բացի Աստծու ձայնից, որը խոսում էր իր մեջ եւ իր հետ...» (էջ 691):

Ամենքին հայտնի փաստ է, որ Երեմիա մարգարեի կերպարը կապվում է հայկական նյութին: Աստվածաշնչյան ծանոթ դրվագում քրիստոնեության մեծ մարգարեն Արարատյան թագավորություններին եւ Ասքանազյան գնդին, որպես ենթադրյալ դաշնակիցների, կոչ է անում միավորվել Հուդայի երկրի ազատության դրոշի ներքո եւ մարտի ելնել ընդհանուր թշնամու՝ Բաբելոնի դեմ. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին. կանգնեցէք զնովաւ նետակալս, եկն եհաա ի վերայ Բաբելոնի խորհուրդ Տեառն. զերիվարք իբրեւ զբազմութիւն մարախոյ»²²: «Այրարատեան» թագավորությունների» պարագայում ամեն ինչ պարզ է, իսկ «Ասքանազեան» անվանումը շատ դեպքերում միջնադարյան մատենագիրների կողմից դիտվել է իբրեւ «Հայոց» անվանը հոմանիշ բառ²³: Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» գրվածքի առաջին նախադասությունն ասվածի վառ ապացույցն է. «ԶԱզքանազեան ազգին եւ զՀայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն...»²⁴: Ավելին՝ երբայցեքերեն Աստվածաշնչում բերված

²² Երեմիա ԾԱ., 27:

²³ ԿՈՐՅՈՒՆ, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը առաջաբանով եւ ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Երեւան, 1979, էջ 57:

²⁴ Տե՛ս «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորին վարդապետէ յաշակերտէ նորին» (Մատենագիրք Հայոց,

հատվածն այսպես է. «զթագաւորութիւնս Արարատայ, Մինույ եւ Ասքենազայ»: Ուսումնասիրողները ենթադրում են, որ «Մինույ» բառը վերաբերում է Ուրարտուի Մենուա է կամ Մինուա արքային, որի «գահակալության ծաղկուն եւ արձանագրություններով ամենահարուստ ժամանակաշրջանը (Ք. ա. 810—786 թթ.) միանգամայն հնարավոր էր դարձրել, որ նրա գահակալությունից մեկ ու կես դար անց, երբ գրվում էր Երեմիա մարգարեի գիրքը (Ք. ա. 627 թ.), Ուրարտու կոչվող Վանի թագավորությունը Մերձավոր Արեւելքում ճանաչվեր ամենաշատ գործնական եւ գրավոր «հետք թողած» գահակալի անվամբ»²⁵: Սակայն, նկատենք, որ մասնավորապես հայ ընթերցողի համար հետաքրքրություն առաջացնող այս դրվագին Վերֆելի վեպում որեւէ անդրադարձ չի եղել:

Նկատի ունենալով «Երեմիա. լսե՛ք ձայնը» վիպասանության կառուցվածքը, այն կարելի է անվանել, գրականության տեսության մեջ ընդունված, «վեպ վեպի մեջ» եզրույթով: Ստեղծագործության առաջին երեք գլուխների եւ «Վերջաբանի» գործողությունները ծավալվում են մեր ժամանակներում: Առաջին գլխում («Զրույցներ Մեռյալ ծովի ափին») պրոֆեսոր Քարթրայթի՝ զրուցակիցներին ուղղված խոսքում, կարծես, նախանշվում է վեպի գործողությունների հետագա ընթացքը. «Գոյություն ունեն վայրեր, որոնք հագեցած են պատմական եղելություններով, դրանք են աշխարհի կենտրոնները: Այնտեղ է կուտակվում... ժամանակագրության եթերային խորհրդավոր պատկերների ամբողջությունը: Այնտեղ անցյալը թափանցում է ներկայի մեջ եւ միավորվում նրա հետ՝ վեր հառնելու անհամբեր պատրաստակամությամբ» (էջ 27): Այդպիսի մի վայր են «Երուսաղեմն ու Աստծու հետ միաձուլված սուրբ երկիրը» (էջ 58): Քլեյթոն Զիվսը, նույն ճամփորդության ընթացքում այցելելով Տնօրինական Ս. տեղերը, ընկնավորության թվացյալ ախտաժամի մեջ, մտովի տեղափոխվում է անցյալ, որտեղ կատարվում են վեպի հիմնական դեպքերն ու իրադարձությունները: Արդեն «Վերջաբանում» մենք տեսնում ենք Քլեյթոն Զիվսի վերափոխումը նրա «բացակայությունից» հետո. ժամանակի հոլովույթում տեղի ունեցած «ճանապարհորդությունը» նրան տվել էր «ինչ-որ նոր, վսեմ եւ հոյակապ բան» (էջ 688): Անցյալի տեսիլքը հոգին լցրել էր ուրախությամբ ու լիությամբ, պարգեւել

Ա. հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 229):

²⁵ Տե՛ս Ռ. ՊԱՊԱՅԱՆ, Հայաստանում քրիստոնության ընդունման հոգեւոր նախադրյալները, www.noravank.am, 8.06.2005:

մի ներշնչանք, որն համակել էր իր ներաշխարհը Աստվածաշնչի «ջանադիր ուսումնասիրության» (էջ 689) արդյունքում: «...Իր սեփական ինքնությունը դարձել էր ավելի քան երբեք կայուն եւ անպարտելի, քանզի առաջին անգամ էր, որ առանց խուսափելու նայել էր իր ամբողջական ճշմարտության աչքերին եւ նրանից ստացել մի այնպիսի վստահություն, որն իրեն օժտում էր անծանոթ ուժերով» (էջ 690):

Խնդրո առարկա ստեղծագործության որոշ հրատարակիչներ այս՝ վեպի հետ առաջին հայացքից առնչություն չունեցող հատվածները կտրել-հանել են հրատարակություններից՝ ամենայն հավանականությամբ հիմք ընդունելով Ալմա Մահլեբի մի պարզաբանումը. «Ֆրանց Վերֆելն ավարտել էր վեպի գրառումը, երբ միտք է հղանում դրա վրա ավելացնել մի պատմողական շարադրանք, որով փորձ էր անելու ներկայացնել վաղ անցյալում տեղի ունեցածը մեր ժամանակի մեջ: Նա իրականացնում է իր մտադրությունը, — շարունակում է Վերֆելի այրին, — բայց շուտով անդրադառնում, որ այն ներդաշնակ չէ ամբողջի հետ, եւ նույնիսկ՝ անտրամաբանական: Երբ նա գիտակցում է այս հանգամանքը, գիրքն արդեն տպագրվել էր» (էջ 12):

Չնայելով այս հանգամանքին, Հ. արք. Գլնճյանը նպատակահարմար է գտել վերը նշված մասերը թարգմանել եւ միացնել վեպի հիմնական շարադրանքին՝ պահպանելով գրողի նախնական մտահղացումը, ինչը շատ կարեւոր է: Դա առավել համոզիչ է դարձրել հեղինակային ասելիքը, ավելի ավարտուն տեսքի բերել վեպը, որից ընթերցողը միայն կարող է շահել: Վեպի ամբողջական տարբերակի հրատարակությանը նախապատվություն տալու հանգամանքը կարեւոր է նաեւ այլ նկատառումներով, ինչպես, օրինակ, Վերֆելի՝ իր սերնդակից կամ հաջորդող ժամանակների գրողների ստեղծագործության վրա թողած գրական ազդեցությունները պարզելու համար ստեղծվող հնարավորություններով: Վերելում հիշատակված «վեպ վեպի մեջ» եզրի սահմաններում տեղավորվող գրական երկի հայտնի օրինակ է Միխայիլ Բուլգակովի «Վարպետը եւ Մարգարիտան» վեպը, որը ինչպես ցույց է տալիս թուղցիկ համեմատությունը, արտաքին կողմերով՝ իր կառուցվածքային բաղադրիչով, ինչպես նաեւ պատկերման նյութով հիշեցնում է «Երեմիա» վեպը: Ավելորդ չենք համարում նշել, որ ռուս գրականության դասականը, ինչպես նշված է համացանցային աղբյուրներում, «Վարպետը եւ Մարգարիտան» վեպի վրա սկսել է աշխատել 1937 թվականից, երբ արդեն հրատարակված էր

Վերֆելի վեպը, իսկ վերջնական տարբերակը Բուլգակովը՝ արդեն գամված անկողնուն, կնոջը թելադրել է 1939 թվականին: Հատկանշական է, որ նույն վեպի աշխատանքներին զուգընթաց Մ. Բուլգակովը գրել է «Իվան Վասիլևիչ» թատերախաղը, որի դիպաշարի հիմքում նույնպես ընկած է ժամանակների տեղափոխության հնարանքը:

«Երեմիա» վեպը ամբողջականորեն հրատարակելու օգտին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ Վերֆելի վեպը բաժանված է երեսուներեք գլխի՝ գումարած «Վերջաբանը», որ չի մտնում այդ երեսուներեքի մեջ, ինքնուրույն բաժին իրենից չի ներկայացնում, քանի որ, ըստ վեպի դիպաշարի, այն շարունակությունն է կազմում երրորդ գլխի, որն էլ ընդմիջվում է վեպի հիմնական մասի շարադրանքով: Դա երեւում է նաեւ երրորդ գլխի եւ վերջաբանի միեւնույն՝ «Տաճարի հրապարակում» անվանված վերնագրից: «Վերջաբանի» վերնագրին ընդամենը ավելացված է «Սկսվում է մի նոր կյանք» վերտառությունը բնաբանը: Վեպի գլուխների թվի համապատասխանեցումը Աստծու Որդու ապրած տարիների թվին արդյո՞ք պատահական զուգահեռություն է, թե՞ հեղինակային ինչ-ինչ թաքնված ակնարկության արտահայտություն²⁶:

«Երեմիա» վեպի թարգմանությունը, Հակոբ արք. Գլնճյանի խոստովանությամբ, երկու տարի տեւողությամբ աշխատանքի արգասիք է: Եւ դա պատահականություն չէ: Թարգմանությունը ծանոթանալիս ուշադիր ընթերցողը կարող է միայն երեւակայել, թե վեպը հայերենի վերածելիս ինչ խոչընդոտների է բախվել թարգմանիչը: Խնդիրն այն է, որ նմանօրինակ գործերի թարգմանությունը, երկու լեզուներին ազատորեն տիրապետելուց զատ, պահանջում է նաեւ Աստվածաշնչի եւ հարակից գրականության գերազանց իմացություն: Այդ դժվարին գործը կարող էր իրականություն դարձնել մի անձ, որի մեջ միավորված են գիտնական-աստվածաբանը եւ հմուտ թարգմանիչը: Հ. արք. Գլնճյանի կատարած թարգմանությունը բոլոր առումներով համապատասխանում է թարգմանչական արվեստին ներկայացվող սահմանված բոլոր պահանջներին, ապահովում է անհրաժեշտ բարձր որակը եւ մակարդակը: Եւ, որ ամենից ավելի կարեւոր է, «Երեմիան» հայերենով հնչում է այնպես, որ երբեմն ընթերցելիս մոռացվում է, որ գործ ունենք թարգմանության հետ: Ասել է թե՛ Ֆրանց Վերֆելի «մշտապես հետաքրքիր արձակը»

²⁶ Հետաքրքիր է, որ Քլեյթոն Զիվսի «նոր կյանքը» սկսվում է, երբ հերոսը հենց երեսուներեք տարեկան էր:

(Թոմաս Մանն) գտել է իր տաղանդավոր թարգմանչին՝ ի դեմս արքեպիսկոպոս Գլնճյանի²⁷:

Հիրավի անշափ շնորհակալ գործ է արել Հակոբ արք. Գլնճյանը՝ հայկական թարգմանական գրականության գանձատուփը հարստացնելով արժեքավոր թարգմանություններ: Այս նախաձեռնությունը հատուցվում է հայ ժողովրդի մեծ բարեկամի անմարելի հիշատակի հանդեպ մեր բոլորի ունեցած պարտքի ու պարտավորության եւս մի կարեւոր մասը:

Բնականաբար, Հակոբ արք. Գլնճյանին ուղղվող երախտիքի ու գովեստի խոսքերից անմասն չէ «մի հոյակապ ու վեհանձն անձնավորություն, օրինակելի քրիստոնյա եւ ազնվագույն բարեկամ» (Գլնճյանի բառերն են) Գրիգոր Մովսիսյանը, մանավանդ որ հենց նա է հանդիսանում «Երեմիա» վեպը թարգմանելու մտահղացման հեղինակը, եւ ինչպես վերը նշեցինք, նաեւ մեկենասը: Գ. Մովսիսյանը նույնպես հովանավորն է Հակոբ արք. Գլնճյանի հեղինակած մի շարք գրքերի. 2014 թվականից սկսած մինչեւ 2017 թվականը բարեպաշտ հովանավորի օժանդակությամբ լույս են տեսել Հակոբ արքեպիսկոպոսի՝ մինչ այդ ընթերցասեր հասարակությանը հայտնի գիտական-աստվածաբանական աշխատանքների, գրական-գեղարվեստական գործերի եւ թարգմանությունների բարեփոխված, ընդարձակված ու համալրված վերահրատարակությունները՝ ամփոփված չորս մեծագիր շքեղաշուք հատորների մեջ: Եկեղեցաշինության եւ հոգեւոր գրականության ու աստվածաբանության ասպարեզում բարեգործական ձեռնարկումներին զուգահեռ Գ. Մովսիսյանը ժամանակ է գտնում զբաղվելու որոշակի գիտական եւ թարգմանական աշխատանքներով: Գ. Մովսիսյանը «Վահագնի ծնունդը կամ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը»²⁸ վերտառությամբ աշխատության մեջ տալիս է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» մեզ ծանոթ բանաստեղծության իր մեկնաբանությունները՝ առասպելի ընկալման ավանդական պատկերացումների փոխարեն առաջադրելով նոր վարկածներ: Մյուս գրքում՝ «Տիրոջ ոտքերի մոտ»²⁹ խորագրով (2013), ներկայացված է հնդկ նշանավոր քարոզիչ Սադհու Սունդար Սինգհի երկի թարգմա-

²⁷ 2022 թվականին Հայաստանի գրողների միության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համատեղ կազմակերպած մրցանակաբաշխությանը Հ. արք. Գլնճյանն արժանացել է «Կանթեղ» գրական մրցանակին՝ «Երեմիա. լսե՛ք ձայնը» վեպի թարգմանության համար:

²⁸ ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ, «Վահագնի ծնունդը կամ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը», Երեւան, 2015:

²⁹ «Տիրոջ ոտքերի մոտ» (Սադհու Սունդար Սինգհի), թարգմ.՝ Գրիգոր Մովսիսյանի, Երեւան, 2013:

նությունը, որ կատարել է Գրիգոր Մովսիսյանը: Նշված գրքերը, ինչպես նաև «Երեմիա» վեպը նկարագարվել է ճանաչված նկարիչ Մայիս Մխիթարյանը: Հատկապես տպավորիչ եւ դիտարժան են «Երեմիայի» նկարագարողումները: Այն քսանչորս գրաֆիկական աշխատանքները, որ տեղ են գտել գրքի էջերում, ներկայացնում են Երեմիայի պատմության ամենից էական դրվագները: Նկարներն արված են բարձր կատարելությունով, պատկերվող դարաշրջանին բնորոշ միջավայրի պահպանումով եւ, ամենակարեւորը, ապրված զգացողությունների արգասիք են: Այն զգացողությունների, որ ապրել է նկարիչը վեպն ուսումնասիրելու ընթացքում:

Երբ փորձում ենք ի մի բերել այն ամենը, ինչը մինչ այժմ արել է Հակոբ արք. Գլնճյանը եւ համապարփակ հայացքի մեջ ընդգրկել սրբազանի վարած կյանքը եւ ստեղծած աստվածաբանական, գիտական աշխատանքները, գրական ստեղծագործությունը, թարգմանական գործերը եւ այլն, ի դեմս Հակոբ արքեպիսկոպոսի տեսանելի է դառնում հայ եկեղեցականի ճշմարիտ մի կերպար՝ «իսկական հաւատացեալ, աստուածավախ, ազգասէր ու նուիրեալ»³⁰:

Մի առիթով Հակոբ արք. Գլնճյանն այսպիսի տողերով է բնորոշել մեր արքեպիսկոպոսներից մեկին. «Սրբազան հայրը, իր հոգեւորականի բարձր գիտակցությամբ եւ մարդկային ազնվագույն արժանիքներով, մի պայծառ դեմք է մեր ունեցած սակավաթիվ մաքրակենցաղ եկեղեցականների շարքում»³¹: Այս խոսքերը իրավամբ կարելի է նույնությամբ վերահասցեագրել իրեն՝ Հակոբ արք. Գլնճյանին:


Այսօր էլ անխոնջ հոգով եւ անձանձիր սրտով աշխատում է գերաշնորհ սրբազան հայրը՝ իր միտքն ու գրիչը ծառայեցնելով հայ ազգի եւ Հայոց Եկեղեցու բարօրությանը, շարունակում է նոր ու կարեւոր աշխատություններով եւ այլ երկերով ճոխացնել հայ աստվածաբանության եւ գրականության անդամատանը՝ բերելով իր ծանրակշիռ նպաստը հայագիտության զարգացմանը եւ քրիստոնեական դաստիարակության ամրապնդման հայրենանվեր ու աստվածահաճո գործին:

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

³⁰ Տե՛ս Ա. ՄԱԳՈՅԵԱՆ, Ա. ՄԱԳՈՅԵԱՆ, Հայ հոգեւորականի կերպարն օտարների նոթերում («Էջմիածին», 2020, ԺԲ., էջ 63):

³¹ ՅԱՎՈՐ ԵՊՍ. ԳԸԼՆՃԵԱՆ, Կոհելեթ կամ Գիրք Ժողովողի, Մոստեփիղեո-Ուրուգվայ, 2000, էջ 5:



ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

(1951–2023)

Մարտի 29-ին կեանքի 72-րդ տարում
ի Տեր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Գէորգեան հոգեւոր ճեմարանի վաստակա-
շատ դասախօս Գէորգ Տեր-Վարդանեանը:
Հանգուցեալը հայրենի գիտութեան ան-
դաստանի բազմավաստակ մշակներից էր,
որ տարիներ շարունակ իր նուիրեալ ծառա-

յութիւնն է բերել Ճեմարանի սաների կրթութեան գործում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գէորգ Տեր-Վարդանեանը ծնուել է 1951 թ. յունուարի 9-ին Տաւուշի
մարզի Ներքին Կարմիրաղբիւր գիւղում:

1968 թ. աւարտել է նոյն գիւղի միջնակարգ դպրոցը:

1968–1973 թթ. ուսանել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի հնագի-
տութեան, աղբիւրագիտութեան եւ ազգագրութեան բաժնում, որն աւար-
տել է պատմաբան-աղբիւրագէտի մասնագիտութեամբ:

1974 թ. աշխատանքի է անցել Մաշտոցեան Մատենադարանում,
1978 թուականից՝ որպէս աւագ գիտաշխատող եւ գլխաւոր աւանդա-
պահ, իսկ 1992 թուականից՝ Զեռագրագիտութեան բաժնի վարիչ եւ
գլխաւոր աւանդապահ:

1995–1998 թթ. զբաղեցրել է Հայաստանի Ազգային գրադարանի
տնօրէնի պաշտօնը:

2016 թ. ստացել է Պատմական գիտութիւնների դոկտորի աստիճան:

Գէորգ Տէր-Վարդանեանը մեծ հեղինակութիւն էր հայ ձեռագրագիտութեան ասպարէզում. հայերէն ձեռագիր մատեանի բազմահմուտ եւ քաջագիտակ մասնագէտ: Բացառիկ է նրա դերը՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» բազմահատորեակի կազմման եւ խմբագրման գործում:

Շուրջ 200 յօդուածների, ուսումնասիրութիւնների եւ մենագրութիւնների հեղինակ է: Մեծ է նաեւ նրա մանկավարժական վաստակը. տարիներ ի վեր դասաւանդել է Երեւանի պետական համալսարանում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում, ինչպէս նաեւ ձեռագրագէտներ է պատրաստել Մաշտոցեան Մատենադարանում:

Միջազգային բազմաթիւ գիտաժողովների մասնակցած լինելու եւ աշխլեզու իր հրապարակումների շնորհիւ Գէորգ Տէր-Վարդանեանը մեծ համբաւ է ձեռք բերել նաեւ միջազգային հայագիտութեան մէջ: Նշանակալի է նաեւ նրա վաստակը արտերկրում հայկական մշակոյթը ներկայացնելու գործում՝ ձեռագրական ցուցահանդէսների կազմակերպման ասպարէզում: Վերջինիս վկայականներից է 2008 թ. Ֆրանսիայի կառավարութեան հրամանագրով «Գրականութեան եւ արուեստների շքանշանով» պարգեւատրուելը՝ 2007-ին՝ Ֆրանսիայում Հայաստանի տարուայ շրջանակներում Մատենադարանի մասնակցութեամբ կայացած ցուցահանդէսների համար:

2010 թուականին Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման ԺԹ, տարեդարձի առթիւ պարգեւատրուել է Մովսէս Խորենացու մեդալով:

2022 թ. մշակոյթի ոլորտում ունեցած զգալի աւանդի, երկարամեայ աշխատանքային գործունէութեան համար եւ թանգարանների միջազգային օրուայ կապակցութեամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարութիւնը Գէորգ Տէր-Վարդանեանին պարգեւատրել է ոսկէ մեդալով:



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю 850-летия смерти Св. Нерсеса Шнорали.	5
---	---

ОФИЦИАЛЬНОЕ

Заявление Верховного духовного совета по поводу 100 дней блокады Бердзорского (Лачинского) коридора	9
Собрание Верховного духовного совета	11
Доклад канцлера Первопрестольного Св. Эчмиадзина АРХИЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА о деятельности Первопрестольного Св. Эчмиадзина в 2022 году, представленный на собрании Верховного духовного совета	14

ПРОПОВЕДИ

Проповедь АРХИЕПИСКОПА ХАЖАКА ПАРСАМЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	26
Проповедь АРХИМАНДРИТА РУБЕНА ЗАРГАРЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	29
Проповедь АРХИЕПИСКОПА ЕЗНИКА ПЕТРОСЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	34

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ДЬЯКОН АРАМАИС АЗИЗЯН — Предания и исторические упоминания об Армянском Святом мире	39
АЛЕКСАНДР МЕНЬ — Истоки религии	51

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- АШХУНДЖ ПОГОСЯН** — Коллекция ковров в музеях Первопрестольного Святого Эчмиадзина (основные типы и их значение в изучении культуры армянского ковроделия) 66
- МГЕР КУМУНЦ** — Монастырский комплекс и поселение Ерицванк—Арцваник провинции Багк исторического Сюника: *этимология топонима* 84

СООБЩЕНИЯ


- КАРИНЕ АРАКЕЛЯН** — Язык портрета Аршака Чопаняна 97
- АЛЕКСАНДР РЫБИН** — Ниневийские христиане. 105

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- АСАТУР САРЬЯН** — Попытка оценки. 125

НЕКРОЛОГИ

- Геворг Тер-Варданян 142



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the 850 th death anniversary of St. Nerses the Graceful.	5
--	---

OFFICIAL

The statement of the Supreme Spiritual Council regarding the 100 th day of blocking the Berdzor (Lachin) corridor	9
Meeting of the Supreme Spiritual Council	11
Report of H.E. ARCHBISHOP ARSHAK KHACHATRYAN , Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin, on the activity of the Mother See of Holy Etchmiadzin in 2022, made during the meeting of the Supreme Spiritual Council . .	14

SERMONS

Sermon delivered by H.E. ARCHBISHOP KHAJAG BARSAMIAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	26
Sermon delivered by ARCHIMANDRITE RUBEN ZARGARYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	29
Sermon delivered by H.E. ARCHBISHOP YEZNIK PETROSYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	34

RELIGIOUS STUDIES

DEACON ARAMAYIS AZIZYAN — Traditions and historical references about the Armenian Holy Myron	39
ALEXANDER MEN — Origins of Religion	51

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- ASHKHUNJ POGHOSYAN** — The rug collection of Holy Etchmiadzin museums
(main types and their importance for the study of the Armenian carpet-making
culture) 66

- MHER KUMUNTS** — Yeritsvank-Artsuanik monastic complex and the settlement
of Bagh in the historical Syunik province: *etymology of the toponym* 84

ESSAYS


- KARINE ARAKELYAN** — The language of Arshag Chobanian's portrait 97
- ALEXANDER RIBIN** — The Christians of Nineveh. 105

LITERARY REVIEW

- ASATUR SARYAN** — Evaluation attempt 125

OBITUARY

- Gevorg Ter-Vardanyan. 142



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

սրբատառ կոնդակը Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի մահուան 850-րդ տարելիցի կապակցությամբ. 5

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Գերագոյն հոգեւոր խորհրդի յայտարարութիւնը Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակման 100-րդ օրուայ վերաբերեալ. 9

Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողով 11

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիւանապետ **ԳԵՐՇ. Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔ.**

ԽԱՉԱՏՐԵԱՆԻ զեկոյցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2022 թ. գործունէութեան վերաբերեալ՝ ներկայացուած Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովում 14

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ քարոզը՝ խոսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 26

Տ. ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՉԱՐԳԱՐԵԱՆԻ քարոզը՝ խոսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 29

Տ. ԵՉՆԻԿ ԱՐՔ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ քարոզը՝ խոսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 34

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԿ. ԱԶԻԶԵԱՆ — Աւանդութիւններ եւ պատմական յիշատակութիւններ Հայոց միւռոնի մասին 39

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՆ — Կրօնի ակունքները 51

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ — Մայր Աթոռի թանգարանների գորգերի հաւաքածուն
(հիմնական տեսակներն ու դրանց նշանակությունը հայոց գորգագործական
մշակույթի ուսումնասիրման համար) 66

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ — Պատմական Սիւնիքի Բաղ գաւառի Երիցվանք-Արծուանիկ
վանական համալիրը եւ բնակավայրը. *տեղանունն ստուգաբանությւն* 84

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ — Արշակ Զօպանեանի դիմանկարի լեզուն 97


ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ — Նինուէի քրիստոնեաները 105

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ — Արժեւորման փորձ 125

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Գէորգ Տէր-Վարդանեան. 142



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազեդեան, Գր. Ճելալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեղորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէճ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 11.05.2023 թ.



ԵԶՄԻԱԾԻՆ
ԵԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ